

# ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՎԱՐՈՐԴԻ ՁԵՌՆԱՐԿ



**Gavin Newsom**, նահանգապետ  
Կալիֆորնիա նահանգ

**David S. Kim**, քարտուղար  
Կալիֆորնիա նահանգի փոխադրումների  
գործակալություն

**Steve Gordon**, Տնօրեն  
Կալիֆորնիա նահանգի Ավտոտրանսպորտի  
դեպարտամենտ



Մույն ձեռնարկը հասանելի է  
[dmv.ca.gov](https://dmv.ca.gov) կայքում:

# Խնայեք ժամանակը

Լրացրեք Ձեր՝ DL կամ ID  
քարտ ստանալու Էլեկտրոնային  
դիմումը օնլայն



Ժամանակը խնայելու համար DMV-ի հաճախորդները կարող են օգտագործել իրենց համակարգիչը, պլանշետը կամ սմարթֆոնը՝ լրացնելու վարորդական իրավունք կամ նույնականացման քարտ (DL/ID) ստանալու Էլեկտրոնային դիմումը օնլայն նախքան DMV գրասենյակ այցելելը:

Հասանելի է հետևյալ 10 լեզուներով՝

- Անգլերեն
- Չինարեն
- Ճապոներեն
- Կորեերեն
- Թայերեն
- Իսպաներեն
- Րիևդի
- Կիմերերեն
- Տագալերեն
- Վիետնամերեն

Իմացեք ավելին [dmv.ca.gov](http://dmv.ca.gov) կայքում



Միքելի կալիֆոռնիացի բարեկամներ,

Ամեն տարի Կալիֆոռնիայի նահանգի տրանսպորտային գործակալության բարտուղարը Կալիֆոռնիայի վարորդի ձեռնարկի վերջին հրատարակության համար գրում է նոր ներածություն: Մինչ բառերը փոխվում են, հիմնական հաղորդագրությունը մնում է նույնը. Այս ձեռնարկը կարող է օգնել ձեզ և յուրաքանչյուրին, ում հետ կիսում եք հանապարհը, ապահով կերպով հասնել իրենց նպատակահետևանքներին:



Այս ուղերձն այսօր հնչում է ժամ ալելի արդիական, բան երբևէ: Բայց դա միակ բանն է, որը չի փոխվել նախորդ տարվա հրատարակության ներածությունը գրելուց ի վեր: 2020 թվականին մենք սկսեցինք պայքարել COVID-19 համաճարակի ֆայֆայչ ազդեցության դեմ: Տեղի ունեցան փոփոխություններ՝ կապված աշխատանքի վայրի, աշխատելու հիմնական օգնության ցուցաբերման կամ դպրոց հաճախելու հետ: Փոխվեց նաև մեր կախվածությունը տրանսպորտային միջոցից:

Բացի այդ, փոխվել է նաև այն, թե ինչպես ենք մենք համագործակցում Կալիֆոռնիայի ավտոմեքենաների վարչության հետ: DMV-ն մեծապես ընդլայնեց իր առցանց ծառայությունները ներառելով բազմաթիվ գործարքներ, որոնք նախկինում պահանջում էին գրասենյակային այց: Տրանսպորտային միջոցի անվանումը վերափոխելուց մինչև առևտրային վարորդական իրավունքի վկայականի երկարաձգումը կամ կրկնօրինակ վարորդական իրավունքի վկայագիր պահանջելը՝ այժմ կարող եք լուծել գրեթե բոլոր DMV խնդիրները ձեր համակարգչի կամ սմարթֆոնի միջոցով: Ես խրախուսում եմ ձեզ այցելել [dmv.ca.gov/online](https://dmv.ca.gov/online) ավելի խմանալու համար:

Մեկ այլ ուժագրավ փոփոխություն՝ այս ձեռնարկից հանվեց տեխնիկական ժարգոնը, և այն դարձրեցինք ավելի ընթերցելի ու ընկալելի: Հուսով եմ՝ այս նորացված տարբերակը ձեզ համար կլինի տեղեկատվական, օգտակար և գործնական:

Խնդրում ենք ղեկին լինել ուժադիր և չմոռանալ հանապարհի համատեղ օգտագործման և հետխոսակցության, հեծանվորդների և սկուտեր վարորդների հետևելու մասին:

Մաղթում ենք ձեզ անվտանգություն և առողջություն:

David S. Kim

Կալիֆոռնիայի

պետական տրանսպորտային գործակալության բարտուղար

# ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

© Copyright, Department of Motor Vehicles 2021

Բոլոր իրավունքները պահպանված են

Այս աշխատանքը պատկանում է ԱՄՆ «Հեղինակային իրավունքի մասին» օրենքով: Այս աշխատանքի հեղինակային իրավունքը պատկանում է DMV-ին: Հեղինակային իրավունքի մասին օրենքով անօրինական է համարում՝

1. Այս ձեռնարկի ցանկացած մասի պատճենի ստեղծումը:
2. Այս ձեռնարկի օրինակների տպումը և դրանք ուրիշներին տալը:
3. Այս ձեռնարկի Ձեր սեփական տարբերակի ստեղծումը:
4. Այս ձեռնարկի հանրային ցուցադրումը:
5. Ձեռնարկի ներկայացնելը (բարձրաձայն ընթերցումը) հասարակության մեջ:

Եթե ունեք հարցեր այն մասին, թե կարող ե՞ք արդյոք ստեղծել այս ձեռնարկի որևէ մասի պատճենը, ապա դիմել հետևյալ հասցեին՝

Department of Motor Vehicles  
Legal Office, MS C128  
PO Box 932382  
Sacramento, CA 94232-3820

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1: Կալիֆոռնիայի վարորդի ձեռնարկի ներածություն .....	1
ԲԱԺԻՆ 2: Կալիֆոռնիայի DMV-ի մասին .....	3
ԲԱԺԻՆ 3: Կալիֆոռնիայի վարորդական իրավունք .....	5
ԲԱԺԻՆ 4: Հրահանգների թույլտվություն և վարորդական իրավունքի ստացում 18 տարեկանից ցածր տարիքում .....	9
ԲԱԺԻՆ 5: Վարորդական իրավունք ստանալը .....	13
ԲԱԺԻՆ 6: Քննության գործընթացը .....	15
ԲԱԺԻՆ 7: Ձեր վարորդական իրավունքի փոփոխումը, փոխարինումը և երկարաձգումը .....	19
ԲԱԺԻՆ 8: Երթևեկության ներածություն .....	21
ԲԱԺԻՆ 9: Ճանապարհներով երթևեկումը .....	27
ԲԱԺԻՆ 10: Ճանապարհային երթևեկության օրենքները և կանոնները .....	47
ԲԱԺԻՆ 11: Անվտանգ երթևեկություն .....	77
ԲԱԺԻՆ 12: Ալկոհոլ և դեղամիջոցներ .....	97
ԲԱԺԻՆ 13: Տրանսպորտային միջոցների գրանցման պահանջները .....	101
ԲԱԺԻՆ 14: Ֆինանսական պատասխանատվություն, ապահովագրության պահանջներ և բախումներ .....	103
ԲԱԺԻՆ 15: Տարեցներ և երթևեկություն .....	105
ԲԱԺԻՆ 16: Բառարան .....	107

## REAL ID -ի համար հայտ ներկայացրե՛ք

Գրասենյակ բերե՛ք հետևյալը՝

- 1 Անձը հաստատող փաստաթուղթ/ծննդյան վկայական (օրինակ՝ բնօրինակ կամ վավերացված ծննդյան վկայական, ԱՄՆ անձնագիր)
- 2 Կալիֆորնիայում բնակության վայրը՝ 2 տարբեր փաստաթուղթ (օրինակ, կամուրջ կամ բջջային հեռախոսի հաշիվ, բանկային ֆայլաձև, վարձակալության պայմանագիր)
- 3 Սոցիալական ապահովության համարը (Բացառությունները կարող են կիրառվել)

Եթե անձը հաստատող փաստաթղթի անունը տարբերվում է ձեր ընթացիկ իրավաբանական անունից, անհրաժեշտ է (են) անունը փոխելու մասին փաստաթուղթ (փաստաթղթեր):



### ՊՆԱՆԱՎՈՐԵՔ ԿԱՅԱՊԵՄ



- Լրացրե՛ք առցանց վարորդական իրավունքը/նույնականացման ֆորտի հայտը
  - Ներբեռնե՛ք Ձեր փաստաթղթերը
  - Տպե՛ք կամ լուսանկարե՛ք Ձեր հաստատման կտրը (կողը ծառայում է որպես ձեր ամրագրում:)
  - Ներկայացրե՛ք հաստատումը եւ փաստաթղթերը Ձեր գրասենյակ այցելելիս
- (Կատարե՛ք համապատասխան վճարումները):

# ԲԱԺԻՆ 1. Կալիֆոռնիայի վարորդի ձեռնարկի ներածություն

Նախքան Կալիֆոռնիայում վարորդական իրավունք ստանալը Դուք պետք է հանձնեք գիտելիքների ստուգման թեստ: Այս թեստը ստուգում է, թե Դուք որքանով եք տիրապետում տրասպորտային միջոցի վարման օրենքներին և դեկի կառավարմանը: Այն ընդգրկում է ամեն ինչ՝ սկսած վարորդական հիմունքներից մինչև հանապարհային երթևեկության կանոններն ու անվտանգ վարելու սովորությունները:

Վարորդի այս ձեռնարկը ստեղծել ենք՝ օգնելու ձեզ պատրաստվել թեստին: Թեստի բոլորը հարցերը կազմված են այս ձեռնարկի հիման վրա:

Ձեռնարկը նաև ունի տեղեկատվական այնպիսի ռեսուրսներ, ինչպիսիք են California DMV-ի վերաբերյալ մանրամասները, ձեր վարորդական վկայականում փոփոխություններ կատարելը և այլն:

## ՆՈՐ ՕՐԵՆՔ

Ուժի մեջ է 2021 թվականի հուլիսի 1-ից  
*AB 47 (Daly, Chaptered by Secretary of State - Ch 603, Stats. 2019)*

Այս օրենքը DMV-ից պահանջում է 36 ամիսների ընթացքում տրանսպորտային միջոց վարելու ժամանակ խոսելու, հաղորդագրություն ուղարկելու կամ ձեռքի անլար հաղորդակցման սարք (բջջային հեռախոս) օգտագործելու վերաբերյալ վարորդական գործի անփութ վարորդի կետը գնահատել որպես երկրորդ դատապարտում:

## ՀՐԱՋԱՐՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն ձեռնարկը «Կալիֆոռնիայի տրանսպորտային օրենսգրքում» (*Vehicle Code, VC*) համառոտ շարադրված օրենքների և դրույթների ամփոփումն է: DMV-ն, իրավապահ մարմինները և դատարանները հետևում են VC-ի ամբողջական, հեզբիտ դրույթներին: Դուք կարող եք կարգալ VC-ն հետևյալ կայքում՝ [leginfo.legislature.ca.gov](http://leginfo.legislature.ca.gov):

Այս ձեռնարկը պարունակում է տեղեկություններ C հիմնական կարգի վարորդական իրավունքի մասին: Այլ կարգերի վարորդական իրավունքի մասին խմանալու համար կարդացե՛ք հետևյալը՝

- Կալիֆոռնիայի առևտրային վարորդի ձեռնարկ (*California Commercial Driver Handbook*)
- Կալիֆոռնիայի մոտոցիկլետների ձեռնարկ (*California Motorcycle Handbook*)
- Հանգստի տրանսպորտային միջոցների և կցորդների ձեռնարկ (*Recreational Vehicles and Trailers Handbook*)
- Շտապ օգնության վարորդի ձեռնարկ (*Ambulance Driver's Handbook*)
- Կալիֆոռնիայի ծնող-անչափահաս ուսուցողական ուղեցույց (*California Parent-Teen Training Guide*)



# Խնայեք ժամանակը առանց **DMV** այցելելու և փորձեք Այս տարբերակներից մեկը

## Առցանց ծառայություններ

- Տրանսպորտային միջոցի գրանցման երկարաձգում
- Վարորդական իրավունքի երկարաձգում
- Վարորդական վկայականի ըկնօրինակում
- Պիտակի կամ գրանցման քարտի փոխարինում
- Իրավական կոչման վերաձևակերպում
- Սեփականության վկայագրի կրկնօրինակում
- Չեկույց ճանապարհատրանսպորտային պատահարի մասին
- Կոմերցիոն վարորդական իրավունքի երկարաձգում

## DMV NOW տերմինալ

- Տրանսպորտային միջոցի գրանցման երկարաձգում
- Վարորդի/տրանսպորտային միջոցի պատմության արձանագրում
- Պիտակի կամ գրանցման քարտի փոխարինում
- Վարորդական վկայականի կրկնօրինակում
- Տրանսպորտային միջոցի գրանցման երականգնման վճարի մուտքագրում



## ԲԱԺԻՆ 2. Կալիֆոռնիայի DMV-ի մասին

DMV-ի առաքելությունն է հպարտորեն ծառայել հասարակությանը՝ տրանսպորտով վարորդական վկայականներ, գրանցելով տրանսպորտային միջոցներ, ապահովելով ինֆորմացիան և կարգավորելով տրանսպորտային միջոցների արդյունաբերությունը՝ ապահովելով հանրային անվտանգությունը:

### DMV ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

#### Առցանց ծառայություններ

- Մեր առցանց ծառայությունների համար այցելեք **dmv.ca.gov/online**:

#### Հեռախոսային ծառայություններ

Նշված ծառայությունների համար գանգահարել 1-800-777-0133 հեռախոսահամարին:

#### Սովորական աշխատանքային ժամերին՝

- Ձեռք բերել վարորդական վկայականի և տրանսպորտային միջոցի գրանցման վերաբերյալ տեղեկություններ, ձևաթղթեր և հրատարակություններ:
- Պայմանավորվել վարորդական ֆննդություն հանձնելու մասին:
- Խոսել DMV-ի ներկայացուցչի հետ կամ նրան խնդրել հետ գանգել:

#### Ավտոմատացված 24/7 ծառայության համար՝

- Երկարացնել տրանսպորտային միջոցի գրանցման ժամկետը:
  - Օգտագործել վհարման ծանուցման վրա նշված ժամկետի երկարաձգման նույնականացման համարը (RIN), եթե առկա է այն: Վհարել վարկային ֆարսով կամ էլեկտրոնային չեկով:
- Պայմանավորվել տեղական գրասենյակ այցելելու մասին:
  - Ձեռքի տակ ունենալ վարորդական վկայականի կամ նույնականացման (ID) ֆարսի համարը, տրանսպորտային միջոցի համարանիշը և (կամ) տրանսպորտային միջոցի նույնականացման համարը (VIN):

#### Տերմինալային ծառայություններ

- Տերմինալների տեղերն իմանալու համար այցելեք **dmv.ca.gov** և որոնեք «kiosks»:

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԺԱՄԵՐ

Մոտակա DMV-ի գրասենյակի աշխատանքի ժամերն ու սպասարկման տարբերակները գտնելու համար այցելեք **dmv.ca.gov** կամ զանգահարեք 1-800-777-0133: Որոշ դաշտային գրասենյակներ կարող են ունենալ երկարացված ժամեր կամ սահմանափակ ծառայություններ:

Խուլ, լսողության կամ խոսքի խանգարումներ ունեցող անհատները աջակցության համար կարող են զանգահարել 1-800-368-4327 (անվճար) հեռախոսահամարին:

## ԿԱՊ ՀԱՍՏԱՏԵԼ ՄԵՁ ՀԵՏ

Ուղարկել մեկնաբանություններ կամ առաջարկներ այս վարորդական ձեռնարկի համար՝

Department of Motor Vehicles  
Customer Communications Section, MS H165  
PO Box 932345  
Sacramento, CA 94232-3450

## ԲԱԺԻՆ 3. Կալիֆոռնիայի վարորդական իրավունք

Կալիֆոռնիայի վարորդական իրավունքը ձեզ բույլ է տալիս երթևեկել հանրային ճանապարհներով: Պարտադիր է՝

- Ունենալ վարորդական վկայական տրանսպորտային միջոց վարելիս:
- Ցույց տալ վարորդական վկայականը ցանկացած իրավապահ մարմնի, ով պահանջում է ներկայացնել այն:
- Ցույց տալ վարորդական իրավունքը այն վարորդին (վարորդներին), ում բախվել է:
- Ունենալ գործող վարորդական իրավունք: Ժամկետանց վարորդական իրավունքով տրանսպորտային միջոց վարելը իրավախախտում է: Ձեզ կարող են տուգանել, տրանսպորտային միջոցը՝ բռնագանձել և պահանջել ներկայանալ դատարան:

### Ո՞Վ ՊԵՏՔ Է ՈՒՆԵՆԱ ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

#### Կալիֆոռնիայի բնակիչները

Կալիֆոռնիայի բնակիչները, ովքեր երթևեկում են հանրային ճանապարհներով կամ օգտվում են հանրային կայանատեղերից, պետք է ունենան վարորդական իրավունք:

#### Զինձառայողները (ԱՄՆ Զինված ուժեր)

Այցելություն [dmv.ca.gov/veterans](https://dmv.ca.gov/veterans) ակտիվ հեքթապահ զինվորական անձնակազմի լիցենզիաների համար:

#### Կալիֆոռնիայի նոր բնակիչները

Երբ Դուք դառնում եք Կալիֆոռնիայի բնակիչ և ցանկանում եք Կալիֆոռնիայում տրանսպորտային միջոց վարել, ապա 10 օրվա ընթացքում պետք է Կալիֆոռնիայի վարորդական վկայական ստանալու դիմում տաք: Կալիֆոռնիայում կացություն հաստատելու մի շարք եղանակներ կան, ներառյալ՝

- Կալիֆոռնիայի ընտրություններում ֆվեարկելու համար գրանցված լինելը:
- Աշխատանքի տեղավորվելը:
- Կալիֆոռնիայի որևէ քաղաքում կամ համալսարանում կրթության արտոնավճար վճարելը:
- Տան սեփականատիրոջ գույքահարկից ազատման համար գրանցվելը:
- Ցանկացած այլ արտոնություն կամ նպաստ ստանալը, որոնք սովորաբար չեն տրվում ոչ մշտաբնակներին:

#### Կալիֆոռնիա այցելող չափահասները

18 տարեկանից բարձր այցելուները կարող են տրանսպորտային միջոց վարել Կալիֆոռնիայում՝ իրենց հայրենի նահանգում կամ շրջանում ստացած վավեր վարորդական իրավունքով:

## ՏՈՒՅՅԵՐ ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԻՔ ԶՈՒՆՅՈՂ ՎԱՐՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Առանց վարորդական իրավունքի տրանսպորտային միջոց վարելը կարող է հանգեցնել տուգանման և ազատազրկման:

Ցանկացած անձի, ում վարորդական իրավունքը կասեցված է կամ ով գրկված է վարորդական իրավունքից, օրենքն արգելում է վարել ձեր տրանսպորտային միջոցը: Եթե ստիկանությունը նրան բռնի ձեր տրանսպորտային միջոցը վարելիս, ապա այն կբռնագրավեն **30** օրով:

Միջնահանգային կամերցիոն տրանսպորտային միջոցի ցանկացած վարձու վարորդ պետք է լինի առնվազն **21** տարեկան: Դուք նույնպես պետք է առնվազն **21** տարեկան լինե՛ք՝ վտանգավոր նյութեր կամ թափոններ տեղափոխելու համար:

## ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Յուրաքանչյուր ո՛ք, ով վարում է տրանսպորտային միջոց, պետք է ունենա տվյալ տեսակի տրանսպորտային միջոց վարելու վարորդական իրավունք: Ամենապահանջվածը **C** կարգի վարորդական իրավունքն է: Առևտրային տրանսպորտային միջոցներ, մոտոցիկլետներ և այլ տրանսպորտային միջոցներ շահագործելու համար Դուք պետք է ունենա՞ք այլ կարգի վարորդական իրավունք:

## C կարգի վարորդական իրավունք

C կարգի վարորդական իրավունքով Դուք կարող ե՛ք վարել՝

- **26,000** ֆունտ կամ պակաս լրիվ զանգված ունեցող (GVWR) երկստնի փոխադրամիջոց:
- **6000** ֆունտ կամ պակաս լրիվ զանգված ունեցող եռստնի փոխադրամիջոց:
- Տնակ մեքենա (տրանսպորտային միջոց, որը նախատեսված է մարդու բնակության համար)՝ **40** ֆունտ կամ պակաս երկարությունը:
- Եռանիվ մոտոցիկլետ, որի **2** անիվները գտնվում են առջևում կամ հետևում:
- Ուղևորատար ֆուրգոն, որը նախատեսված է **10-15** ուղևոր տեղափոխելու համար՝ ներառյալ վարորդը:

C կարգի վարորդական իրավունքով կարող ե՛ք ֆարձակել՝

- Կցասայլի հետ միասին **10,000** ֆունտ կամ պակաս լրիվ զանգված ունեցող (GVWR) մեկ փոխադրամիջոց:
- Զբեռնված վիճակում առնվազն **4000** ֆունտ կշռող տրանսպորտային միջոցով թույլատրվում է ֆարձակել՝
  - **10,000** ֆունտ կամ դրանից պակաս լրիվ զանգված ունեցող բնակելի կցավագոն կամ փոքրածավալ բնակելի կցորդ: Լրիվ զանգված ունեցող փոխադրամիջոց (GVWR), եթե ֆարձակումը որևէ տիպի փոխհատուցում ստանալու համար չէ:
  - Ավելի քան **10000** ֆունտ, բայց **15000** ֆունտը չգերազանցող զանգվածով կցավագոն: GVWR, եթե ֆարձակումը որևէ տիպի փոխհատուցում ստանալու համար չէ և ունի փոխադրագիր:

Ֆերմերը կամ ֆերմերի աշխատողը կարող է վարել՝

- Տրանսպորտային միջոցների՝ 26,000 ֆունտ ֆառ ունեցող ցանկացած համադրություն: GVWR կամ ավելի ֆիչ (եթե այն օգտագործվում է միայն գյուղատնտեսության մեջ, այլ ոչ թե վարձու կամ փոխհատուցման համար):

Նշումներ **C** կարգի վարորդական վկայականների մասին՝

- **C** կարգի վարորդական իրավունք ունեցող վարորդները չեն կարող ֆարեակել մեկից ավելի տրանսպորտային միջոց:
- **Չ**ի թույլատրվում, որ ուղևորատար տրանսպորտային միջոցը (անկախ ֆաշից) ֆարեակի մեկից ավելի տրանսպորտային միջոց:
- Մինչև 4000 ֆունտ ֆառ ունեցող տրանսպորտային միջոցը (առանց բեռի) չի կարող ֆարեակել 6000 ֆունտ կամ ավելի մեծ ֆառ ունեցող ցանկացած տրանսպորտային միջոց:

## Վարորդական վկայականների կարգեր և թույլտվություն

Այցելեք [dmv.ca.gov/certificates-and-endorsements](https://dmv.ca.gov/certificates-and-endorsements) վարորդական իրավունքի այլ կարգերի և թույլտվությունների հետ ծանոթանալու համար:

## REAL ID վարորդական վկայականներ

Ի պատասխան 9/11 իրադարձությունների՝ ֆեդերալ կառավարությունը 2005թ. ընդունեց REAL ID ստանալու մասին օրենքը: 2023 թ. մայիսից սկսած ձեր վարորդական վկայականը կամ նույնականացման ֆարսը պետք է համատեղելի լինի REAL ID-ի հետ, եթե այն օգտագործում եք հետևյալի համար՝

- Նստել ներքին չվերթի ինքնաթիռ:
- Մուտք գործել ռազմաբազաներ:
- Մուտք գործել ֆեդերալ հաստատություններ:

Այցելեք [dmv.ca.gov/real-id](https://dmv.ca.gov/real-id) REAL ID-ի համար դիմելու մասին ավելի խմանալու համար:

## ՎԱՐՈՐԴԻ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

### Օրգանների և հյուսվածքների տրամադրում

Վարորդական վկայական կամ ID ստանալու համար դիմում ներկայացնելիս կամ վարորդական վկայականը կամ ID-ն վերականգնելիս կարող եք գրանցվել՝ ձեր մահից հետո ձեր օրգաններն ու հյուսվածքները տրամադրելու համար: Ձեր վարորդական վկայականը կամ ID-ն կներառի վարդագույն DONOR կետ, որը ցույց է տալիս ձեր մասնակցությունը դոնորական ծրագրին:

Եթե դուք 18 տարեկանից փոքր չեք, ձեր օրինական խնամակալի համաձայնությունը թույլտվության համար պարտադիր չէ:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք [donateLIFECalifornia.org](https://donateLIFECalifornia.org):

## Վետերան

Վարորդական վկայական կամ ID ստանալու համար դիմում ներկայացնելիս կամ վարորդական վկայականը կամ ID-ն վերականգնելիս վետերանները կարող են պահանջել իրենց ֆարտուն ավելացնել «VETERAN» բառը՝ վճարելով հավելյալ 5 դոլար:

Այցելեք [dmv.ca.gov/veterans](https://dmv.ca.gov/veterans) Veteran-ի նշան պահանջների և առավելությունների մասին ավելին իմանալու համար:

## ID ՔԱՐՏԵՐ

ID ֆարտերը օգտագործվում են միայն նույնականացման նպատակներով:

Նրանք ձեզ թույլ չեն տալիս վարել տրանսպորտային միջոց

Կալիֆոռնիայում: ID ֆարտերը տրվում են ցանկացած տարիքի իրավասու անձանց:

ID ֆարտ ստանալու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

- Անձը հաստատող փաստաթուղթ:
- Կացույցան փաստաթուղթ (փաստաթղթեր):
- Սոցիալական ապահովության համարը:

Այցելեք [dmv.ca.gov/id-cards](https://dmv.ca.gov/id-cards) նույնականացման ֆարտ ստանալու դիմում ներկայացնելու և իջեցված վճարի, առանց վճարի կամ ավագ ID ֆարտերի մասին իմանալու համար:

## ԲԱԺԻՆ 4. Հրահանգների թույլտվություն և վարորդական իրավունքի ստացում 18 տարեկանից ցածր տարիքում

Եթե Ձեր տարիքը 18 տարեկանից ցածր է, ապա անչափահաս եք: Կարող եք անչափահասի (ժամանակավոր) ուսուցման թույլտվություն և ժամանակավոր վարորդական վկայական ստանալու համար դիմում ներկայացնել՝ ձեր ծնողի (ծնողների) կամ օրինական խնամակալի (խնամակալների) համաձայնությամբ:

### ԱՆՉԱՓԱՀԱՄԱՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԹՈՒՅՋՏԱՏՐՈՒՄ

Ընդհանուր տեղեկություն այն մասին, թե ինչ է ձեզ հարկավոր ուսուցման թույլտվություն ստանալու համար՝

- Լինել անվազն 15½ տարեկան:
- Ավարտել վարորդի կրթության ծրագիրը:
- Կրացնել վարորդական վկայական և ID ֆարտ ստանալու դիմումը (*Driver's License & ID Card Application, DL 44/eDL 44*) [dmv.ca.gov](http://dmv.ca.gov) կայքում:
- Դիմումի մեջ ունենալ ձեր ծնողի (ծնողների) կամ օրինական խնամակալի (խնամակալների) ստորագրությունը: Եթե ծնողները կամ խնամակալները երկուսն էլ իրականացնում են համատեղ խնամակալություն, նրանք երկուսն էլ պետք է ստորագրեն:
- Հանձնել գիտելիքների ստուգման թեստ:

Հայտի ֆայլերի և պահանջների ամբողջական ցուցակի համար տե՛ս Հրահանգների թույլտվությունները էջը [dmv.ca.gov/instruction-permits](http://dmv.ca.gov/instruction-permits) կայքում:

### Ստանանալիակումներ

Ձեր ուսուցման թույլտվությունը վավեր չէ, քանի դեռ չեք սկսել «դեկի մոտ» տրանսպորտային միջոց վարելու գործնական ուսուցումը՝ թույլտվությունը ստորագրող հրահանգչի հետ:

Ժամանակավոր թույլտվությունը ձեզ թույլ չի տալիս միայնակ մեքենա վարել՝ նույնիսկ վարորդական ֆննդություն հանձնելու նպատակով մինչև DMV-ի տեղական գրասենյակ հասնելու համար: Դուք պետք է վարժվեք տրանսպորտային միջոց վարել Կալիֆոռնիայի վկայական ունեցող վարորդի հետ, ինչպես օրինակ՝

- Ձեր ծնողը կամ խնամակալը:
- Տրանսպորտային միջոց վարելու հրահանգիչը:
- Ձեր ամուսինը:
- Անվազն 25 տարեկան մեծահասակը:

Այս անձը պետք է բավական մոտ նստի, որպեսզի անհրաժեշտության դեպքում վերահսկի տրանսպորտային միջոցը:

Կարդացե՛ք Կալիֆոռնիայի ծնողների և դեռահասների ուսուցման ուղեցույցը (*California Parent-Teen Training Guide, DL 603*) վարորդական պրակտիկայի վերաբերյալ ավելի շատ տեղեկատվության համար:

**ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ** Անչափահասները չեն կարող վարել վարձատրության դիմաց կամ շահագործել կամերցիոն տրանսպորտային միջոցներ:

## ԱՆՉԱՓԱՀԱՍ ՎԱՐՈՐԴԻ ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Առնվազն 6 ամսվա ընթացքում ուսուցման թույլտվություն ստանալուց հետո կարող եք դիմել անչափահասի վարորդական իրավունքի վկայական ստանալու համար:

Ընդհանուր տեղեկություն այն մասին, թե ինչ է Ձեզ հարկավոր վարորդական իրավունք ստանալու համար

- Լինել առնվազն 16 տարեկան:
- Ներկայացնել փաստաթուղթ, ըստ որի ստացել եք և վարորդական ուսուցում, և անցել եք վարորդական գործնական դասընթաց:
- Տրանսպորտային միջոց վարելու մեջ վարժվեք առնվազն 50 ժամ: 10 ժամը պետք է լինի գիշերը:
- Հանձնել գիտելիքների ստուգման թեստ (թեստեր):
- Հանձնել «ղեկի մոտ» վարորդական ֆինուրյուն:

Հայտի փայերի և պահանջների ամբողջական ցուցակի համար տե՛ս վարորդական վկայականների էջը [dmv.ca.gov/dlsservices](http://dmv.ca.gov/dlsservices) կայքում:

## Սահմանափակումներ և բացառություններ անչափահասի համար

Անչափահասի վարորդական իրավունքի համար կան սահմանափակումներ՝

- Ձեր վարորդական վկայական ունենալու առաջին 12 ամիսների ընթացքում Դուք չեք կարող տրանսպորտային միջոց վարել երեկոյան ժամը 11-ից առավոտյան 5-ը:
- Դուք չեք կարող տրանսպորտային միջոց վարել մինչև 20 տարեկան ուղևորների հետ, քանի դեռ ձեռնդը կամ խնամակալը կամ Կալիֆոռնիայի վարորդական իրավունք ունեցող այլ վարորդ (25 տարեկան կամ ավելի բարձր տարիքի) Ձեր կողմից չէ:

Այս սահմանափակումներն ունեն բացառություններ, եթե՝

- Դուք բժշկական օգնության կարիք ունեք և չեք կարող ողջամտաբեկ գտնել երթևեկելու մեկ այլ հանապարհ:
  - Դուք պետք է ունենաք Ձեր բժշկի կողմից ստորագրված տեղեկանք: Տեղեկանքում պետք է նշված լինի Ձեր ախտաբուժումը և հավանական առողջացման ամսաթիվը:
- Տրանսպորտային միջոցը վարում եք դպրոցի կամ դպրոցական գործունեության համար:
  - Դուք պետք է ունենաք Ձեր դպրոցի տնօրենի, ուսուցչի կամ պատճենակատարի կողմից ստորագրված տեղեկանք:
- Դուք պետք է տրանսպորտային միջոց վարեք աշխատանքային պատճեններով:
  - Դուք պետք է Ձեր գործատուի կողմից ստորագրված տեղեկանք ունենաք: Տեղեկանքը պետք է հաստատի Ձեր զբաղվածությունը:
- Դուք պետք է վարեք ընտանիքի անմիջական անդամի հետ:
  - Դուք պետք է ունենաք Ձեր ծնողի (ծնողների) կամ օրինական խնամակալի (խնամակալների) կողմից ստորագրված տեղեկանք: Տեղեկանքի մեջ պետք է նշվեն տրանսպորտային միջոց վարելու անհրաժեշտ պատճառը, ընտանիքի անդամը և հավանական առողջացման ամսաթիվը:



## Ազատագրված անչափահասներ

Անչափահասների սահմանափակումները և բացառությունները չեն վերաբերվում ազատագրված անչափահասներին: Ազատագրված անչափահասն այլևս ծնողների կամ խնամակալների խնամքի և հսկողության տակ չէ: Նրանք պետք է ծնողների կամ խնամակալի ստորագրությունների վախարեն տրամադրեն իրենց ազատումն ապացուցող դատական փաստաթղթեր և Կալիֆոռնիայի ապահովագրական ապացույցի վկայագիր (California Insurance Proof Certificate, SR 22/SR 1P): Ազատագրված անչափահասները պետք է ավարտեն վարորդի կրթության և վարորդի նախապատրաստման ծրագրերը:

## Ձեր վարորդական իրավունքի պահպանումը

DMV-ն վերահսկում է Ձեր վարորդական գործը: Եթե առաջին 12 ամիսների ընթացքում բախումների եք ենթարկվում կամ հանապարհային երթևեկության խախտումներ եք բույլ տալիս, DMV-ն կարող է սահմանափակել կամ կասեցնել ձեր վարորդական իրավունքը: Դուք չեք կարող տրանսպորտային միջոց վարել, եթե ձեր վարորդական իրավունքը կասեցված է, կամ գրկված եք վարորդական իրավունքից:

DMV-ն կարող է միջոցներ ձեռնարկել ձեր վարորդական իրավունքի դեմ, եթե դուք՝

- Ծանուցում ստանալ երթևեկության կանոնների խախտման մասին, բայց դատարան չներկայանալ՝ DMV-ն կարող է կասեցնել Ձեր վարորդական իրավունքի վկայականի գործողությունը, մինչև կներկայանալ դատարան:
- Ունենալ 1 «մեղավոր» բախման կամ երթևեկության կանոնների խախտման մեղադրանք՝ Մեկ «մեղավոր» բախումը նշանակում է, որ Դուք մեղավոր եք հանաչվել:
- Ունենալ 2 «մեղավոր» բախում, հանապարհային երթևեկության կանոնների խախտման 2 մեղադրանք կամ յուրաքանչյուրից 1-ը՝ Դուք չեք կարող 30 օր տրանսպորտային միջոց վարել, քանի դեռ վարորդական իրավունք ունեցող, առնվազն 25 տարեկան չափահասը Ձեր կողմից նստած չէ:
- Ունենալ 3 «մեղավոր» բախման, երթևեկության կանոնների խախտման 3 մեղադրանք կամ երկուսից էլ՝ Ձեր վարորդական իրավունքը կդադարեցվի 6 ամսով: Դուք 1 տարի փորձաքաջան կանցնեք:
  - Եթե փորձաքաջան անցնելիս ավելի շատ «մեղավոր» բախումների կամ երթևեկության կանոնների խախտման մեղադրանքներ ունենալ, Ձեր վարորդական իրավունքը կրկին կկասեցվի:
  - Անչափահասների՝ դատարանում լուծված հանապարհային երթևեկության խախտումները գեկուցվում են DMV-ին:
- 13-21 տարեկան և ավելի և (կամ) վերահսկվող նյութ օգտագործելու համար դատապարտված լինելու դեպքում՝ Դատարանը որոշում կկայացնի DMV-ի կողմից կասեցնել Ձեր վարորդական իրավունքը 1 տարով կամ հետաձգել վարորդական իրավունք ստանալու համար դիմելու ձեր իրավասությունը:

18 տարեկան դառնալու պես կարող եք ձեռք բերել կանոնավոր (ոչ ժամանակավոր) վարորդական վկայական:

**ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝** 18 տարեկանը բուլրելուն պես առկա սահմանափակումները, կասեցումները կամ պայմանական ազատագրված դատավիճակները չեն «ջնջվում» կամ ավարտվում:

## ԱՆՁԱՓԱՀԱՆՆԵՐԸ և ԲՋՁԱՅԻՆ ՇԵՌՆՈՍՆԵՐԸ

Օրենքն արգելում է, որ անչափահասը տրանսպորտային միջոց վարելիս օգտվի բջջային հեռախոսից: Եթե տրանսպորտային միջոց վարելիս Ձեր բջջային հեռախոսը գանգում է, մի պատասխանե՛ք հեռախոսագանգին կամ տեխնոլոգիայի հաղորդագրությունը:

**ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆ՝** Արտակարգ իրավիճակներում դուք կարող եք օգտագործել բջջային հեռախոս իրավապահ մարմիններին, շտապ օգնություն, հրեժջ կամ այլ փրկարարական ծառայություն գանգահարելու համար:

**Նահանգի բնակիչ չհանդիսացող անչափահասների ուսուցման թույլտվություն**  
Պետությունից դուք գտնվող անչափահաս երեխաները պետք է բավարարեն «Անչափահասների հրահանգների թույլտվությունները» բաժնում նշված պահանջները: Անչափահասի հրահանգների թույլտվությունների և վարորդական իրավունքի մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար տե՛ս Կալիֆոռնիայի ծնողների և դեռահասների ուսուցման ուղեցույցը (*California Parent-Teen Training Guide, DL 603*) [dmv.ca.gov](http://dmv.ca.gov) կայքում:

## ԱՎՏՈՒՊՐՈՑՆԵՐ

Վարորդի կրթություն և վարորդի նախապատրաստում կարելի է անցնել նահանգային լիցենզավորված ավտոդպրոցներում և որոշ ավագ դպրոցներում: Ավտոդպրոցների և հրահանգիչների **DMV** ստանդարտները՝

- Նրանք պետք է **DMV**-ի կողմից լիցենզավորված լինեն, ինչպես նաև ապահովագրված և պարտատնտեսումով ապահովված:
- **DMV**-ի կողմից վերահսկողություն իրականացնելու նպատակով պետք է կատարվի ամբողջական հաշիվառում:
- Ավտոդպրոցների տրանսպորտային միջոցները պետք է ամեն տարի ստուգվեն:
- Դասախոսները պետք է յուրաքանչյուր **3** տարին մեկ գրավոր բնույթում հանձնեն կամ ցույց տան վերապատրաստման ապացույց:
- Հրահանգիչները պետք է ունենան հրահանգչի **ID** ֆարտ: Խնդրե՛ք դա տեսնել:

Ավտոդպրոց ընտրելու մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս Վարորդի նախապատրաստման դպրոցների էջը

[dmv.ca.gov/driver-training-schools](http://dmv.ca.gov/driver-training-schools) կայքում:

## ԲԱԺԻՆ 5. Վարորդական իրավունք ստանալը

Կալիֆոռնիայի վարորդական իրավունքը Ձեզ տալիս է օրինական թույլտվություն տրանսպորտային միջոց վարելու համար:

### ԻՆՉ Է ՁԵՁ ՀԱՐԿԱՎՈՐ

Վարորդական իրավունք ստանալու համար դիմում տալիս պետք է ներկայացնել՝

- Ինֆնուբյան ապացույց՝ Ապացույց, թե ով եք դուք:
- Բնակության երկու ապացույց, որոնք պացուցում են, որ ապրում եք Կալիֆոռնիայում: (Մեկ ապացույցը ֆեդերալ պահանջներին չբավարարող վարորդական վկայականների համար):
- Իրական լրիվ անվանմամբ փաստաթուղթ, որն ապացուցում է Ձեր ներկայիս անունը, եթե Ձեր անձը հաստատող փաստաթղթի և դիմումի մեջ անունները չեն համընկնում:
- Սոցիալական ապահովության համարը: Հնարավոր է կիրառվեն բացառություններ:

ԱՄՆ կառավարությունը վարորդական իրավունքի վկայականները և նույնականացման փաստերն ընդունում է որպես ինֆնուբյան վավեր ապացույց:

REAL ID-ի պահանջները կարող են փոխվել: Ընթացիկ ընդունելի փաստաթղթերի և իրավասության մասին ավելին իմանալու համար այցելե՛ք **[dmv.ca.gov/dlsservices](https://dmv.ca.gov/dlsservices)**:

### ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՍՏԱՆԱԿՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄՈՒՄ ՏԱԼԸ

Դուք կարող եք դիմել **C** կարգի հիմնական վարորդական իրավունք ստանալու համար գլխավորապես **DMV** տեղական գրասենյակում:

Ընդհանուր տեղեկություն այն մասին, թե ինչ է ձեզ հարկավոր անել վարորդական իրավունք ստանալու համար՝

- Լրացնել և ստորագրել վարորդական վկայականի և **ID** փաթիլի դիմումը (**DL 44/eDL 44**) **[dmv.ca.gov](https://dmv.ca.gov)** կայքում:
- Ներկայացնել ձեր փաստաթղթերը:
- Վճարել հայտի չվերադարձվող վճար:
- Հանձնել գիտելիքների ստուգման թեստ (թեստեր):
- Անցնել տեսողության ստուգում:
- Հանձնել «դեկի մոտ» վարորդական ֆննուբյան:

Հայտի ֆայլերի և պահանջների ամբողջական ցուցակի համար տե՛ս վարորդական իրավունքի բաժինը **[dmv.ca.gov/dlsservices](https://dmv.ca.gov/dlsservices)** կայքում:



CALIFORNIA'S  
LOW COST  
AUTO INSURANCE

[MyLowCostAuto.com](http://MyLowCostAuto.com)

## Այստեղ է սկսվում Էժանագին ավտոապահովագրության ճանապարհը

Ստուգեք մեր [mylowcostauto.com](http://mylowcostauto.com)  
կայքէջը հետևյալի համար

- Եկամտային իրավասության պահանջմունքներ
- Սկսելու համար անհրաժեշտ փաստաթղթեր
- Ընթացիկ գներ
- Վճարման ծրագրի տարբերակներ

AB60 վարորդական արտոնագիր ստացողները կարող են իրավասու լինել այս ծրագրին՝ անկախ ներգաղթի կարգավիճակից

1-866-602-8861

| [MyLowCostAuto.com](http://MyLowCostAuto.com)

# ԲԱԺԻՆ 6. Քննության գործընթացը

Ձեր վարորդական իրավունքը ստանալուց առաջ պետք է հանձնեք երեք ֆննություն՝ տեսողության, գիտելիքների և «դեկի մոտ» տրանսպորտային միջոց վարելու ֆննություններ: Հնարավոր է հարկավոր լինի հանձնել մեկից ավելի ֆննություն՝ ձեր վարորդական իրավունքը երկարաձգելու կամ վարորդական իրավունքի այլ կարգ ստանալու համար:

Մենք օգտագործում ենք այս թեստերը՝ օգնելու համար, որ Կալիֆոռնիայի բոլոր վարորդները անվտանգ լինեն ճանապարհներին: Ձեր թեստերին նախապատրաստվելիս ավելի շատ օգնություն ստանալու համար այցելեք **[dmv.ca.gov/knowledge-and-drive-test-preparation](http://dmv.ca.gov/knowledge-and-drive-test-preparation)** կայք:

## DMV ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԷՔԻ ԹԵՍՏԵՐ

Հնդհանուր տեղեկություն վարորդական իրավունքի ֆննությունների վերաբերյալ՝

### 1. Տեսողության թեստ

DMV-ն ստուգում է բոլոր դիմորդներին՝ համոզվելու, որ նրանք տրանսպորտային միջոց վարելու համար ունեն բավականաչափ լավ տեսողություն: Դուք պետք է ապացուցեք, որ ձեր տեսողությունը համապատասխանում է մեխենա վարելու պահանջներին՝ ձեր գրասենյակի այցի ընթացքում կարգավոր տեսողության ստուգման ադյուսակը: Կրացուցիչ տեղեկությունների համար այցելեք **[dmv.ca.gov/vision-standards](http://dmv.ca.gov/vision-standards)**:

### 2. Գիտելիքների ստուգման թեստ

Ձեր վարորդական իրավունքը ստանալու համար անհրաժեշտ է հասկանալ ճանապարհային երթևեկության կանոնները և անվտանգությունը: Երբ դիմում եք բնօրինակ վարորդական իրավունքի վկայական ստանալու համար, դուք պետք է անցնեք գիտելիքների ստուգման թեստ:

### 3. «Դեկի մոտ» վարորդական ֆննություն

Դուք կհանձնեք տրանսպորտային միջոց վարելու ունակությունը ստուգող թեստ ցույց տալու, որ դուք կարող եք ապահով կերպով վարել տրանսպորտային միջոցը:

Ձեր վարորդական ֆննությունը հանձնելու համար հեքթագրվեք առցանց՝ **[mv.ca.gov/make-an-appointment](http://mv.ca.gov/make-an-appointment)** կայքում կամ զանգահարեք 1-800-777-0133: Քննության օրը բերեք՝

- Ձեր ուսուցման քույլտվությունը կամ վարորդական իրավունքը (երե ունեք): Ձեզանից կարող են պահանջել հանձնել «դեկի մոտ» վարորդական ֆննություն, նույնիսկ երե ունեք վարորդական իրավունք, բայց ունեք տեսողության կամ բժշկական այնպիսի ցուցում, որը պահանջում է հետագա գնահատում:
- Կալիֆոռնիայի վարորդական իրավունք ունեցող մեկ այլ վարորդ, ով առնվազն 18 տարեկան է (25 տարեկան՝ անչափախասների համար), մինչև Դուք չունենաք վարորդական իրավունք:
- Տրանսպորտային միջոց՝ «դեկի մոտ» վարորդական ֆննություն հանձնելիս օգտագործելու համար:

**«Ղեկի մոտ» վարորդական ֆնկուրյան տրանսպորտային միջոցը** Տրանսպորտային միջոցը, որը նախատեսված է «ղեկի մոտ» վարորդական ֆնկուրյուն հանձնելու համար, պետք է վարելու համար ապահով լինի, ունենա վավեր գրանցում և պատշաճ ապահովագրություն: Դուք պետք է ներկայացնեք ապահովագրության ապացույց:

Տրանսպորտային միջոցը պետք է ունենա՝

- Վարորդի կողմից աշխատող պատուհան, արգելակման լապտերներ, ձայնային ազդանշան, կայանման արգելակ և շրջադարձի ազդանշաններ:
- Անվտանգ անվադողեր: Անվադողերը պետք է ունենան առնվազն պահպանաճերտի պատկերի 1/32 դյույմ հավասարաչափ խորություն:
- Հողմապակի, որն ապահովում է լիարժեք, պարզ և անարգելի տեսարան ձեր և ֆնկուրի համար:
- Առնվազն երկու հետահայաց հայելի: Նրանցից մեկը պետք է լինի Ձեր տրանսպորտային միջոցի ձախ կողմում:
- Վարորդի կողմից և առջևի ուղևորի անվտանգության աշխատող գոտիներ:

Դուք պետք է ցույց տաք, որ գիտեք ինչպես աշխատել տրանսպորտային միջոցի ցուլապտերների, ապակու մաքրիչների, ապակետափացուցչի, վրարային քարքող լույսերի և կայանման արգելակի հետ:

Քննությունը հետաձգել, եթե Ձեր տրանսպորտային միջոցը չի համապատասխանում այդ պահանջներին:

**ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ** Եթե վարձակալված մեքենա եք օգտագործում, ձեր անունը պետք է նշված լինի վարձակալության պայմանագրում: Պայմանագիրը չպետք է բացառի «ղեկի մոտ» վարորդական ֆնկուրյունները:

## **Այլ տեղեկատվություն, որը պետք է խմանալ «ղեկի մոտ» վարորդական ֆնկուրյուն հանձնելու համար**

Ձեր անվտանգության նկատառումներով ձեր ֆնկուրյան ընթացքում ոչ մի ընտանի կենդանի կամ ուղևոր՝ բացառությամբ DMV-ի լիազորված աշխատակիցների, չեն կարող գտնվել տրանսպորտային միջոցում:

Վարորդական թեստի նպատակն է որոշել հանապարհային իրավիճակներից շատերում ավտոմեքենան շահագործելու ձեր հմտությունը և զնահատել ձեր ունակությունները, ոչ թե մեքենայի տեխնոլոգիան: Այդ պատճառով վարորդական աջակցության առաջադեմ համակարգերի (ADAS) տեխնոլոգիաները, ինչպիսիք են ավտոմատացված զուգահեռ կայանատեղերը և հարմարվող կրուիզ-կառավարումը, թույլատրված չեն վարորդական ֆնկուրյան ընթացքում: Տրանսպորտային միջոցների անվտանգության տեխնոլոգիան, ինչպիսիք են պահեստային ֆոտոթիցիկները և կույր գոտիների մոնիտորները, կարող են օգտագործվել վարորդական թեստի ժամանակ, բայց դրանք չեն փոխարինում ձեր հայելիների և կույր գոտիների իրական տեսողական ստուգմանը և չեն կարող օգտագործվել միայն վարորդական թեստի ժամանակ:

## ՈՐՏԵՂ ՆԱԶՁԵԼ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Քննությունները կարող եմ հանձնել գլխավորապես **DMV** գրասենյակներում, որոնք տրամադրում են վարորդական իրավունքի ծառայություններ:

Ժամանակ խնայելու համար հերթագրվեք առցանց՝ այցելելով **[dmv.ca.gov/make-an-appointment](https://dmv.ca.gov/make-an-appointment)** կայքը կամ սովորական աշխատանքային ժամերին գանգահարելով 1-800-777-0133 հեռախոսահամարին:

## ԽԱՔԵՈՒԹՅՈՒՆ


Գլխելիքների ստուգման թեստերի ընթացքում չի թույլատրվում օգտագործել թեստն անցնելու որևէ օժանդակ միջոց, ինչպիսիք են՝

- Կալիֆոռնիայի վարորդի ձեռնարկ:
- Հուշաթերթիկներ:
- Էլեկտրոնային հաղորդակցման այնպիսի սարքեր, ինչպիսիք են բջջային հեռախոսները և այլն:

DMV-ն կձախողի Ձեր քննությունը, եթե գլխելիքների ստուգման ժամանակ օգտագործեք որևէ միջոց: Հնարավոր է, որ Ձեր վարորդական իրավունքի և (կամ) ձեզ օգնող յուրաքանչյուրի վարորդական իրավունքի դեմ գործողություններ ձեռնարկվեն:

## ԳՐԱՆՑՎԵԼ ՔՎԵՆԱԲԿԵԼՈՒ ՆԱՄԱՐ

Քվեարկությանը գրանցվելու վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար այցելեք **[dmv.ca.gov](https://dmv.ca.gov)**:



## Օգտվեք **DMV NOW** տերմինալներից՝ գրանցման երկարաձգման եւ այլ գործառնությունների համար

- Տրանսպորտային միջոցի գրանցման երկարաձգում
- Վարորդի/տրանսպորտային միջոցի պատմության արձանագրում
- Պիտակի կամ գրանցման քարտի փոխարինում
- Վարորդական վկայականի ըկնօրինակում
- Տրանսպորտային միջոցի գրանցման երականգնման վճարի մուտքագրում

Լրացուցիչ տեղեկությունների համար  
այցելեք **[dmv.ca.gov](http://dmv.ca.gov)**



## ԲԱԺԻՆ 7. Ձեր վարորդական իրավունքի փոփոխումը, փոխարինումը և երկարաձգումը

### Ձեր ՏՎՅԱՆՆԵՐԻ ՓՈՓՈՏՈՒՄԸ

#### Փոխել ձեր անունը

Եթե դուք օրինականորեն փոխում եք ձեր անունը, նորացրեք Ձեր վարորդական իրավունքը: Ընդհանուր տեղեկություն ֆայլերի վերաբերյալ՝

1. Փոխեք ձեր անունը Սոցիալական ապահովության վարչության (SSA) միջոցով:
2. Լրացրեք վարորդական իրավունք և ID ֆարս ստանալու նոր դիմում (DL 44/eDL 44) [dmv.ca.gov](http://dmv.ca.gov):
3. Ձեր անվանափոխության փաստաթղթերը բերեք DMV գրասենյակ:

Լրացուցիչ տեղեկատվության և անհրաժեշտ փաստաթղթերի ցանկի համար տե՛ս Վարորդական իրավունքի վկայականի կամ ID ֆարսի թարմացումները [dmv.ca.gov/dlsservices](http://dmv.ca.gov/dlsservices) կայքում:

#### Փոխել ձեր սեռի ինֆորմացիան

Ձեր սեռի ինֆորմացիան փոխելու մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար տե՛ս Վարորդական իրավունքի վկայականի կամ ID ֆարսի թարմացումները [dmv.ca.gov/dlsservices](http://dmv.ca.gov/dlsservices) կայքում:

#### Փոխել ձեր հասցեն

Երբ դուք փոխում եք բնակության վայրը, 10 օրվա ընթացքում ձեր նոր հասցեն հայտնեք DMV-ին: Ներկայացրեք հասցեի փոփոխությունը առցանց՝ [dmv.ca.gov](http://dmv.ca.gov) կայքում, փոստով կամ DMV գրասենյակում: Ձեր պարտականությունն է ապահովել, որ DMV-ն ունենա ձեր նիշտ փոստային հասցե:

Փոխեք Ձեր հասցեն ԱՄՆ փոստային ծառայության միջոցով, որպեսզի հանձնվեք, որ DMV նամակագրությունը փոխանցվում է Ձեր ընթացիկ փոստային հասցեին:

Ձեր հասցեն փոխելիս Դուք ավտոմատ կերպով չեք ստանում նոր վարորդական վկայական: Կարող եք փոխել վարորդական իրավունքի վկայականը վճարի դիմաց:

Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս Վարորդական իրավունքի վկայականի կամ ID ֆարսի թարմացումները [dmv.ca.gov/dlsservices](http://dmv.ca.gov/dlsservices) կայքում:

## ՎՈՐՑՐԱԾ, ԳՈՂԱՅՎԱԾ ԿԱՄ ՎՆԱՍՎԱԾ ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ

Եթե ձեզ անհրաժեշտ է փոխարինել կորցրած, գողացված կամ վնասված վարորդական իրավունքը, ապա անհրաժեշտ է՝

- Լրացնել Վարորդական իրավունքի վկայական և ID ֆարտ ստանալու դիմումը (DL 44/eDL 44) [dmv.ca.gov](http://dmv.ca.gov) կայքում: Ձևը կարող եք լրացնել առցանց՝ նախքան DMV գրասենյակ գալը:
- Այցելել [dmv.ca.gov/dlsservices](http://dmv.ca.gov/dlsservices) կամ DMV գրասենյակ:
- Վճարել փոխարինման չվերադարձվող վճար:

Նախքան DMV-ն կկարողանա ձեզ ժամանակավոր վարորդական վկայական տալ, հնարավոր է, որ ձեզանից պահանջեն ինֆնուրյունը հաստատող լրացուցիչ փաստաթուղթ:

Եթե Դուք անչափահաս եք, ապա Ձեր ծնողը (ծնողները) կամ խնամակալը (խնամակալները) պետք է ստորագրեն DL 44/eDL 44 ձևը:

Փոխարինման ֆարտը ստանալուց հետո Ձեր հին ֆարտն այլևս անվավեր է: Եթե գտնեք հին ֆարտը, համոզվեք, որ այն ոչնչացրել եք:

## ԵՐԿԱՐԱՑՆԵՆ ԎԱՐՈՐԴԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

Արգելվում է տրանսպորտային միջոց վարել վարորդական իրավունքի ժամկետանց վկայականով:

Վարորդական իրավունքի գործողության ժամկետի երկարաձգման տարբերակների և հրահանգների համար այցելել Վարորդական վկայականի կամ ID ֆարտի գործողության ժամկետի երկարաձգման էջ [dmv.ca.gov/dlsservices](http://dmv.ca.gov/dlsservices) կայքում:

## Երկարացնել վարորդական իրավունքի գործողության ժամկետը

Եթե երկար ժամանակով բացակայում եք Կալիֆոռնիայից և չեք կարող առցանց երկարացնել, կարող եք հայց ներկայացնել Ձեր վարորդական իրավունքի մեկ տարով անվճար երկարացման համար: Դուք պետք է դա անեք նախքան ձեր վարորդական իրավունքի ժամկետի ավարտը: Դիմումի մեջ ճշեք ձեր անունը, վարորդական վկայականի համարը, ծննդյան ամսաթիվը, Կալիֆոռնիայում բնակության հասցեն և հասցեն նահանգից դուրս: Ուղարկեք ձեր հայցը՝

DMV

PO Box 942890

Sacramento, CA 94290-0001

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝ Սահմանափակ ժամկետով վկայական ունեցող վարորդները երկարաձգման այս տարբերակից օգտվելու իրավունք չունեն:

## ԲԱԺԻՆ 8. Երթևեկության ներածություն

### ՊԱՏՐԱՍ ԵՔ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑ ՎԱՐԵԼ

Տեսողություն - Համոզվեք, որ Ձեր տեսողությունը բավականաչափ լավ է, որպեսզի կարողանաք տրանսպորտային միջոց վարել:

Լսողություն - Արգելվում է տրանսպորտային միջոց վարելիս ականջակալ կամ ականջի խցան կրել: Խուլ կամ լսողության խնդիր ունեցող վարորդները կարող են փոխել վարորդական սովորությունները:

Հոգնածություն և ֆնկտություն - Հոգնածությունն ու ֆնկտությունը կարող են ազդել Ձեր տեսողության վրա և երկարացնել վտանգին արձագանքելու ժամանակը: Խուսափեք տրանսպորտային միջոց վարելուց, եթե հոգնած եք կամ ֆնկտ եք:

Դեղեր - Դեղատոմսով կամ առանց դեղատոմսի բոլոր դեղերը կարող են ձեզ վտանգավոր վարորդ դարձնել: Որոշ դեղամիջոցներ կարող են ձեզ ֆնկտ դարձնել:

Առողջություն - Բժիշկներից պահանջվում է առնվազն 14 տարեկան հիվանդների մասին տեղեկացնել DMV-ին, եթե ախտորոշվում է՝

- Գիտակցության կորուստ:
- Ալցհայմերի հիվանդություն:
- Ուղեկցող խանգարումներ:

Ձեր բժիշկը կարող է նաև հայտնել բժշկական այլ ցուցումների մասին, եթե նրանք կարծում են, որ դրանք կարող են ազդել Ձեր անվտանգ տրանսպորտային միջոց վարելու ունակության վրա:

## Ձեր ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

- Մաքրեք ձեր պատուհաններն ու հայելիները
- Հարմարեցրեք և ստուգեք և հայելիները
- Ստուգեք Ձեր անվադողերը՝ Նայեք տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ ձեռնարկը:

## Տրանսպորտային միջոցի կառավարում

Ղեկի կառավարում «ձեռքը ձեռքի դիմաց»

Այն օրն երբ հայտնի է որպես ղեկի կառավարում «հրիք/ֆաշիք»: Այս մեթոդն օգտագործելիս ձեռքերը չեն անցնում ղեկի վրայով: Ձեր անվտանգության բարձր կործի դնելու դեպքում ձեր դեմքը կամ ձեռքերը վնասելու հավանականությունը փոքր է: Այս մեթոդն օգտագործելու համար՝

- Սկսել ձեռքերի ժամը 9 և 3 կամ ավելի ցածր ժամը 8 և 4 դիրքից:
- Տրանսպորտային միջոց վարելիս՝ նույնիսկ շրջադարձեր կատարելիս ձեռքերը պահել այս դիրքերում:

Ղեկի կառավարում «ձեռքը ձեռքի վրայով»

Օգտագործեք ղեկի կառավարման այս մեթոդը ցածր արագությամբ շրջադարձի, կայանման կամ սահից վերականգնվելու ժամանակ: Այս մեթոդն օգտագործելու համար՝

- Սկսել ձեռքերի ժամը 9 և 3 կամ ավելի ցածր ժամը 8 և 4 դիրքից:
- Մի ձեռքով հրեք ղեկը:
- Ձեր մյուս ձեռքով բաց բողեք ղեկը: Անցեք թևի վրայով, որը դեռ պահում է ղեկը, բռնեք ղեկը և ֆաշեք վերև:

Ղեկի կառավարում մեկ ձեռքով

Միայն երկու իրավիճակի դեպքում կարող է մեկ ձեռքով ղեկի կառավարումը պահանջվել՝

- Երբ հետընթաց շարժվելիս շրջադարձ եք կատարում: Ձեռք դիր ղեկի վրա ժամը 12-ի դիրքում: Դա անհրաժեշտ է, քանի որ հնարավոր է հետ շրջվեք Ձեր տեղում՝ տեսնելու, թե ուր եք գնում:
- Երբ Դուք գործի եք դնում տրանսպորտային միջոցի կառավարման համակարգը, որը պահանջում է ֆաշել Ձեր ձեռքը ղեկից:

Մեկ ձեռքով ղեկի կառավարումը խորհուրդ է տրվում միայն սահմանափակ իրավիճակներում: Ձեր տրանսպորտային միջոցը կառավարելու համար կարևոր է երկու ձեռքերը հնարավորության դեպքում պահել ղեկին:

## ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐ, ՁԱՅՆԱՅԻՆ ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐ Լ ՑՈՒՍԱԿՊՏԵՐՆԵՐ

Ձեր ազդանշանները, ձայնային ազդանշանները և ցուլապատերները կարևոր են այլ վարորդների հետ հաղորդակցվելու և հանապահիչ տեսնելու համար:

### Ազդանշանում

Միշտ ազդանշան տվեք, երբ բրջադարձ եք կատարում, երթևեկության գոտին փոխում, դանդաղեցնում կամ կանգ առնում: Ազդանշանումը թույլ է տալիս, որ մյուս վարորդները, մտոցիկլավարները, հեծանվորդները և հետիոտներն իմանան ձեր մտադրության մասին:

Կարող եք ազդանշանել՝ օգտագործելով ձեռքի և քիկի դիրքերը կամ ձեր տրանսպորտային միջոցի ազդանշանային լույսերը: Արևի պայծառ լույսի պատճառով ձեր ազդանշանային լույսերի դժվար տեսանելիության դեպքում օգտագործեք նաև նկարում ցույց տրված ձեռքի և քիկի ազդանշանները:


Ձախ բրջադարձ



Աջ բրջադարձ



Դանդաղեցնել կամ կանգ առնել



Մտոցիկլավարները հաճախ են ձեռքով ազդանշան տալիս, որպեսզի իրենք ավելի տեսանելի լինեն: Հեծանվորդները կարող են ազդանշանել բրջադարձի մասին՝ ձեռքի ուղիղ պարզած՝ ցույց տալու նախատեսվող բրջադարձի ուղղությունը:

Դուք պետք է ազդանշան տաք՝

- Ոչ պակաս, քան 100 ֆուտ մինչև բրջադարձը:
- Ամեն անգամ երթևեկության մի գոտուց մյուսն անցնելուց առաջ: Նաև հայե՛ք հայելիների մեջ, ուսի վրայով հայացք գցե՛ք և ստուգե՛ք ձեր կույր գոտին:
- Արագընթաց մայրուղու վրա մի գոտուց մյուսն անցնելուց առնվազն 5 վայրկյան առաջ:
- Մայրքգրի մոտենալուց կամ դրանից հեռանալուց առաջ:
- Նույնիսկ եթե բրջակայքում այլ տրանսպորտային միջոց չե՛ք տեսնում: Ձեր բրջադարձային ազդանշանի օգտագործումը դարձրե՛ք սովորություն: Դա կարող է օգնել խուսափել բախումներից նույնիսկ այն իրավիճակներում, երբ կարծում եք, որ անվտանգ եք:
- Եթե մտադիր եք բրջադարձ կատարել խաչմերուկն անցնելուց հետո: Եթե դուք ազդանշան տաք ժամանակից շուտ, ապա այլ վարորդներ կարող են մտածել, որ խաչմերուկում նախատեսում եք բրջադարձ կատարել: Արդյունքում նրանք կարող են դուրս գալ ձեր առջևից: Սկսե՛ք ազդանշան տալ, երբ դուք գրեթե խաչմերուկում եք:

Մի մոռացե՛ք անջատել ձեր ազդանշանը, երբ այլևս դրա կարիքը չկա:

## Զայնային ազդանշանի կիրառումը

Դուք կարող եք ձայնային ազդանշան տալ՝ տեղեկացնելու մյուս վարորդներին, որ դուք այնտեղ եք, կամ զգուշացնելու վտանգի մասին: Կարևոր է իմանալ, թե երբ պետք է օգտագործել ձայնային ազդանշանը, և երբ՝ ոչ: Ավելի անվտանգ է դանդաղեցնել ընթացքը կամ կանգ առնել, քան ձայնային ազդանշան տալ:

Զայնային ազդանշան տվե՛ք՝

- Խուսափելու բախումներից (անհրաժեշտության դեպքում):
- Զգուշացնելու մեկ այլ վարորդի վտանգի մասին:
- Տեղեկացնելու մոտեցող երթևեկությանը նեղ լեռնային հանապարհների վրա, որտեղ չեք կարող տեսնել հանապարհը առնվազն 200 ֆուտ հեռավորության վրա:

Զայնային ազդանշան մի տվե՛ք՝

- Հորդորելու դանդաղաժամ վարորդին կամ հեծանվորդին ավելի արագ շարժվել կամ դուրս գալ ձեր հանապարհից: Վարորդը կամ հեծանվորդը կարող են չկարողանալ անվտանգ ավելի արագ գնալ:
- Այլ վարորդներին նախազգուշացնելու, որ նրանք սխալ են գործել: Ձեր ձայնային ազդանշանից նրանք կարող են նոր սխալներ թույլ տալ և պատասխանել նույն կերպ:
- Արտահայտելու գայությունը:
- Զայնային ազդանշան տալու հետևանքներին, հեծանվորդներին կամ մոտոցիկլավարներին, եթե դա անհրաժեշտ չէ բախումից խուսափելու համար: Հիշե՛ք, որ ձեր ձայնային ազդանշանը տրանսպորտային միջոցից դուրս շատ ավելի բարձր է հնչում:

## Ձեր ցուլապտերների կիրառումը՝

Ձեր տրանսպորտային միջոցի ցուլապտերներն օգնում են ձեզ տեսնել, թե ինչ կա Ձեր առջևում: Դրանք նաև այլ վարորդներին համար հեշտացնում են ձեր տրանսպորտային միջոցի տեսանելի լինելը:

Միացրե՛ք ցուլապտերները՝

- Երբ տեսնելու համար շատ մութ է: Օգտագործե՛ք Ձեր ցուլապտերները, եթե 1000 ֆուտ հեռավորությունից չեք կարող հստակ հանաչել մարդուն կամ վառարանի միջոցը:
- Սկսած մայրամուտից 30 րոպե անց մինչև արևածագից 30 րոպե առաջ:
- Անբարենպաստ եղանակին: Եթե անձրևի կամ ձյան պատհառով անհրաժեշտ է օգտագործել ձեր ապակու մաքրիչները, ապա դուք պետք է միացնե՛ք ձեր ցուլապտերներին մոտարձակ լույսերը:
- Երբ պայմանները (ինչպիսիք են ամպերը, փոշին, ծուխը կամ մռայլությունը) խանգարում են ձեզ տեսնել այլ տրանսպորտային միջոցներ:
- Փոքր գյուղական կամ լեռնային հանապարհներին կամ թունելներում նույնիսկ արևոտ օրերին:
- Երբ կարգավարիչ (ապիտակ) հանապարհային նշանը հուշում է, որ ցուլապտերները պետք է միացված լինեն:
- Օգնելու այլ վարորդներին տեսնել Ձեր տրանսպորտային միջոցը, հատկապես երբ հորիզոնում արևը ցածր է:

## Զեր վթարային թարթող լույսերի օգտագործումը

Եթե առջևում բախում կամ վտանգ է տեսնում, նախագգուցադրեք Զեր հետևում գտնվող վարորդներին՝ օգտագործելով այս մեթոդներից մեկը (կամ բոլորը)՝

- Միացրեք վթարային թարթող լույսերը:
- Թեթևակի սեղմեք ձեր արգելակի ոտնակը երեք-չորս անգամ:
- Դանդաղեցնելիս և կանգ առնելիս օգտագործեք ձեռքի ազդանշան:

Երբեք կանգ մի առեք հանապարհի վրա, բացի այն դեպքերից, երբ դա արվում է ապահով մնալու կամ օրենքին ենթարկվելու նկատառումներով:

Եթե անհրաժեշտ է կանգ առնել, սկսեք տրանսպորտային միջոցը արգելակել նախապես՝ ի ազդանշան ձեզ հետևող տրանսպորտային միջոցներին: Եթե անհրաժեշտ է կանգ առնել տրանսպորտային միջոցի խնդրի պատճառով՝

- Մնացած վարորդներին մի բանի անգամ զգուցացրեք, որ դուրս եք գալիս:
- Եթե չեք շարժվում, միացրեք Զեր վթարային թարթող լույսերը: Եթե ձեր տրանսպորտային միջոցը չունի վթարային թարթող լույսեր, օգտագործեք ձեր շրջապարձային ազդանշանները:
- Հնարավորության դեպքում դուրս եկեք հանապարհից՝ հեռու ամբողջ երթևեկությունից:
- Եթե չեք կարող ամբողջապես երթևեկելի մասից դուրս գալ, կանգնեք այնպիսի մի տեղ, որ մարդիկ կարողանան տեսնել ձեզ և ձեր տրանսպորտային միջոցը հետևի կողմից:
- Մի կանգնեք հենց բլրի կամ ուլտրանի վրա: Մյուս վարորդները կարող են ժամանակին չտեսնել ձեր տրանսպորտային միջոցը, որպեսզի խուսափեն բախումից:
- Անվտանգ լինելու դեպքում բարձրացրեք ծալովի քափածածկը՝ վթարային կանգառի մասին ազդանշանելու համար:
- Տեղադրեք վթարային լուսազդանշաններ կամ եռանկյունիներ ձեր տրանսպորտային միջոցի ետևում 200–300 ֆուտ հեռավորության վրա (եթե ունեք): Դա վարորդներին ժամանակ է տալիս անհրաժեշտության դեպքում փոխել գոտիները: Լուսազդանշաններն օգտագործելիս շատ զգույշ եղեք: Դրանք կարող են հրդեհի պատճառ դառնալ, հատկապես երբ գտնվում են դյուրավառ հեղուկների մերձակայքում:
- Զանգահարեք հանապարհային շտապ օգնության ծառայություն, հետևեք վերը նշված ցուցումներին և մնացեք ձեր տրանսպորտային միջոցում, մինչև օգնությունը կհասնի:



Բռնեք ձերքը  
գնացեք առանց վազելու





# ԲԱԺԻՆ 9. Ճանապարհներով երթևեկումը

## ԵՐԹԼԵԿՈՒԹՅԱՆ ԳՈՏԻՆԵՐ

Երթևեկության գոտին հանապարհի հատված է՝ նախատեսված մեկ գծով երթևեկության համար: Կան մի քանի տարբեր տեսակի գոտիներ:

### Գոտու գծանշումներ

Ճանապարհի մակերևույթի վրա արվող գծանշումները վարորդներին օգնում են իմանալ, թե հանապարհի որ հատվածն օգտագործեն, և հասկանալ հանապարհային երթևեկության կանոնները: Գծերի գույներն ու նախշերը տարբեր նշանակություն ունեն:

Մեկ հոծ դեղին գիծ


Մեկ հոծ դեղին գիծը նշում է երկկողմանի երթևեկությամբ հանապարհի կենտրոնը: Մի անցեք դեպի մոտեցող երթևեկություն այս գծի վրայով:

Մի վազանցեք ձեռք առջևում ընթացող տրանսպորտային միջոցը, եթե ձեր ուղղությամբ երթևեկության միայն մեկ գոտի կա, և հանապարհի ձեռք կողմում կա հոծ դեղին գիծ:

Կրկնակի հոծ դեղին գծեր

Մի անցեք կրկնակի հոծ դեղին գծերի վրայով: Երբեք մի շարժվեք այս գծերից ձախ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ՝

- Ընթանում եք high-occupancy vehicle (HOV) (ուղևորատար տրանսպորտային միջոցների) գոտով, որը հատուկ մուտք ունի ձախ կողմում:
- Շինարարական կամ այլ տեսակի նշանների միջոցով ցուցում եք ստանում շարժվելու հանապարհի մյուս կողմով, քանի որ ձեր կողմը փակված կամ արգելափակված է:
- Ձախ շրջադարձ եք կատարում մեկ գույգ կրկնակի դեղին գծերի վրայով, որպեսզի մուտք գործեք մերձատար ուղի կամ դուրս գաք մերձատար ուղուց կամ մտնեք մասնավոր հանապարհ կամ դուրս գաք մասնավոր հանապարհից կամ կատարեք հետադարձ:



Միմյանցից 2 կամ ավելի ֆուտ հեռավորության վրա գտնվող և երկու շարժով ձգվող կրկնակի հոծ գծերը համարվում են արգելի: Մի շարժվեք այս արգելի վրայով, մի հատեք այն, այդտեղից ձախ շրջադարձ կամ հետադարձ մի կատարեք, բացի այն տեղերից, որտեղ հատուկ բացվածքներ են արված:

### Ընդհատվող դեղին զիծ

Ընդհատվող դեղին զիծը ցույց է տալիս, որ կարելի է վագանց կատարել, եթե ընդհատվող զիծը ձեր շարժման գոտուն կից է: Անցե՛ք միայն անվտանգ ժամանակ:

### Մեկ հոծ սպիտակ զիծ

Մեկ հոծ սպիտակ զծով նշվում են երթևեկության գոտիները, որոնք ընթանում են նույն ուղղությամբ: Դա ներառում է միակողմանի փողոցները:

### Կրկնակի հոծ սպիտակ զծեր

Կրկնակի հոծ սպիտակ զծերը նշում են երթևեկության գոտու արգելապատը սովորական օգտագործման և նախընտրելի օգտագործման գոտու, օրինակ՝ **carpool** գոտու միջև: Հնարավոր է, որ տեսնե՛ք կրկնակի հոծ սպիտակ զծերը նաև արագընթաց մայրուղու վրա կամ մոտ՝ ուղեմուտքերում և իջատեղերում: Երբեք մի փոխե՛ք գոտին կրկնակի հոծ սպիտակ զծերի վրայով: Սպասե՛ք, մինչ կտեսնե՛ք մեկ ընդհատվող սպիտակ զիծ:

### Ընդհատվող սպիտակ զիծ

Ընդհատվող սպիտակ զծերն առանձնացնում են երթևեկության գոտիները նույն ուղղությամբ երկու կամ ավելի գոտիներ ունեցող հանապարհների վրա:


### Երթևեկության գոտու գծանշումների վերջը

Ավարտվող արագընթաց մայրուղու և փողոցային գոտիները սովորաբար նշվում են խոշոր ընդհատվող զծերով: Եթե շարժվում ե՛ք այդպիսի ընդհատվող զծերով նշված գոտով, պատրաստ եղե՛ք արագընթաց մայրուղուց դուրս գալուն կամ ձեր զբաղեցրած գոտու շուտով վերջանալուն: Հետևե՛ք հանապարհային նշանին, որը հրահանգում է ավտոմայրուղուց դուրս գալ կամ փոխել գոտին:



### Ճանապարհը զիջելու զծեր

Զիջման զիծը եռանկյունների հոծ սպիտակ զիծ է, որը ցույց է տալիս, թե որտեղ պետք է մոտեցող տրանսպորտային միջոցները զիջեն կամ կանգ առնեն: Եռանկյունները ուղղված են դեպի մոտեցող տրանսպորտային միջոցները: Զիջման զիծը հայտնի է նաև որպես «ենածկան աստաններ»:



## Երթևեկության գոտու ընտրությունը

Երթևեկության գոտիները հաճախ համարակալվում են: Ձախակողմյան կամ «արագ» գոտին կոչվում է «1-ին գոտի»: «1-ին գոտուց» աջ ընկած գոտին կոչվում է «2-րդ գոտի»: Հետո «3-րդ գոտի» և այլն:



Համարակալված երթևեկության գոտիների օրինակ:

Ահա գոտի ընտրելու մի փանի խորհուրդ՝

- Վազանցելու կամ ձախ Երջադարձ կատարելու համար օգտագործել ձախ գոտին:
- Երթևեկություն մուտք գործելու կամ երթևեկությունից դուրս գալու համար օգտագործել աջ գոտին:

## Երթևեկության գոտիների փոփոխումը

Դուք կարող եք փոխել գոտիները, երբ՝

- Մի երթևեկության գոտուց շարժվում եք մեկ այլ գոտի:
- Ուղեմուտքից մտնում եք արագընթաց մայրուղի:
- Արագընթաց մայրուղուց դուրս եք գալիս:
- Ճանապարհ եք մտնում մայրթեզրից կամ համալիզերից:

Նախֆան գոտին փոփոխելը՝

- Ազդանշան ավել:
- Նայեք ձեր բոլոր հայելիների մեջ:
- Ստուգեք երթևեկության առկայությունն ու վիճակը ձեր ետևից ու կողքից:
- Նայեք ձեր ուսի վրայով այն ուղղությամբ, որտեղ նախատեսում եք շարժվել՝ համոզվելու համար, որ գոտին ազատ է:
- Ստուգեք ձեր կույր գոտին այլ տրանսպորտային միջոցների, մոտոցիկլավարների և հեծանվորդների համար:
- Համոզվեք, որ հաջորդ գոտում ձեր տրանսպորտային միջոցի համար բավարար տարածություն կա:

Հնարավորինս երկար մնացեք միևնույն գոտում: Գոտիները հաճախակի մի փոխել: Վերջին բոլորի գոտու կամ ուղղության փոփոխությունները կարող են բախումներ առաջացնել: Եթե արդեն խաչմերուկ եք մտել, շարունակեք առաջ շարժվել: Եթե սկսում եք Երջադարձ կատարել, շարունակեք և ավարտեք Երջադարձը: Եթե չեք հասցրել Երջադարձ կատարել, շարունակեք հանապարհն այնքան, մինչև կարողանաք անվտանգ և օրինական Երջադարձ կատարել:

## Գոտու տեսակները

### Վազանցի գոտիներ

Բազմազոտի հանապարհի վրա վազանցի գոտին կենտրոնի բաժանաբարին ամենամոտ գտնվող գոտին է և օգտագործվում է այլ տրանսպորտային միջոցներին վազանցելու համար: Այն հայտնի է հաև որպես արագընթաց գոտի, քանի որ այն օգտագործվում է ավելի արագ շարժվող երթևեկության կողմից:

Վազանցելու մասին ավելին դուք կհմանաք այս բաժնում ավելի ուշ:

Carpool կամ high-occupancy vehicle (HOV) գոտի:

HOV գոտին հատուկ գոտի է, որը նախատեսված է միայն carpool-ների, ավտոբուսների, մոտոցիկլետների կամ տարբերիչ հեան ունեցող ցածր արտանետումներով տրանսպորտային միջոցների համար: HOV գոտին օգտագործելու համար նշվածներից մեկը պետք է կիրառվի՝



- Ձեր տրանսպորտային միջոցում ունեք որոշակի թվով մարդիկ: Ուղեմուտֆի մոտ կամ հանապարհի երկայնքով կլինեն նշաններ, որպեսզի ձեզ տեղեկացնեն մարդկանց նվազագույն քանակի մասին: Նշանները հուշում են հաև այն օրերն ու ժամերը, երբ գործում են carpool/HOV կանոնները:
- Դուք վարում եք ցածր կամ գրոյական արտանետումներով տրանսպորտային միջոց: Դուք պետք է ցուցադրեք DMV-ի կողմից թողարկված հատուկ հեան:
- Դուք մոտոցիկլետ եք վարում (եթե այլ բան սահմանված չէ):

Ճանապարհի մակերևույթը HOV գոտիներում գծանշված է շեղանկյան հեանով և «Carpool Lane» բառերով: HOV գոտի մտնելու կամ գոտուց դուրս գալու համար երբեք մի հատեք կրկնակի հոծ գծերը՝ բացառությամբ հատուկ մուտֆի և ելֆի համար նախատեսված վայրերում:


### Ձախ Երջագարձի կենտրոնական գոտիներ

Ձախ Երջագարձի կենտրոնական գոտին գտնվում է երկկողմանի փողոցի մեջտեղում: Երկու կողմերից էլ նշվում է երկու ներկված գծերով: Ներքին գիծն ընդհատվող է, իսկ արտաքինը՝ հոծ: Օգտագործեք ձախ Երջագարձի կենտրոնական գոտին՝ նախապատրաստվելու և ձախ Երջագարձ կամ հակադարձ կատարելու համար: Սա սովորական երթևեկության գոտի կամ վազանցի գոտի չէ: Ձախ Երջագարձի կենտրոնական գոտում կարելի է շարժվել ընդամենը 200 ֆուտ:

Այս գոտուց ձախ Երջագարձ կատարելու համար՝

- Ձախ Երջագարձի կենտրոնական գոտում փնտրեք դեպի ձեզ ընթացող այլ տրանսպորտային միջոցներ:
- Ազդանշան տվեք:
- Նայեք ձեր ուսի վրայով՝ ձեր կույր գոտին ստուգելու համար:

- Ամբողջովին միաձուլվե՛ք կենտրոնական ձախ շրջադարձային գոտուն, որպեսզի չարգելափակե՛ք երթևեկությունը:
- Թե՛քվե՛ք, երբ անվտանգ է:



Երկրորդական փողոցից կամ մերձատար ուղուց ձախ շրջադարձ կատարելիս ազդանշան ավե՛ք և սպասե՛ք, մինչև շրջադարձն անվտանգ լինի: Սյնուհետև մտե՛ք

ձախ շրջադարձի կենտրոնական գոտի: Երթևեկության հոսքի մեջ մտե՛ք միայն այն ժամանակ, երբ դա անվտանգ է:

Լրացուցիչ տարածքներ կամ գոտիներ:

Որոշ երկգոտի հանապարհներ ունեն հատուկ լրացուցիչ տարածքներ կամ գոտիներ: Դրանք սովորաբար նշվում են: Ձեր հետևից եկող տրանսպորտային միջոցներին վազանցի հնարավորություն տալու համար շարժվե՛ք դեպի այս տարածքները:



Դուք պետք է օգտագործե՛ք լրացուցիչ տարածքը կամ գոտին, որպեսզի թույլ տա՛ք այլ տրանսպորտային միջոցներին վազանցել, երբ դուք դանդաղ ե՛ք երթևեկում երկգոտի հանապարհով, որտեղ վազանցն անվտանգ չէ, և ձեզ հետևում է **5** կամ ավելի տրանսպորտային միջոց:

Հեծանվային գոտիներ

Հեծանվային գոտիները նախատեսված են միայն հեծանվորդների համար և գտնվում են տրանսպորտային միջոցների երթևեկությանը զուգահեռ: Դրանք սովորաբար նշվում են մեկ հոծ սպիտակ գծով և նշաններով: Դրանք երբեմն ներկվում են վառ կանաչ գույնով, որպեսզի ավելի տեսանելի լինեն: Խաչմերուկի մոտ հոծ գիծը կդառնա ընդհատվող:

Գոյություն ունեն հեծանվային գոտիների և գծանշումների բազմաթիվ տեսակներ՝

- Հեծանվային գոտի՝ Տեղակայված է տրանսպորտային միջոցների երթևեկությանը հարող փողոցների երկայնքով: Սովորաբար նշվում է մեկ հոծ սպիտակ գծի միջոցով, որը խաչմերուկի մոտ դառնում է ընդհատվող գիծ:
- Բուֆերացված հեծանվային գոտի՝ Նշվում է չափերտային կամ անկյունագծային գծանշամբ երթևեկությունից և փողոցային կայանատեղերից ավելի մեծ տարանջատում ապահովելու համար:
- Հեծանվային երթուղի՝ Նշվում է հեծանվային երթուղու նշաններով և (կամ) համատեղ օգտագործման հանապարհի գծանշամբ՝ ցույց տալու տրանսպորտային միջոցների հետ փողոցներում համատեղ երթևեկող հեծանվորդների նախընտրելի երթուղին:
- Հեծանվային բուլվար՝ Առաջնահերթ է հեծանվային երթևեկությունը տրանսպորտային երթևեկի հետ համատեղ փողոցներում:

- Առանձնացված հեծանվային ուղի՝ Նախատեսված է հեծանվորդների բացառիկ օգտագործման համար: Տրանսպորտային միջոցների երթևեկությունից ֆիզիկապես առանձնացված է: Հայտնի է նաև որպես հեծանվուղի կամ պաշտպանված հեծանվային գոտի: Բաժանումը կարող է ներառել ճեղք սյուներ, ուղեկամուրջ, ոչ ճեղք սյուներ արգելիներ կամ փոռոցային կայանատեղիներ:
- Համատեղ երթևեկությամբ ֆանապարհի հեծանվային գծանուններ (համատեղ հեծանվատրանսպորտային գոտի)՝ Ցույց են տալիս, որ հեծանվորդները կարող են զբաղեցնել գոտին: Պատշաճ կերպով օգտագործվելու դեպքում այդ գծանունները նաև օգնում են հեծանվորդներին անվտանգ դիրք պահպանել երթևեկության գոտում:



Հեծանվորդների և ավտոտրանսպորտի համար ընդհանուր գոտու օրինակ:

Հեծանվով երթևեկելը արգելված է, քանի դեռ՝

- Չե՛ք կայանում (որտեղ թույլատրվում է):
- Չե՛ք մտնում ֆանապարհ կամ դուրս գալիս:
- Երջադարձ չե՛ք կատարում խաչմերուկից մինչև 200 ֆուտ հեռավորության վրա:

**ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝** Հեծանվային գոտի մտնելուց առաջ ստուգե՛ք ձեր կույր գոտին (գոտիները):

Եթե շարժչային հեծանվով ե՛ք վարում, զգուշացե՛ք, որպեսզի խուսափե՛ք այլ հեծանվորդներից: Երթևեկե՛ք ողջամիտ արագությամբ և մի վտանգե՛ք այլ հեծանվորդների անվտանգությունը:


**Երջադարձ**

Ապահով և սահուն երջադարձ կատարելը վարորդական կարևորագույն հմտություններից մեկն է, որը դու՛ք պետք է սովորե՛ք:

**Աջ երջադարձ**

Աջ երջադարձ կատարելու համար՝

- Երթվե՛ք դեպի ֆանապարհի աջ եզր:
  - Դու՛ր կարող ե՛ք տրանսպորտային միջոց վարել հեծանվային գոտում, բայց սպասել ներս մտնելուն, մինչև երջադարձից 200 ֆուտ հեռավորության վրա լինե՛ք: Ստուգե՛ք հեծանվորդներին ձեր կույր գոտում:



Աջ երջադարձի օրինակ:

- Ուշադիր եղե՛ք՝ նկատելու համար այն հեծանվորդներին և մոտոցիկլավարներին, որոնք կարող են հայտնվել ձեր տրանսպորտային միջոցի և մայրեզրի միջև:
- Սկսե՛ք ազդանշանել երջադարձից 100 ֆուտ առաջ:

- Հետ նայե՛ք աջ ուսի վրայով և նվազեցրե՛ք արագությունը:
- Կանգ առե՛ք սահմանային գծի ետևում (հանապարհի սպիտակ գծեր, որոնք ցույց են տալիս, թե որտեղ կանգ առնել): Եթե սահմանագիծ չկա, կանգ առե՛ք նախֆան հետխոտնային անցում մտնելը: Եթե հետխոտնային անցում չկա, կանգ առե՛ք նախֆան խաչմերուկ մտնելը:
- Նայե՛ք աջ ու ձախ և կատարե՛ք բջջադարձն այն ժամանակ, երբ դա անվտանգ է: Մի կատարե՛ք մեծ շառավղով բջջադարձ՝ մտնելով մեկ այլ գոտի:
- Երջադարձն ավարտե՛ք աջ գոտում:

Շարունակե՛ք կարգալ հատուկ իրավիճակներում աջ թեփվելու մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար:


**Աջ բջջադարձ կարմիր լույսի ներքո**  
 Դուք կարող ե՛ք աջ բջջադարձ կատարել կարմիր լույսի ներքո, քանի դեռ չկա «No turn on red» նշանը: Հետևե՛ք նույն ֆայլերին, ինչ սովորական աջ բջջադարձի ժամանակ:

**Աջ բջջադարձ կարմիր սլաֆի ներքո**  
 Կարող ե՛ք չբջջվել, եթե կանգ ե՛ք առել կարմիր սլաֆի լույսի ներքո: Սպասե՛ք մինչև լույսի կանաչ դառնալը՝ նախֆան բջջադարձ կատարելը:

**Աջ բջջադարձ հանրային տարանցիկ ավտոբուսի գոտում**  
 Արգելված է հասարակական տարանցիկ ավտոբուսների համար նախատեսված տարածքում տրանսպորտային միջոց վարել, կանգնեցնել, կայանել կամ թողնել: Կտեղադրվեն հանապարհային նշաններ, որոնք ցույց կտան, որ գոտին «միայն ավտոբուսների համար» է: Այնուամենայնիվ, կարող ե՛ք հատել ավտոբուսի գոտին՝ աջ բջջադարձ կատարելու համար:

**Կատարե՛ք աջ բջջադարձ դեպի հատուկ գոտով հանապարհ**

Աջ բջջադարձի հատուկ գոտին չի միաձուլվում մեկ այլ գոտու հետ և թույլ է տալիս կատարել «ազատ աջ բջջադարձ»՝ առանց սկզբում կանգ առնելու: Դուք կարող ե՛ք կատարել բջջադարձ, նույնիսկ եթե լուսացույցի լույսը կարմիր է այն տրանսպորտային միջոցների համար, որոնք անցնում են ուղիղ խաչմերուկով: Եթե աջ բջջադարձի գոտու աջ մայրեզրին կա հանապարհային լուսացույց կամ նշան, ապա պետք է հետևե՛ք այդ լուսացույցի կամ նշանի ցուցումներին: Երջադարձ կատարելիս միշտ զիջե՛ք հետխոտնային անցումի հետխոտնային:




Եթե ազատ աջ բջջադարձերը թույլատրելի չլինեն, այդ մասին նշան կլինի:

## Չախ Երջադարձ

Չախ Երջադարձ կատարելու համար՝

- Երբ ժամկետ դեպի կենտրոնի բաժանարարը կամ ձախ Երջադարձի գոտի:
- Սկսեք ազդանշանել Երջադարձից 100 ֆուտ առաջ:
- Հետ նայեք ձախ ուսի վրայով և նվազեցրեք արագությունը:
- Կանգ առեք սահմանագծին չհասած: Եթե սահմանագիծ չկա, կանգ առեք նախֆան հետխոտնային անցում մտնելը: Եթե հետխոտնային անցում չկա, կանգ առեք նախֆան խաչմերուկ մտնելը:
- Նայեք ձախ, աջ և հետո նորից ձախ:
- Կատարեք Երջադարձ անվտանգ լինելու դեպքում:



Չախ Երջադարձի օրինակ:

Չախ թեփվելու դեկը շատ շուտ մի պտտեք մտնելու հանդիպակաց տրանսպորտային միջոցների գոտի: Դա հայտնի է որպես «անկյուն կտրել»: Անիվներն ուղիղ պահեք այնքան ժամանակ, մինչև Երջադարձ կատարելն անվտանգ լինի: Եթե անիվները դեպի ձախ թեփված լինեն, և հետևից ձեզ որևէ տրանսպորտային միջոց հարվածի, դուք կարող եք հայտնվել հանդիպակաց երթևեկության մեջ:

Չախ Երջադարձ կարմիր լույսի ներքո

Դուք կարող եք ձախ թեփվել կարմիր լույսի ներքո միայն այն ժամանակ, երբ Երջադարձ եք կատարում միակողմանի փողոցից դեպի (ձախ Երբ ժամկետ) միակողմանի փողոց: Ստուգեք՝ համոզվելու համար, որ չկա Երջադարձն արգելող որևէ նշան:

Ձիջեք մյուս տրանսպորտային միջոցներին, հետխոտներին կամ հեծանվորդներին, ովքեր ունեն կանաչ լույս: Նայեք աջ ու ձախ և կատարեք Երջադարձն այն ժամանակ, երբ դա անվտանգ է:



## Հետադարձեր

Հետադարձն այն է, երբ ձեր տրանսպորտային միջոցը շրջում է՝ հետ գնալու ձեր եկած ուղղությամբ: Հետադարձ կատարելու համար ազդանշան տվե՛ք և զբաղեցրե՛ք ամենաձախ գոտին կամ ձախ շրջադարձի կենտրոնական գոտին:

Հետադարձ թույլատրվում է կատարել՝

- Կրկնակի դեղին գծի վրայով:
- Բնակելի թաղամասում՝
  - Եթե 200 ֆուտի սահմաններում ձեզ մոտեցող տրանսպորտային միջոցներ չկան:
  - Երբ ֆանադարիային նշանը, լույսը կամ լուսացույցը ձեզ պատշտանում է մոտեցող տրանսպորտային միջոցներից:
- Խաչմերուկում լուսացույցի կանաչ լույսի կամ կանաչ սլաֆի տակ, եթե ֆանադարիի վրա չկա «No U-turn» նշան:
- Բաժանարար գոտով երկկողմանի ֆանադարիի վրա միայն այն դեպքում, երբ կենտրոնական բաժանարար գծի վրա գոյություն ունի բացվածք:


Երբեք հետադարձ մի կատարե՛ք՝

- Այնտեղ, որտեղ ֆանադարիի վրա տեղադրված է «No U-turn» նշանը:
- Երկաթուղային գծանցների վրա կամ դրանց մոտակայքում:
- Բաժանարար գոտով երկկողմանի ֆանադարիի վրա՝ հատելով բաժանարար գիծը, ֆամփեզրը, հողի շերտը կամ երկու գույգ կրկնակի գծերը:
- Երբ դուք յուրաքանչյուր ուղղությամբ հստակաբերելի չե՛ք տեսնում առնվազն 200 ֆուտ հեռավորության վրա՝ ֆանադարիի կորության, բլրի, անձրևի, մառախուղի կամ որևէ այլ պատճառով:
- Երբ այլ տրանսպորտային միջոցներ կարող են բախվել ձեզ:
- Միակողմանի փողոցում:
- Հրժեջ կայանի դիմաց: Հետադարձի համար երբեք մի օգտագործե՛ք հրժեջ կայանի ուղեմուտքը:
- Գործարար շրջաններում՝ ներառյալ եկեղեցիներով, բնակարաններով և հասարակական շենքերով (բացառությամբ դպրոցների) տարածքներում: Այս տարածքներում հետադարձ կատարե՛ք միայն խաչմերուկներում, եթե որևէ նշան այն չի արգելում, կամ այնտեղ, որտեղ հետադարձերի համար հատուկ բացվածքներ կան:

## Երջագարձների օրինակներ


Ծանոթացե՛ք տարբեր տեսակի երջագարձերին: Նկարներում տրանսպորտային միջոցների թվերը վերաբերում են օրինակի թվին:

1. Ձախ երջագարձ երկկողմանի երթևեկույթյան փողոցից: Երջագարձը սկսե՛ք ձախ գոտուց, որն ամենամոտն է փողոցի կենտրոնին: Եթե ձախ երջագարձի կենտրոնական գոտի կա, երջագարձը կատարե՛ք այդ գոտուց: Ավարտե՛ք երջագարձը ձախ գոտում, որն ամենամոտն է գտնվում փողոցի կեսին և որի երթևեկույթյան ուղղությամբ համընկնում է Ձեր երթևեկույթյան ուղղության հետ: Որոշ իրավիճակներում կարող են լինել նշաններ կամ սլաֆներ, որոնք ցույց են տալիս, որ կարող ե՛ք ձախ երջագարձ կատարել ցանկացած գոտուց:




2. Աջ երջագարձ: Երջագարձը սկսե՛ք և ավարտե՛ք աջակողմյան մայրեզրին ամենամոտ գոտում: Մի կատարե՛ք մեծ շառավղով երջագարձ՝ մտնելով մեկ այլ երթևեկույթյան գոտի: Ուշադիր եղե՛ք՝ նկատելու այն հետիտներին, մոտոցիկլետավարներին և հեծանվորդներին, որոնք գտնվում են ձեր տրանսպորտային միջոցի և մայրեզրի միջև: Երբեմն հանապարհային նշանները կամ մայրի գծանշումները թույլ են տալիս աջ երջագարձ կատարել մեկ այլ գոտուց: Այն ցույց է տրված պատկերում պատկերված աստղանիշի միջոցով (\*):

3. Ձախ երջագարձ երկկողմանի երթևեկույթյամբ փողոցից դեպի միակողմանի փողոց: Երջագարձը սկսե՛ք այն գոտուց, որն ամենամոտն է փողոցի կենտրոնին: Եթե երթևեկույթյան ձեր ուղղությամբ կա երե՛ք կամ ավելի գոտի, դուք կարող ե՛ք ձեր երջագարձն ավարտել ցանկացած գոտում, որն անվտանգ է, ինչպես ցույց են տալիս սլաֆները:




4. Ձախ երջագարձ միակողմանի փողոցից դեպի երկկողմանի փողոց: Երջագարձը սկսե՛ք ամենաձախ գոտուց: Ավարտե՛ք երջագարձը ձախ գոտում, որն ամենամոտն է գտնվում փողոցի կեսին և որի երթևեկույթյան ուղղությամբ համընկնում է Ձեր երթևեկույթյան ուղղության հետ:


5. Ձախ բրջադարձ միակողմանի փողոցից դեպի միակողմանի փողոց: Երջադարձը սկսե՛ք ամենաձախ գոտուց: Ուշադիր եղե՛ք՝ նկատելու այն հետխոտներին, մոտոցիկլետավարներին և հեծանվորդներին, որոնք գտնվում են ձեր տրանսպորտային միջոցի և մայրեգրի միջև: Հեծանվորդներն օրինականորեն կարող են օգտագործել ձախ բրջադարձի գոտին իրենց ձախ բրջադարձի համար: Եթե երթևեկության ձեր ուղղությամբ կա երեք կամ ավելի գոտի, դուք կարող ե՛ք ձեր բրջադարձն ավարտել ցանկացած գոտում, որն անվտանգ է, ինչպես ցույց են տալիս պլանները:



6. Աջ բրջադարձ միակողմանի փողոցից դեպի միակողմանի փողոց: Երջադարձը սկսե՛ք ամենաաջ գոտուց: Անվտանգ լինելու դեպքում կարելի է բրջադարձն ավարտել ցանկացած գոտում: Երբեմն հանապարհային նշանները կամ մայրի գծանշումները բույլ են տալիս աջ բրջադարձ կատարել մեկ այլ գոտուց:



7. Երջադարձ T-աձև խաչմերուկում՝ միակողմանի փողոցից դեպի երկկողմանի փողոց: Խաչմերուկով ուղիղ երթևեկությունն ունի երթևեկելու առավելություն: Կարելի է կենտրոնական գոտուց և՛ աջ, և՛ ձախ բրջադարձ կատարել: Զգուշացե՛ք տրանսպորտային միջոցներից, մոտոցիկլետներից, հեծանվորդներից և հետխոտներից:



**Միաձուլում**

Մայրուղով ընթացող տրանսպորտային միջոցներին առավելություն ունեն: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս «Երթևեկության առավելության կանոններ՝ Ով է գնում առաջինը» «Բաժին 10. Ճանապարհային երթևեկության օրենքները և կանոնները» բաժնում:

Մայրուղի մտնելիս ձեզ հարկավոր է՝

- Մտնել երթևեկության արագությամբ կամ մոտ արագությամբ:
- Միաձուլվել մայրուղու երթևեկությանը, երբ դա ապահով լինի: Մի կանգնե՛ք, եթե խիստ անհրաժեշտ չէ:
- Միաձուլվե՛ք բավականաչափ մեծ հեռավորության վրա, որպեսզի ձեր տրանսպորտային միջոցը ապահով կերպով միանա գոտուն: Մի փորձե՛ք խցկվել չափազանց փոքր տարածքի մեջ:
- Օգտվե՛ք հայելիներից և շրջադարձի ազդանշաններից:
- Զգուշացե՛ք ձեր շուրջը գտնվող տրանսպորտային միջոցներից: Երթևեկության գոտիները փոխելուց կամ երթևեկության հոսքին միաձուլվելուց առաջ գլուխը շրջե՛ք և ուսի վրայով արագ ետ նայե՛ք:
- 3 վայրկյանի չափ տարածություն (երեք վայրկյանի կանոն) թողե՛ք ձեր և ձեր առջևից ընթացող տրանսպորտային միջոցի միջև: Համոզվե՛ք, որ անհրաժեշտության դեպքում կկարողանա՛ք անվտանգ կերպով կանգ առնել: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս «Հետապնդումը» «Բաժին 11. Անվտանգ երթևեկություն»:

Եթե ձեզ անհրաժեշտ է անցնել մի ֆանի գոտի, միանգամից անցե՛ք դրանք և ամեն անգամ ստուգե՛ք ձեր կույր գոտիները:

**Ելք**

Մայրուղուց անվտանգ դուրս գալու համար՝

- Իմացե՛ք ձեր ելքը և ուշադիր եղե՛ք, թե երբ է այն մոտենում:
- Եթե նախատեսում ե՛ք փոխել գոտիները, ազդանշան տվե՛ք և նայե՛ք ձեր ուսի վրայով՝ ձեր կույր գոտին ստուգելու համար:
- Միանգամից փոխե՛ք գոտիները՝ մինչև դուրս գալ ելքի համար հարմար գոտի:
- Ելք կատարելիս մոտ հինգ վայրկյան ազդարարե՛ք ձեր մտադրության մասին:
- Համոզվե՛ք, որ դուրս ե՛ք գալիս անվտանգ արագությամբ:

## Երթևեկության հատում կամ մուտք դեպի երթևեկություն

Երթևեկության վիճակից երթևեկությունը հատելիս կամ մտնելիս ազդանշան տվե՛ք և թողե՛ք բավականաչափ մեծ տարածք՝ մյուս տրանսպորտային միջոցների արագությանը հասնելու համար: Կարևոր է խմանալ, թե որքան տարածք է անհրաժեշտ երթևեկության հետ միաձուլվելու, այն հատելու, մուտք գործելու և դուրս գալու համար: Ձեզ անհրաժեշտ է տարածություն, որը մոտավորապես հավասար է հետևյալին՝

- Քաղաքային փողոցի կես բլոկի:
- Մայրուղու կես բլոկի:

Երթևեկության գոտիները հատելիս կամ Երջադարձ կատարելիս համոզվե՛ք, որ ձեր տրանսպորտային միջոցի առջևում կամ կողքերում չկան ձեր ընթացողին խոչընդոտող տրանսպորտային միջոցներ կամ մարդիկ: Հակառակ դեպքում կարող ե՛ք հայտնվել դեպի ձեզ ընթացող հանդիպակաց երթևեկությամբ խաչմերուկում: Նույնիսկ լուսացույցի կանաչ լույսի տակ մի սկսե՛ք հատել խաչմերուկը, եթե ձեր քննադարձը փակող տրանսպորտային միջոցներ կան:

Ձախ թեփվելիս մի ենթադրե՛ք, որ միացրած աջ Երջադարձային ազդանշանով համդիպակաց տրանսպորտային միջոցը Երջադարձ կատարի մինչև ձեզ հասնելը: Վարորդը կարող է պլանավորել Երջադարձ կատարել ձեզանից անմիջապես հետո, կամ հնարավոր է, որ ազդանշանը անգործությամբ է միացրել: Մա հատկապես ճիշտ է մոտոցիկլավորների վերաբերյալ: Հաճախ նրանց լուսազդանշանները ինքնաբերաբար չեն անջատվում: Ընթացքը Եարունակելուց առաջ սպասե՛ք և տեսե՛ք, թե մյուս վարորդը որտեղ է սկսում Երջադարձը:

### ՎԱԶԱՆՑ

Դուք պետք է որոշե՛ք, թե արդյո՞ք բավարար տարածություն ունե՛ք վազանց կատարելու համար, երբ մոտենում ե՛ք՝

- Հանդիպակաց տրանսպորտային միջոցին:
- Բլրի կամ ոլորանի:
- Խաչմերուկ:
- Ճանապարհային արգելի:
- Հեծանվորդի:

Նախքան վազանց կատարելը նայե՛ք ձեր դիմաց՝ քննադարձի ու երթևեկության վիճակը գնահատելու

համար, որը կարող է այլ տրանսպորտային միջոցներին ստիպել մուտք գործել ձեր գոտի: Անցե՛ք միայն անվտանգ ժամանակ:

Արգելվում է վազանցել՝

- Եթե մոտենում ե՛ք բլրի կամ ոլորանի և չե՛ք կարող նկատել այլ մոտեցող տրանսպորտային միջոցների:
- 100 ֆուտ հեռավորության վրա կամ խաչմերուկում, կամբջի վրա, թունելում, երկաթուղու անցումում կամ այլ վտանգավոր տարածքում:
- Խաչմերուկներում և ուղեմուտքներում:

## Ինչպես վազանցել

Վազանցե՛ք այլ տրանսպորտային միջոցներից միայն ձախից: Աջից վազանցը թույլատրվում է միայն այն դեպքում, երբ՝

- Բաց մայրուղին ձեր երթևեկության ուղղությամբ հասակ ունի երկու կամ ավելի երթևեկության գոտի:
- Առջևից ընթացող վարորդը շրջադարձ է կատարում դեպի ձախ, և դուք չպետք է վազանցելու համար դուրս գաք ֆանապարհից: Երբեք ձախից վազանց մի կատարե՛ք, եթե դիմացի տրանսպորտային միջոցը ձախ շրջադարձի ազդանշան է տալիս:
- Դուք գտնվում եք միակողմանի փողոցում:

Վազանց կատարելու համար երբեք դուրս մի եկե՛ք ֆանապարհի ասֆալտապատ կամ բանուկ մասից: Ճանապարհի բանուկ մասի եզրը կարող է սպիտակ գծանշում ունենալ: Ճանապարհի վրա մի վազանցե՛ք: Մի փորձե՛ք վազանցել, մինչև համոզված չլինե՛ք, որ ձեր գոտի վերադառնալու համար բավարար չափով տարածություն ունե՛ք:

Երբ պատրաստվում եք վազանցել բաց մայրուղով՝

- Ազդանշան տվե՛ք, որ պատրաստվում եք վազանցել:
- Նայե՛ք ձեր ուսի վրայով՝ ձեր կույր գոտին ստուգելու համար:
- Շարժվե՛ք դեպի վազանցի գոտի:
- Մեծացրե՛ք արագությունը՝ վազանցելու տրանսպորտային միջոցին:
- Վերադարձե՛ք ձեր նախնական գոտի:

## Երբ ձեզ վազանցում են


Եթե տրանսպորտային միջոցը վազանցում է ձեզ կամ ազդանշան է տալիս է, որ պատրաստվում է վազանցել, թույլ տվե՛ք, որ տրանսպորտային միջոցն անցնի: Պահպանե՛ք գոտում ունեցած ձեր դիրքը: Վազանցից խուսափելու համար մի փորձե՛ք ավելի արագ ընթանալ:

## Զուգահեռ կայանում

Զուգահեռ կայանման ժամանակ դուք կայանում եք հանապարհին զուգահեռ՝ կանգնած այլ կայանված տրանսպորտային միջոցների հետ միասին:

Ահա զուգահեռ կայանման փայերը՝

1. Գտե՛ք կայանատեղ: Փնտրե՛ք ձեր տրանսպորտային միջոցից առնվազն **3 ֆուտով** ավելի երկար տարածություն: Եթե տարածք եք գտնում, միացրե՛ք ձեր ազդանշանը՝ ցույց տալու համար, որ նախատեսում եք կայանել:
2. Շարժվե՛ք տրանսպորտային միջոցի երկայնքով այն տարածքի դիմաց, որտեղ կայանում եք: Ձեր տրանսպորտային միջոցի և ձեր կողմին գտնվող տրանսպորտային միջոցի միջև թողե՛ք մոտ երկու ֆուտ: Կանգնե՛ք այնպես, որ ձեր հետևի բամպերը ձեր կայանատեղիի դիմային հատվածին համապատասխան լինի: Միացրե՛ք ձեր ազդանշանը:
3. Ստուգե՛ք հետևի հայելիներ: Նայե՛ք ձեր ուսի վրայով՝ տեսնելու մոտեցող տրանսպորտային միջոցները: Ոտքը պահե՛ք արգելափակի վրա և տրանսպորտային միջոցը կանգնեցրե՛ք հետընթաց դիրքում:
4. Սկսե՛ք հետընթաց շարժվել: Թե՛եք ձեր անիվը հետ դեպի տարածություն մոտ **45** աստիճան անկյան տակ:
5. Ուղղե՛ք տրանսպորտային միջոցը: Սկսե՛ք դեկանիվը պտտել և հեռանալ եզրաֆարից, երբ հետևի անիվը գտնվում է եզրաֆարից **18** դյույմ հեռավորության վրա: Ուղղվելու համար գուցե հարկ լինի առաջ ու հետ ֆեշել: Հիմա ձեր տրանսպորտային միջոցը պիտի լինի եզրաֆարին զուգահեռ և եզրաֆարից մինչև **18** դյույմ հեռավորության վրա:
6. Տեղակայե՛ք ձեր տրանսպորտային միջոցը կայանատեղիում: Անջատե՛ք ձեր տրանսպորտային միջոցը և միացրե՛ք կայանման արգելակը: Նախքան ձեր տրանսպորտային միջոցից դուրս գալը ուսուցիչից կամ տրանսպորտային միջոցներից, հեծանիվներից և մոտոցիկլետներից: Դուրս եկե՛ք, երբ անվտանգ է:




## Զառիվայր հանապարհին կայանելը

Երբ բլրի վրա կայանե՞ք, հիշե՞ք, որ արգելակման անսարքության դեպքում ձեր տրանսպորտային միջոցը կարող է գլորվել:

Երբ տրանսպորտային միջոցը կայանում ե՞ք՝

- Թե՛ք ուղեմուտքի վրա՝  
Թե՛քե՛ք անիվներն այնպես, որ տրանսպորտային միջոցը փողոց չգլորվի, եթե հանկարծ արգելակները չպահեն:
- Զառիվայր հանապարհի վրա՝ Առջևի անիվները թե՛քե՛ք դեպի եզրափարը կամ հանապարհի եզրը: Քաշե՛ք կայանման արգելակը:



Պեպի ներև. անիվները թե՛նէ՛լ դեպի եզրափարը:  
Պեպի վերև. անիվները թե՛նէ՛լ դեպի եզրափարը:  
Եզրափար չկա. անիվները թե՛նէ՛լ դեպի համփեղքը:


- Զառիվայր հանապարհի վրա՝ Առջևի անիվները շրջե՛ք եզրափարին հակառակ ուղղությամբ և թույլ տվե՛ք, որ տրանսպորտային միջոցը մի քանի դյույմ հետ շարժվի: Անիվը պետք է թեթևակի հպվի եզրափարին: Քաշե՛ք կայանման արգելակը:
- Զառիվայր կամ գառիվայր հանապարհի վրա, որը եզրափարեր չունի՝ Թե՛քե՛ք անիվներն այնպես, որ եթե հանկարծ արգելակները չպահեն, տրանսպորտային միջոցը հանապարհի կենտրոնից հեռանա:

Միշտ գործի գցե՛ք կայանման արգելակը և փոխանցման տուփը դրե՛ք «կայանում» դիրքում:

## Ներկված եզրափարերի մոտ կայանելը

Տարբեր գույններով ներկված եզրափարերն ունեն կայանման հատուկ կանոններ:

- Սպիտակ՝ Կանգնե՛ք միայն այնքան, որքան անհրաժեշտ է ուղևոր վերցնելու կամ իջեցնելու համար:
- Կանաչ՝ Կայանե՛ք սահմանափակ ժամանակով: Ժամանակի սահմանաչափը կարող է նշվել նշանների կամ եզրափարի վրա:
- Պեղին՝ Բեռների բեռնում, բեռնաթափում և ուղևորների վերցնելն ու իջեցնելը: Մի կանգնե՛ք սահմանված ժամանակից ավելի երկար: Եթե դուք ոչ առևտրային տրանսպորտային միջոց ե՛ք վարում, ձեզանից սովորաբար պահանջվում է մնալ ձեր տրանսպորտային միջոցի հետ:
- Կարմիր՝ Ոչ մի կանգ առնել, կանգնել և կայանել: Ավտոբուսները կարող են կանգ առնել ավտոբուսների համար նշված կարմիր գոտում:





- Կապույտ՝ Կայանումը հաճանդարան անձի կամ հաճանդարմի տեղադրվող անձի համար է:
  - Այստեղ կայանելու համար դուք պետք է ունենաք հաճանդարան անձանց կամ հաճանդարան վետերանների ցուցանակ կամ պետհամարանիշ: Հաճանդարանություն ունեցող անձի կայանման ցուցանակի կամ պետհամարանիշի չարաշահումը հանցեցնում է կայանման հատուկ արտոնությունների կորստի: Բացի այդ, նման չարաշահումը պատժվում է մինչև \$1000 տուգանքով, մինչև 6 ամիս բանտարկությանը՝ շրջանային բանտում, կամ՝ երկու պատժամիջոցները միասին:
  - Ցուցանակներ կամ պետհամարանիշներ ունեցող հաճանդարանները կարող են կայանել կայանման գոտում ցանկացած ժամանակով՝ անկախ սահմանված սահմանաչափից:
  - Հաճանդարանների կայանման ցուցանակների և պետհամարանիշների մասին ավելի իմանալու համար այցելեք [dmv.ca.gov/disabled-person-parking](http://dmv.ca.gov/disabled-person-parking) կամ զանգահարեք 1-800-777-0133:



Սովորագրված (չեղ գծերով) տարածքի օրինակ:

## Արգելված կայանում

Երբեք մի կայանեք կամ թողեք ձեր տրանսպորտային միջոցը՝

- Այնտեղ, որտեղ տեղադրված է «No Parking» նշանը:
- Գծանշված կամ չգծանշված անցուղու վրա:
- Մայրի վրա՝ մասամբ մայրը փակելով, կամ ուղեմուտքերի դիմաց:
- Մայրի հաճանդարանների համար նախատեսված քեֆախարարակից մինչև 3 ֆուտ հեռավորության վրա:
- Եզրաֆարի առջև կամ եզրաֆարի վրա, որն ապահովում է անվասայլակների մուտքը մայր:
- Հաճանդարան անձի համար նախատեսված կայանատեղիում, երբ առկա է հաճանդարանի ցուցանակ կամ պետհամարանիշ:
- Հաճանդարանների համար առանձնացված կայանատեղիի մոտ գտնվող սովորագրված (չեղ գծեր) տարածքում:
- Այն վայրում, որը նախատեսված է գրոյական արտանետման տրանսպորտային միջոցների կայանման կամ լցավորման համար, երբ չեֆ վարում գրոյական արտանետում ունեցող տրանսպորտային միջոց:
- Թունելում կամ կամրջի վրա՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դա թույլատրող նշաններ կան:
- Հրեջջ հիդրանտի կամ հրեջջ կայանի ուղեմուտքից մինչև 15 ֆուտ հեռավորության վրա:
- Անվտանգության գոտու և եզրաֆարի միջև:
- «Երկրորդ շարքում կայանված» (կայանում փողոցում, որովհետև մայրեզրի մոտ կայանման համար թույլատրված բոլոր տեղերն արդեն զբաղված են):

- Փողոցի սխալ կողմում կամ արագընթաց մայրուղու վրա, բացառությամբ՝
  - Արտակարգ իրավիճակի:
  - Երբ իրավապահը կամ հսկիչ սարքը պահանջում է կանգ առնել:
  - Երբ կայանումը հասկանալի է թույլատրված է:

Եթե ստիպված եք կանգ առնել արագընթաց մայրուղու վրա, կայանեք երթևեկելի մասից ամբողջովին դուրս և մնացե՛ք տրանսպորտային միջոցի մեջ՝ դռները փակ վիճակում, մինչև օգնությունը տեղ կհասնի: Բավականաչափ տեղ թողե՛ք ճանապարհի վրա, որպեսզի տրանսպորտային միջոցները կարողանան ապահով անցնել: Ձեր տրանսպորտային միջոցը պետք է երկու ուղղությամբ տեսանելի լինի առնվազն 200 ֆուտ հեռավորությունից: Ավելի քան 4 ժամ արագընթաց մայրուղու վրա կանգնեցված, կայանված կամ թողնված տրանսպորտային միջոցը կարող են հեռացնել:

**Էլեկտրական տրանսպորտային միջոցներ:**

Տեղական իշխանությունները կարող են հանրային փողոցում նախատեսել ավտոկայանատեղեր էլեկտրական տրանսպորտային միջոցների լիցքավորման համար:



G66-21B (CA)

**ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՎԱՐՈՄ**

Էկոլոգիական մեքենավարումը առավելագույնի է հասցնում ձեր վառելիքի արդյունավետությունը՝ օգնելու արտանետումների նվազմանը:

Էկոլոգիական մեքենավարման մի քանի խորհուրդ՝

- Վարորդական սովորություններ՝ Արագացրե՛ք և դանդաղեցրե՛ք սահուն կերպով: Երթևեկե՛ք միջին կայուն արագությամբ:
- Տեխնիկական սպասարկում՝ Ձեր տրանսպորտային միջոցը լավ վիճակում պահե՛ք: Պարբերաբար փչե՛ք ձեր անվազողերը, փոխե՛ք յուղը և ստուգե՛ք ֆիլտրերը:
- Քա՛՜՛՛՛ Ազատվե՛ք ձեր տրանսպորտային միջոցի ավելորդ ֆա՛՛՛՛ց: Մաքրե՛ք բեռնախցիկը: Հեռացրե՛ք ուղեբեռի դարակաշարերը տանիքից:

Կարող եք նաև համարել գրոյական արտանետում ունեցող տրանսպորտային միջոց, որն աշխատում է էլեկտրականությամբ կամ ջրածնով: Սա կօգնի էլ ավելի նվազեցնել արտանետումները:

- Էլեկտրացանցին միացված տրանսպորտային միջոցներ՝ Լիցքավորե՛ք գիշերը տանը կամ հասարակական կամ աշխատավայրում լիցքավորման կայաններում:
- Ջրածնային վառելիքի մարտկոցով աշխատող էլեկտրական տրանսպորտային միջոցներ՝ Լիցքավորե՛ք հանրային ջրածնային կայաններում:

Այս տիպի տրանսպորտային միջոցները չեն արտադրում բանեցրած գազի արտանետումներ կամ չեն ունենում յուղի փոփոխման կարիք: Նրանք ունեն վառելիքի գերազանց տևտեսում և ունեն նվազագույն սպասարկման կարիք:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելե՛ք **FuelEconomy.gov**:

Էկոլոգիական մեքենավարումը խրախուսվում է Փոխադրումների և օդի որակի վարչության և ԱՄՆ Շրջակա միջավայրի պաշտպանության գործակալության կողմից:

## ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱՆԳԵՑՆԵԼԸ

### Իրավապահ մարմինների կանգնեցնելու ժամանակ

Միացրե՛ք ձեր աջ շրջապարծային ազդեցունը՝ հաստատելու, որ տեսնում ե՛ք ոստիկանին:

Ամբողջովին տեղավորվե՛ք դեպի աջ համփեզր, նույնիսկ եթե գտնվում ե՛ք carpool/HOV գոտում: Հնարավորության դեպքում կանգ առե՛ք լավ լուսավորված վայրում:

Ավարտե՛ք բջջային հեռախոսով խոսակցությունը և անջատե՛ք ուղիքին:

Մնացե՛ք ձեր տրանսպորտային միջոցի ներսում, եթե ոստիկանի կողմից հրահանգված չէ դուրս գալ:

Ձեր տրանսպորտային միջոցը կանգնեցնելուց հետո և մինչև ոստիկանի՝ ձեզ հետ կապ հաստատելը պատուհաններն իջեցրե՛ք:

Նախքան ոստիկանի՝ ձեզ հետ կապ հաստատելը դրե՛ք ձեր ձեռները և բոլոր ուղևորների ձեռները պարզ տեսադաշտում: Կարելի է դնել դեկի, կառավարման վահանակի վրա կամ ծկներին:

### Ձեր իրավունքները հարկադիր կանգնեցման ժամանակ

Եթե ոստիկանության աշխատակիցը բուլլոյություն է խնդրում ինչ-որ բան անել, Դուք իրավունք ունե՛ք մերժել: Սակայն, եթե Դուք մերժե՛ք, իսկ ոստիկանության աշխատակիցը պնդի, որ իրենք, միևնույն է, պետք է անեն, Դուք իրավունք չունե՛ք միջամտել նրանց գործողություններին: Օրինակ, ոստիկանության աշխատակիցը կարող է պահանջել խուզարկել Ձեր տրանսպորտային միջոցն ամբողջությամբ կամ մասամբ: Դուք իրավունք ունե՛ք մերժել այս պահանջը, սակայն ոստիկանության աշխատակիցն ամեն դեպքում կարող է ունենալ օրինակյալ լիազորություններ՝ խուզարկելու Ձեր տրանսպորտային միջոցը որոշակի դեպքերում: Եթե դուք չե՛ք ցանկանում, որ ոստիկանության աշխատակիցը խուզարկի Ձեր տրանսպորտային միջոցը, դուք պետք է հստակ առե՛ք, որ Դուք չե՛ք տալիս ձեր համաձայնությունը, սակայն դուք իրավունք չունե՛ք դիմադրելու կամ խոչընդոտելու ոստիկանության աշխատակցի գործողություններին, եթե նրանք ամեն դեպքում խուզարկում են ձեր տրանսպորտային միջոցը:

Կանգնեցված տրանսպորտային միջոցի վարորդը, երբ նրան կանգնեցնում են իրավապահ մարմինները, պետք է ներկայացնի վարորդական վկայականը, ապահովագրության և տրանսպորտային միջոցի գրանցման վկայականները: Եթե վարորդը չներկայացնի այդ փաստաթղթերը, ոստիկանության աշխատակիցները կարող են անցկացնել սահմանափակ խուզարկում: Ոստիկանության աշխատակիցը կարող է նաև պահանջել ուղևորների անունները կամ ինքնության հաստատում: Ուղևորները կարող են մերժել այս պահանջը, սակայն որոշ դեպքերում հնարավոր է ուղևորների ներկայանալու անհրաժեշտություն լինի: Եթե ուղևորները չեն ցանկանում ներկայացնել իրենց անձը հաստատող փաստաթղթերը, նրանք պետք է հստակ հայտարարեն այդ մասին: Ուղևորները տրանսպորտային միջոցը կանգնեցնելու ժամանակ չպետք է խոչընդոտեն ոստիկանության աշխատակցի պարտականություններին, իսկ եթե ոստիկանության աշխատակիցը պահանջում է անձի հաստատում, ուղևորները չպետք է խոչընդոտեն ոստիկանության աշխատակցի գործողություններին: Երբևէ կարևոր կանգնեցման ժամանակ ոստիկանը կարող է վարորդից և բոլոր ուղևորներից պահանջել դուրս գալ կամ մնալ տրանսպորտային միջոցի մեջ: Եթե ձեզ ասեն՝ դուրս ելե՛ք տրանսպորտից կամ մնացե՛ք ներսում, ապա պետք է երթարկվե՛ք:

Կալիֆոռնիայում միայն ֆեդերալ իրավապահ մարմինները կարող են հարցնել ձեր ներգաղթի կարգավիճակի մասին: Կալիֆոռնիայի օրենքն արգելում է անահանգի ոստիկանության և տեղական իշխանությունների աշխատակիցներին՝ վարորդներին կամ

ուղևորներին հարցնել նրանց ներգաղթի կարգավիճակի մասին: Եթե Կալիֆոռնիայի իրավապահները ձեզ հարցնեն ձեր ներգաղթի կարգավիճակի մասին, դուք կարող եք հրաժարվել պատասխանելուց:

Ընդհանուր առմամբ, առաջին փոփոխությունը պատասխանում է վարորդների և ուղևորների՝ ոստիկանության հետ փոխհարաբերությունները հասարակական վայրերում ձայնագրելու իրավունքը: Եթե ձայնագրում եք, դուք պետք է անմիջապես պարզաբանեք դա: Դուք իրավունք չունեք խոչընդոտելու ոստիկանության աշխատակցի օրինական պարտականություններին հարկադիր կանգնեցման ժամանակ և դուք չպետք է մուտք գործեք բախված տարածքներ՝ վերցնելու ձայնագրող սարքը՝ առանց ոստիկանության աշխատակցի թույլտվության: Եթե Ձեր ձայնագրման գործադրությունը չի խանգարում ոստիկանության աշխատակցին օրինական կերպով կատարել իր աշխատանքը, ոստիկանության աշխատակիցը չի կարող ազդարարել Ձեր ձայնագրող սարքը, ջնջել ձայնագրությունը կամ ոչնչացնել սարքը միայն այն պատճառով, որ դուք օգտագործում եք այն ձայնագրելու համար: Ընդհանուր առմամբ, Դուք նաև իրավունք ունեք մերժել բջջային հեռախոսը արգելափակումից հանելու կամ դրա գաղտնաբառը տրամադրելու պահանջը, քեև որոշ դեպքերում, օրինակ, եթե Դուք գտնվում եք պայմանական-վաղաժամկետ ազատման մեջ, հավանաբար, հարկադրված կլինեք ընդունել պահանջը: Վերջապես, ոչ մի պետական ծառայող չի կարող վրեժխնդիր լինել ձեզ միայն այն բանի համար, որ Դուք ինչ-որ բան եք ձայնագրել հրապարակավ:

Նույնիսկ եթե կարծում եք, որ Ձեր իրավունքները խախտել են, դուք չպետք է ֆիզիկական դիմադրություն ցույց տաք կամ բռնության ենթարկեք ոստիկանության աշխատակցին: Եթե ոստիկանության աշխատակցի արարքը ձեր կարծիքով խախտում է ձեր իրավունքները, դուք կարող եք արտահայտել ձեր առարկությունը, բայց չպետք է ֆիզիկապես դիմադրեք: Յուրաքանչյուր ոք իրավունք ունի երթևեկի դադարեցման ժամանակ ապահով լինել: Ձեր և ոստիկանի անվտանգությունը կարող է վտանգվել, եթե ֆիզիկական դիմադրության կամ բռնության արդյունքում իրավիճակը սրվում է:

Հասարակության բոլոր ներկայացուցիչներն իրավունք ունեն բողոք ներկայացնել իրավապահ մարմնի ցանկացած աշխատակցի դեմ, և պետական ոչ մի ծառայող իրավունք չունի դրա համար վրեժխնդիր լինել: Կարող եք բողոք ներկայացնել այն իրավապահ մարմնին, որտեղ աշխատում է ոստիկանը: Դուք իրավունք ունեք լինել ազատ խորականությունից՝ ըստ ձեր վաստացի կամ ենթադրյալ ուսուցչական պատկանելության, սեռի, մաշկի գույնի, էթնիկական պատկանելության, ազգային ծագման, տարիքի, կրոնի, գենդերային պատկանելության կամ ինֆորմացիայի, որոնք երաժշտությունից են Միացյալ Նահանգների և Կալիֆոռնիայի սահմանադրություններով, ինչպես նաև Կալիֆոռնիայի և Ֆեդերալ օրենքներով: Երբ դուք բողոք եք ներկայացնում, աշխատակցին վարձող գործակալությունը պետք է ֆինիշ բողոքը: Կալիֆոռնիայի իրավապահ մարմնիների կոնտակտային տեղեկատվության հղումները կարելի է գտնել հետևյալ հասցեում՝ [post.ca.gov/le-agencies](http://post.ca.gov/le-agencies):

# ԲԱԺԻՆ 10. Ճանապարհային երթևեկության օրենքները և կանոնները

## ԵՐԹԼԵԿՈՒԹՅԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

### Ճանապարհային ազդանշաններ

Հոծ կարմիր լույս

Լուսացույցի հոծ կարմիր լույսը նշանակում է «STOP»: Կարմիր լույսի ներքո կարող եմ աջ շրջադարձ կատարել, եթե՝

- Ձեզ տեսնում «NO TURN ON RED» նշանը: Կանգնեք լույսի տակ նախքան շրջադարձ կատարելը:
- Ձիջեք (սպասեք) հետիտներին, հեծանվորդներին և մոտակա այլ տրանսպորտային միջոցներին, որոնք ունեն երթևեկելու առավելություն (ձեզանից առաջ գնալու թույլտվություն): (Տե՛ս «Երթևեկության առավելության կանոններ՝ Ո՞վ է գնում առաջինը»): Շրջադարձ կատարեք միայն այն ժամանակ, երբ ապահով լինեք:



Կարմիր սլաֆ

Կարմիր սլաֆը նշանակում է «STOP»: Տեղից մի շարժվեք, մինչև չվառվի կանաչ լույսը կամ չհայտնվի կանաչ սլաֆը: Կարմիր սլաֆի ներքո շրջադարձ մի կատարեք:



Թարթող կարմիր լույս

Լուսացույցի թարթող կարմիր լույսը նշանակում է «STOP»:

Կանգ առնելուց հետո կարող եմ շարժվել, երբ դա ապահով է: Եթե մոտակայքում կան այլ տրանսպորտային միջոցներ, հետիտներ կամ հեծանվորդներ, համոզվեք, որ գիտեք, թե ով ունի երթևեկության առավելություն (առաջինը գնալու թույլտվություն): (Տե՛ս «Երթևեկության առավելության կանոններ՝ Ո՞վ է գնում առաջինը»):



Հոծ դեղին լույս

Լուսացույցի դեղին լույսը նշանակում է «ԶԳՈՒՅՇ»: Լույսը պատրաստվում է դառնալ կարմիր: Դեղին լույսը տեսնելիս կանգ առեք, եթե դա անվտանգ է: Եթե կանգ առնելն անվտանգ չէ, զգուշորեն անցեք խաչմերուկը:



Դեղին սլաֆ

Դեղին սլաֆը նշանակում է, որ շրջադարձ կատարելու «պատրասնված» ժամանակը սպասվում է: Շուտով ազդանշանը կփոխվի: Եթե չեք կարող ապահով կանգ առնել կամ արդեն խաչմերուկում եք, զգուշորեն կատարեք ձեր շրջադարձը: Ուստի խոստովանեք ձեր դարձրեք հաջորդ ազդանշանին: Դա կարող է լինել՝



- Լուսացույցի կանաչ լույս:
- Լուսացույցի կարմիր լույս:
- Կարմիր սլաֆ:

### Թարթոդ դեղին

Թարթոդ դեղին լույսը նախագրուեացում է «ԳՈՒՄԵՔ-ԶԳՈՒՇՈՒՆՆ»։ Այսպես լույսը նվազեցրեք: Խաչմերուկ մտնելուց առաջ եղեք զգուշ: Խաչմերուկում ճանապարհը զիջեք (սպասեք) ցանկացած հետիոտնի, հեծանվորդի կամ տրանսպորտային միջոցի: Ճանապարհային լուսացույցի թարթոդ դեղին լույսի դեպքում կանգ առնելու կարիք չկա:



### Թարթոդ դեղին սլաք

Կարող եք շրջադարձ կատարել, բայց ձեր շրջադարձը պահանջանված չէ այլ երթևեկությունից: Զիջեք (սպասեք) հանդիպակաց երթևեկին և հետիոտներին՝ խաչմերուկը մաքրելու համար, այնուհետև զգուշորեն անցեք:



### Հոծ կանաչ լույս

Լուսացույցի կանաչ լույսը նշանակում է «ԳՆԱՅԵՔ»: Դուք դեռ պետք է կանգ առեք խաչմերուկում գտնվող ցանկացած տրանսպորտային միջոցի, հեծանվորդի կամ հետիոտնի համար: Եթե ձախ շրջադարձ եք կատարում, ապա դա արեք միայն այն դեպքում, երբ շրջադարձը կատարելու համար բավարար տարածություն ունեք՝ առանց վտանգավոր իրավիճակ ստեղծելու: Եթե մոտեցող փոխադրամիջոցի, հեծանվորդի կամ հետիոտնի համար: Մուտք մի գործեք խաչմերուկ, եթե չեք հասցնելու այն ամբողջությամբ հատել մինչև լուսացույցի կարմիր լույսի վառվելը: Դուք կարող եք տուգանվել, եթե արգելափակեք խաչմերուկը:



### Կանաչ սլաք

Կանաչ սլաքը նշանակում է «ԳՆԱՅԵՔ»: Դուք պետք է շրջադարձ կատարեք սլաքի ուղղությամբ: Կանաչ սլաքը թույլ է տալիս կատարել «պահանջանված» շրջադարձ: Մոտեցող տրանսպորտային միջոցները կանգ են առնում կարմիր լույսի ներքո: Զիջեք (սպասեք) ցանկացած տրանսպորտային միջոցի, հեծանվորդի կամ հետիոտնի, որը դեռ գտնվում է խաչմերուկում:



### Լուսացույցի լույսը չի աշխատում (անջատված է)

Կանգ առեք, ասե՛ք խաչմերուկը բոլոր ուղղություններով կարգավորվում է «STOP» նշանով: Հետո զգուշորեն շարժվեք:

## Հետխոտնային ազդանշաններ

«Walk» կամ «Փողոցն անցնող մարդ»  
Արգելված է փողոցն անցնել:



«Don't Walk» կամ «Բարձրացրած ձեռք»  
Կարող եմ փողոցը չանցնել:



Թարթող «Don't Walk» կամ թարթող «Բարձրացրած ձեռք»  
Մի սկսե՛ք անցնել փողոցը: Շուտով լուսացույցի լույսը կփոխվի:  
Վարորդները պետք է զիջեն հետխոտնեթին, նույնիսկ եթե «Don't Walk» լույսը թարթում է:



### Թվեր

Թվերը հաշվում են, թե քանի վայրկյան է մնացել փողոցն անցնելու համար, որպեսզի անհրաժեշտության դեպքում հետխոտները կարողանան արագացնել:

Հետխոտնային փուլեր (նաև կոչվում է անցում բոլոր կողմերից)  
Դրանք խաչաձև և անկյունագծային անցումներ են, որոնք հետխոտներին թույլ են տալիս միաժամանակ անցնել խաչմերուկը ցանկացած ուղղությամբ: Խառնաժամանակ փուլում խաչմերուկում բոլոր տրանսպորտային միջոցները կանգնեցված են:



### Ձայներ

Հնչում է ծվծվոց, ծլվլոց կամ բանավոր հաղորդագրություններ՝ օգնելու կույր կամ թույլ տեսողություն ունեցող հետխոտներին անցնել փողոցը:

### Հետխոտնային կոճակ

Այն օգտագործվում է «Walk» ազդանշանն ակտիվացնելու համար:

### Հետխոտնային ազդանշաններ չկան

Եթե հետխոտներին համար նախատեսված ազդանշաններ չկան, ապա հետևե՛ք երթևեկությունը կարգավորող լուսացույցին:

## Նշաններ

### Կարմիր STOP նշան

Նախֆան հետխոտնային անցում կամ սահմանային գիծ մտնելը ամբողջովին կանգ առե՛ք: Սահմանային գիծը փողոցում գծված լայն սպիտակ գիծ է: Եթե հետխոտնային անցում կամ սահմանային գիծ չկա, նախֆան խաչմերուկ մտնելը կանգ առե՛ք: Առաջ շարժվելուց առաջ ստուգե՛ք երթևեկությունը բոլոր ուղղություններով:



### Կարմիր YIELD նշան

Դանդաղեցրե՛ք և անհրաժեշտության դեպքում պատրաստ եղե՛ք կանգ առնել, որպեսզի նախֆան ձեր շարունակելը ցանկացած տրանսպորտային միջոց, հեծանվորդ կամ հետխոտն անցնի:



## Կարմիր և սպիտակ կարգավորիչ նշաններ



Հետադարձ արգելվում է



Ձախ շրջադարձն արգելվում է



Աջ շրջադարձն արգելվում է

## Սպիտակ կարգավորիչ նշաններ



Երկկողմ երթևեկության առջևում



Կայանումն արգելվում է ցանկացած պահի



Ձիջել դեպի վերև ընթացող երթևեկությանը



Միակողմ հանապարհ



Կայանում բայց ստորվում է միայն արտակարգ դեպքերում



Շրջադարձն արգելվում է



Ձախ շրջադարձի առավելության կանաչ լույսի ներքո



Վազանցն արգելվում է



Միակողմ հանապարհ



Միայն ձախ շրջադարձ



Ձախ շրջադարձ կամ հետադարձ



Մի արգելափակիչը խաչմերուկ



Դանդաղ երթևեկության ընթացքի աջից



Հնրանալ աջից



3 ուղի

## Ճանապարհային շինարարության և տեխնիկական սպասարկման նշաններ



Ողիկ և ձախ երթևեկության միաձուլում



Ճանապարհին առջևում փակ է



Ճանապարհային տեխնիկա առջևում



Ազդուեմունդին առջևում է



Ճամփեզրի աշխատումք Առաջ

## Ուղեցույց նշաններ



Օդանավակայան



Դահուկավայր



Հանգստի գոտի 1 մղոն



## Վտանգավոր



## Դանդաղընթաց



## Նախագուշակող նշաններ



Թաց ժամանակ սայրաժուհ



Միաձուլվող երթևեկություն



Բաժանարարով մայրուղի



Երկկողմանի երթևեկություն



Գոտին ավարտվում է



Բաժանարարով մայրուղու վերջը



Երթևեկությունը կարգավորող լուսացույցներ առջևում



Հետիտոնային անցում



Ավելացված գոտի



Խաչմերուկ



Կանգառ առջևում



Ճանապարհը զիջել առջևում



Ուղղորդիչ սլաֆ



Ուղտան



«T» Խաչմերուկ



Ուղտան ճանապարհ

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելե՛ք [dot.ca.gov](http://dot.ca.gov)





Կարմիր և սպիտակ կարգավորիչ նշան  
Հետևե՛ք նշանի հրահանգին: Օրինակ՝ DO NOT ENTER նշանը  
ցույց է տալիս, որ չի կարելի մտնել այն հանապարհը կամ  
խցատեղը, որտեղ նշանը տեղադրված է (սովորաբար արագընթաց  
մահիւղու դուրս եկող իջատեղում):



### WRONG WAY նշան

Դա նշանակում է, որ դուք շարժվում եք երթևեկուրջանը  
հակառակ ուղղությամբ: Դա կարող է տեղադրվել DO NOT  
ENTER նշանի հետ: Եթե տեսնե՛ք այդ նշաններից որևէ մեկը  
կամ երկուսը միասին, շարժվե՛ք դեպի հանապարհի եզրը ու կանգ  
առե՛ք: Երբ անվտանգ է, դուրս ելե՛ք կամ շրջվե՛ք: Եթե զիջերն ե՛ք  
տրանսպորտային միջոց վարում, ապա դուք կիմանա՛ք, որ սխալ  
հանապարհով ե՛ք գնում, եթե հանապարհի արտացոլիչները կարմիր  
փայլ տան ձեր ցողալապտերների լույսի ներքո:



### Կարմիր շրջան՝ կարմիր գծով

Միշտ նշանակում է «ՈՉ»: Շրջանի ներսի նկարը ցույց է տալիս  
այն, ինչ դուք չե՛ք կարող անել, և այն կարող է նշվել բառերով:



### Դեղին և սև շրջանաձև նշան կամ խաչաձև նշան

Դուք մտնելու ե՛ք երկաթուղու անցմանը: Նայել, լսել,  
զանդադեցնել ընթացքը և պատրաստվել կանգ առնել: Թույլ  
տվե՛ք, որ զննողներն անցնեն, մինչ կշարունակե՛ք ձեր ընթացքը:



Երկաթուղային գծանցներից շատերը հաս ունեն կապույտ և  
սպիտակ նշան, որը ցույց է տալիս, թե ինչ անել, եթե արտակարգ  
կրավիհակ է ստեղծվել ռելսերի մոտ կամ վրա, կամ եթե ձեր  
տրանսպորտային միջոցը լավ է ռելսերի վրա:



### 5-կողմանի նշան

Դուք դպրոցի մոտ ե՛ք: Դանդաղ ֆե՛ք և անցուղում երեխաների  
համար կանգ առե՛ք:



### Շեղանկյունաձև նշան:

Այս նշանները նախագրուճացնում են ձեզ հանապարհի  
առանձնահատուկ պայմանների և առաջիկա վտանգների մասին:  
Նախագրուճացնող նշաններից շատերը շեղանկյունաձև են:

### Սպիտակ ուղղանկյուն նշան

Այս նշանները հաղորդում են շատ կարևոր կանոնների մասին,  
որոնց պետք է հետևել:

Նախագգուշացնող նշաններ

Այդ նշանները նախագգուշացնում են հետիոտներին, հեծանվորդներին, դպրոցներին, խաղահրապարակներին, դպրոցական ավտոբուսներին և դպրոցական ուղևորների նստեցման գոտիներին առնչվող պայմանների մասին: Հնազանդվեք բոլոր նախագգուշական նշաններին՝ անկախ դրանց ձևից և գույնից: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք **dot.ca.gov**:

**ԵՐԹԼԵԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՆԵՐ՝ Ո՞Վ Է ԳՆՈՒՄ ԱՌԱՋԻՆԸ:**

Երթևեկության առավելության կանոնները կօգնեն ձեզ հասկանալ, թե ով է առաջինն անցնում այն իրավիճակներում, երբ ճանապարհին հանդիպում են տրանսպորտային միջոցներ, հետիոտներ և հեծանվորդներ: Նա, ով կարող է առաջինը գնալ, ունի «երթևեկության առավելություն»: Այլ տրանսպորտային միջոցներն ու հեծանվորդները պետք է սպասեն երթևեկության առավելություն ունեցող անձին: Երբեք մի ակնկալեք, որ մյուս վարորդները կզիջեն ձեզ իրենց երթևեկության առավելությունը: Հրաժարվեք երթևեկության ձեր առավելությունից, երբ դա կօգնի կանխել բախումները:

**ԽՅԱՆԵՐՈՒԿՆԵՐ**

Խճաներուկն այնպիսի տեղ է, որտեղ մի ճանապարհի հանդիպում է մեկ այլ ճանապարհի: Խճաներուկներում դանդաղեցրեք և պատրաստ եղեք կանգ առնել: Ահա խճաներուկներում երթևեկության առավելության մի ֆանի կանոն՝

- Առանց «STOP» կամ «YIELD» նշանների՝ Տրանսպորտային միջոցները, հեծանվորդները և հետիոտները, որոնք առաջինն են հասնում խճաներուկ, ունեն երթևեկության առավելություն: Եթե տրանսպորտային միջոցը կամ հեծանվորդը խճաներուկ է հասնում ձեզ հետ միաժամանակ, ձեր երթևեկության առավելությունը զիջեք ձեր աջ կողմից ընթացող տրանսպորտային միջոցին կամ հեծանվորդին:
- «T» խճաներուկներն առանց «STOP» կամ «YIELD» նշանների՝ Ճանապարհով անցնող տրանսպորտային միջոցները, հեծանվորդները և հետիոտները, որոնք շարունակում են շարժվել ուղիղ, ունեն երթևեկության առավելություն:
- «STOP» նշանը բոլոր անկյուններում՝ Նախ կանգ առեք: Այնուհետև հետևեք երթևեկության առավելության կանոններին:
- Չախ շրջադարձ՝ Երթևեկության առավելությունը զիջեք մոտեցող ցանկացած տրանսպորտային միջոցի, որը, բավականին մոտ լինելով, կարող է վտանգ ներկայացնել: Ստուգեք մոտոցիկլետների, հեծանվորդների և հետիոտների առկայությունը:
- Աջ շրջադարձ՝ Ստուգեք փողոցը հատող հետիոտների, իսկ ձեր կողմին՝ մոտոցիկլետների ու հեծանվորդների առկայությունը:
- Լուսացույցի կանաչ լույս՝ Հետիոտներն ունեն երթևեկության առավելություն:
- Բաժանարարով կամ մի ֆանի երթևեկության գոտի ունեցող մայրուղիներ՝ Ուշադիր եղեք այն տրանսպորտային միջոցներին, որոնք մոտենում են ցանկացած գոտով, որը դուք հատելու եք կամ մուտք եք գործելու:

- Մուտք դեպի երթևեկություն՝ Նախֆան մուտք գործելը երթևեկությանը զիջե՛ք:

## Օդակածն հատումներ

Օդակածն հատումներում երթևեկությանն ընթանում է կենտրոնական կղզու շուրջը մեկ ուղղությամբ: Օդակածն հատումները չունեն հեծանվային գոտիներ:


Ինչպես օգտագործել օդակածն հատումը

1. Մոտենալիս դանդաղեցրե՛ք տրանսպորտային միջոցի ընթացքը:
2. Զիջե՛ք ամբողջ երթևեկությանը՝ ներառյալ հանապարհը հատող հեծանվորդներին և հետիոտներին:
3. Դիտե՛ք նշաններն ու գոտու գծանշումները, որոնք ձեզ ուղղորդում են:
4. Մուտք գործել աջ ուղղությամբ այն ժամանակ, երբ բավարար սարածություն կա երթևեկող տրանսպորտային միջոցների միջև՝ հոսքին անվտանգ միաձուլվելու համար:
5. Երթևեկե՛ք ժամացույցի սլաքին հակառակ ուղղությամբ: Կանգ մի առե՛ք և մի վազանցե՛ք:
6. Ազդանշան սլեք երթևեկության գոտին փոխելիս կամ երթևեկության գոտուց դուրս գալիս:
7. Եթե չհասցնե՛ք դուրս գալ, շարունակե՛ք պտտվել՝ մինչև կրկին հայտնվե՛ք ելքի մոտ:


Եթե օդակածն հատումը բազմաթիվ գոտիներ ունի, ընտրե՛ք ձեր մուտքի կամ ելքի գոտին՝ կախված ձեր նպատակակետից: Սա ցույց է տրված ստորև նկարում: Կատարել՝

- Աջ շրջադարձ խաչմերուկում (դեղին տրանսպորտային միջոց)՝ Ընտրե՛ք աջակողմյան գոտին և դուրս եկե՛ք աջակողմյան գոտով:
- Անցե՛ք ուղիղ խաչմերուկով (կարմիր տրանսպորտային միջոց)՝ Ընտրե՛ք ցանկացած գոտի: Դուրս եկե՛ք ձեր մտած գոտի:
- Մտե՛ք և շարունակե՛ք վարել ձեր ընտրած ուղղությամբ (կապույտ մեքենա):


### Օդակածն հատման օրինակներ



Աջ շրջադարձ



Ուղիղ



Զախ շրջադարձ

## Հետխոտներ

Այստեղ բուրբ համարվում հետխոտն:

- Ուտով երթևեկող անձ:
- Անձ, ով երթևեկում է ինչ-որ բանով, որը ոչ տրանսպորտային միջոց է, ոչ էլ հեծանիվ: Օրինակ՝ անվաչմուշկները, սֆեյքբորդերը և այլն:
- Հետխոտն է համարվում նաև այն հաճամանդանը, ով տեղաճարժվում է եռանիվով, քառանիվով կամ անվասայլակով:

Թեև հետխոտները երթևեկության առավելություն ունեն, նրանք նույնպես պետք է հետևեն նաևապարհային երթևեկության կանոններին:

Անկախ նրանից, թե հետխոտը անցումով է անցնում, թե ոչ, դուք պետք է զգույշ լինեք, դանդաղեցնեք ձեր արագությունը կամ կանգ առնեք, որպեսզի հետխոտը ապահով կերպով անցնի անցումը:

Այլ բաներ, որոնք պետք է հիշել՝

- Մի վազանցեք հետխոտնային անցումի մոտ կանգնած ոչ մի տրանսպորտային միջոցի: Հնարավոր է՝ չկարողանաք տեսնել փողոցը հատող հետխոտնին:
- Երբեք տրանսպորտային միջոցը մի վարեք մայրով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ մայրը հարկավոր է հատել որևէ ուղեմուտ կամ նրբանցք մտնելու կամ այնտեղից դուրս գալու համար: Մայրը հատելիս միշտ զիջեք հետխոտներին:
- Տրանսպորտային միջոցը մի կանգնեցրեք հետխոտնային անցումում: Դա կարող է վտանգի ենթարկել հետխոտներին:
- Եթե հետխոտը հայացքը ձեզ է ուղղում, ապա նա պատրաստ է փողոցը հատելու: Ճանապարհը զիջեք հետխոտնին:
- Հնազանդվեք հետխոտներին վերաբերող բուրբ նշաններին:
- Այս հետխոտներին փողոցն անցնելու ավելի շատ ժամանակ տվեք:
  - Տարեցներ:
  - Հաճամանություն ունեցող անձինք:
  - Մարդիկ, ովքեր երեխաների հետ են:

### Հետխոտնային անցումներ

Հետխոտնային անցումը փողոցի այն մասն է, որը նախատեսված է հետխոտների երթևեկության համար: Հետխոտնային անցումները հաճախ գծանշված են սպիտակ գծերով: Դպրոցական անցումները կարող են ունենալ դեղին անցումային գծեր: Ոչ բուրբ անցումներն են գծանշված:

Գծանշված կամ ոչ գծանշված անցումներում հետխոտները երթևեկության առավելություն ունեն: Եթե անցումից առաջ կանգառի գլիժ կա, նախ ենթարկվեք կանգառի գլիժին:

Որոշ անցումներ ունեն թարթող լույսեր: Լույսերը թարթում են, թե ոչ, փնտրեք հետխոտներին և պատրաստ եղեք կանգ առնել:

## Կույր հետիոտներ

Այն հետիոտները, որոնք շարժվում են ուղեկցարդ շների օգնությամբ կամ կարմիր ծայրով կամ առանց

ծայրի սպիտակ ձեռնափայտերով, միշտ երթևեկության առավելություն ունեն: Այդ հետիոտները մասամբ կամ լրիվ կույր են: Շրջադարձ կատարելիս կամ հետընթաց շարժվելիս գոույշ եղեք: Դա հատկապես կարևոր է, եթե դուք հիբրիդային տրանսպորտային միջոց եք վարում, քանի որ կույր հետիոտները հույսը դնում են ձայնի վրա՝ խմանալով, որ մոտակայքում կա տրանսպորտային միջոց:

- Կանգ առեք բոլոր հետիոտնային անցումների մոտ, որտեղ հետիոտներ են սպասում:
- Տրանսպորտային միջոցը մի կանգնեցրեք հետիոտնային անցման մեջտեղում: Դա կարող է ստիպել կույր հետիոտնին շեղվել հետիոտնային անցումից:
- Կույր հետիոտնին բանավոր ցուցումներ մի տվեք: Նրանք կարող են լսել երթևեկության ձայները:
- Աջ շրջադարձ մի կատարեք՝ առանց հետիոտների առկայությունը ստուգելու:
- Կույր հետիոտնին ձայնային ազդանշան մի տվեք: Կույրը կարող է չխմանալ, թե ում եք ազդանշան տալիս:
- Մի արգելափակեք մայրը:
- Երբ կույրը քաշում է իր ձեռնափայտը և հեռանում խաչմերուկից, այս ժեստը սովորաբար նշանակում է, որ կարող եք գնալ:

## Վեռնային հանապարհներ

Եթե երկու տրանսպորտային միջոցներ հանդիպեն գաղիթափ, նեղ հանապարհի վրա, և ոչ մի տրանսպորտային միջոց չկարողանա անցնել, ապա դեպի վերև նայող տրանսպորտային միջոցը ունի երթևեկության առավելություն: Դեպի ներքև ընթացող տրանսպորտային միջոցը բլրով հետընթաց շարժվելիս ավելի շատ է վերահսկում իրավիճակը: Դեպի ներքև նայող տրանսպորտային միջոցը պետք է շարժվի հետընթաց այնքան, մինչև դեպի վերև նայող տրանսպորտային միջոցը կարողանա անցնել:



# ՃԱՆԱՊԱՐՀՈՎ ԱՅՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ շԵՏ ՄԻԱՍԻՆ ԵՐԹԵՎԵԿԵԼԸ

Վարորդները պետք է համատեղ երթևեկեն այլ տրանսպորտային միջոցների, հետիոտների, հեծանվորդների, հանապարհային աշխատողների և այլնի հետ:

## Խոշոր տրանսպորտային միջոցներ

Հասկացե՛ք խոշոր տրանսպորտային միջոցների վարագիծը, թե ինչպես են շարժվում՝ բախվելու հավանականությունը նվազեցնելու համար: Խոշոր տրանսպորտային միջոցների օրինակներ՝


- Տրակտորային կցանքներ (տե՛ս ստորև նկարը որպես օրինակ)
- Ավտոբուսներ
- Տրոլեյբուսներ և տրամվայներ
- Հանգստի տրանսպորտային միջոցներ (RV)
- Արագընթաց ներգաղափային գնացքներ

## Կույր գոտիներ («No Zone»)

Վարորդները հաճախ քյուրիմացաբար կարծում են, թե բեռնատարի վարորդը հանապարհին ավելի լավ է տեսնում, քանի որ ավելի բարձր է նստած: Դա ճիշտ չէ:

Խոշոր տրանսպորտային միջոցների և բեռնատարների վարորդները, իրոք, ավելի լայն տեսադաշտ ունեն և ավելի մեծ հայելիներ: Բայց նրանք ունեն նաև մեծ կույր գոտիներ, որոնք կոչվում են նաև «No Zones»: Այս տարածքներում

ձեր տրանսպորտային միջոցը կարող է անհետանալ մեծ տրանսպորտային միջոցի կամ բեռնատարի վարորդի տեսադաշտից: Ընդհանուր առմամբ եթե բեռնատարի վարորդին չե՛ք տեսնում նրա կողային հայելու մեջ, ապա նա էլ ձեզ չի տեսնում:



Այս պատկերի սովորաբար հատվածները բեռնատարի վարորդի կույր գոտիներն են:

## Արգելափակում

Մեծ տրանսպորտային միջոցներին և մեծ առևտրային բեռնատարներին կանգ առնելու համար ավելի երկար ժամանակ է հարկավոր, քան նույն արագությամբ ընթացող մարդատար մեքենաներին: Ժամում 55 մղոն արագությամբ ընթացող մարդատար ավտոմեքենան կանգնեցնելու համար հարկավոր է միջին հաշվով 400 ֆուտ տարածություն: Սակայն նույն արագությամբ ընթացող մեծ տրանսպորտային միջոցը կանգնեցնելու համար կարող է պահանջվել գրեթե 800 ֆուտ: Մի շարժվե՛ք մեծ տրանսպորտային միջոցի առջևից և հանկարծակի մի դանդաղեցրե՛ք կամ կանգ առե՛ք: Մեծ տրանսպորտային միջոցի վարորդը չի կարող այնքան արագ կանգ առնել, որ չբախվի ձեզ:

## Շրջադարձ

Երբ որևէ տրանսպորտային միջոց շրջադարձ է կատարում, հետևի անիվներն ավելի կարճ տարածություն են անցնում, քան առջևի անիվները: Որքան երկար է տրանսպորտային միջոցը, այնքան մեծ է այդ տրանսպորտային միջոցի շրջադարձի հետագծի տարբերությունը: Ահա թե ինչու են խոշոր տրանսպորտային միջոցների և բեռնատարների վարորդները հաճախ ստիպված լինում մեծ շրջան վերցնել՝ աջ շրջադարձ կատարելու համար: Երբ շարժվում էք մեծ բեռնատարի հետևից, վազանց կատարելուց առաջ նայեք նրա շրջադարձի ազդանշաններին: Կարող է թվալ, թե ձախ է թեփվում, բայց իրականում կարող է ձախից լայն շրջան վերցնել՝ աջ թեփվելու համար:

## Մանևրելը

Խոշոր տրանսպորտային միջոցներն ու բեռնատարներն այնքան էլ հեշտ չեն մանևրում, որքան մարդատար տրանսպորտային միջոցները: Նժանների բացակայության պայմաններում այդ տրանսպորտային միջոցները պետք է երթևեկեն ճանապարհի աջ գոտով կամ ճանապարհի աջ եզրին հնարավորինս մոտ: Մեկ ուղղությամբ 4 կամ ավելի գոտիներ ունեցող բաժանարար գոտով ավտոմայրուղիների վրա նրանք կարող են երթևեկել նաև աջ գոտուց անմիջապես դեպի ձախ գտնվող գոտով:

Խոշոր տրանսպորտային միջոցներին և բեռնատարներին մոտ տրանսպորտային միջոց վարելիս չի կարելի՝

- Փոխել գոտիներն ուղիղ նրանց դիմաց՝ ելքի կամ շրջադարձի հասնելու համար: Խոշոր տրանսպորտային միջոցի կամ բեռնատարի դիմաց նեղ տարածությամբ երթևեկելը վտանգավոր է:
- Նրանց կողմին տրանսպորտային միջոցն ավելի երկար վարեք, քան անհրաժեշտ է: Վազանցեք խոշոր տրանսպորտային միջոցը միշտ ձախից: Խոշոր տրանսպորտային միջոցը կամ բեռնատարը անցնելուց հետո շարժվեք նրա առջևից: Խոշոր տրանսպորտային միջոցի կողմին շարժվելը վարորդին դժվարացնում է խուսափել ճանապարհի առկա վտանգներից:
- Հետևեք շատ մոտիկից: Դա կաշվում է հետապնդում, և այն վտանգավոր է: Բեռնատարին ավելի շատ տարածք ավելեք, քան ավելի փոքր փոխադրամիջոց կտաք: Եթե չեք տեսնում բեռնատարի կողային հայելիները, բեռնատարի վարորդը չի կարող տեսնել ձեզ: Երբ հետևում եք շատ մոտիկից, նվազեցնում եք սեփական անվտանգ հեռավորությունը:
- Մի թերագնահատեք մոտեցող ֆարձակի չափերն ու արագությունը: Խոշոր տրանսպորտային միջոցը կամ ֆարձակը իր չափի պատճառով հաճախ ավելի դանդաղ է շարժվում:

Խաչմերուկներում տեղի են ունենում բազմաթիվ բախումներ՝ ուղևորների և խոշոր տրանսպորտային միջոցների մասնակցությամբ: Շատ դեպքերում ուղևորատար տրանսպորտային միջոցի վարորդը չի զիտակցում, թե որքան մեծ է տրանսպորտային միջոցը կամ բեռնատարը կամ որքան արագ է այն ընթանում:

## Ավտոբուսներ, տրամվայներ և տրոլեյբուսներ

Ավտոբուսները, տրամվայները և տրոլեյբուսները հաճախ ունենում են անվտանգության գոտիներ:

Անվտանգության գոտիները հետիոտների համար առանձնացված տարածքներ են: Դրանք նշվում են հանապարհի վրա բարձրացված կոնակներով կամ նշագծերով: Տրանսպորտային միջոցը մի վարեք անվտանգության գոտու միջով:

Երբ մարդիկ առանց անվտանգության գոտու նստում կամ դուրս են գալիս ավտոբուս, տրամվայ կամ տրոլեյբուս, կանգ առեք տրանսպորտային միջոցի մոտակա դռան կամ պլատֆորմի ետևում: Սպասեք, մինչ ուղևորները կհասնեն անվտանգ տարածք, այնուհետև կշարունակեք:

Երբ ավտոբուսը, տրամվայը կամ տրոլեյբուսը կանգնած է անվտանգության գոտում կամ խաչմերուկում, որտեղ երթևեկությունը կարգավորվում է իրավապահի կամ լուսացույցի միջոցով, դուք կարող եք առաջ անցնել ժամում 10 մղոնը չգերազանցող արագությամբ:

Երբեք ձախից մի վազանցեք արագընթաց ներքաղաքային զնացքը կամ տրամվայը՝ անկախ վերջինիս շարժման մեջ կամ կանգնած լինելու հանգամանքից:

- Դուք գտնվում եք միակողմանի փողոցում:
- Ռելսուղին այնքան մոտ է աջ համփեզրին, որ հնարավոր չէ աջից անցնել:
- Ճանապարհային ոստիկանը պահանջում է, որ դուք ձախից անցնեք:

## Արագընթաց ներքաղաքային զնացքներ

Հասարակական հանապարհներին արագընթաց ներքաղաքային զնացքներն ունեն նույն իրավունքներն ու պարտականությունները, ինչ մյուս տրանսպորտային միջոցները:

Արագընթաց ներքաղաքային զնացքների հետ ապահով համատեղ երթևեկելու համար՝

- Տեղյակ եղեք, թե որտեղ են նրանք ընթանում: Շենքերը, ծառերը և այլ օբյեկտներ փակում են վարորդի տեսադաշտը:
- Երբեք շրջադարձ մի կատարեք մոտեցող արագընթաց ներքաղաքային զնացքների առջևից:
- Ապահով հեռավորություն պահպանեք արագընթաց ներքաղաքային զնացքից, եթե այն երթևեկում է ավտոտրանսպորտի հետ միևնույն փողոցով:



Անվտանգության գոտիները գծանշված են սպիտակ կետագծերով:



Շրջադարձ մի կատարեք արագընթաց ներքաղաքային զնացքների առջևից:

- Արագընթաց ներֆաղաֆային գնացքի գծերը հատելիս ստուգե՛ք՝ արդյո՞ք այն չի մոտենում: Շրջադարձը կատարե՛ք միայն այն ժամանակ, երբ ֆանապարհային լուսացույցը թույլ է տալիս դա անել:

Արագընթաց ներֆաղաֆային գնացքները կարող են խանգարել ֆանապարհային լուսացույցին: Տեղից մի շարժվե՛ք, մինչև լուսացույցի լույսը ցույց տա, որ կարելի է շարունակել:

### Մոտոցիկլետներ

Նրանք ունեն նույն իրավունքներն ու պարտականությունները, ինչ ավտովարորդներն ու

բեռնատարների վարորդները: Նրանք նույնպես բախվում են լրացուցիչ վտանգների: Մոտոցիկլետները պահանջում են վարման բացառիկ ունակություն և դժվար տեսանելի են:

Մոտոցիկլավարները կարող են մեծացնել իրենց տեսնելու հնարավորությունները՝

- Ցուլալպտերներն անընդհատ վառ պահելով նույնիսկ օրվա ընթացքում:
- Կրելով վառ գույնի բանկոն, ժիլետ կամ սաղավարտ:
- Ավելացնելով լույս անդրադարձնող ասրիբուտ իրենց սաղավարտի կամ հագուստի վրա:
- Օգտագործելով շրջադարձային ազդանշաններ:
- Ընթացքը դանդաղեցնելուց առաջ արգելակման լույսերը թարթելով, որպեսզի մյուս վարորդները ավելի հեշտ նկատեն մոտոցիկլետը:
- Խուսափելով այլ տրանսպորտային միջոցների կույր գոտիներից:
- Գոտու բաժանման ժամանակ տրանսպորտային միջոցների միջև չդանդաղելով:

Մոտոցիկլավարների հետ անվտանգ համատեղ երթևեկելու համար՝

- Ստուգե՛ք մոտոցիկլետների առկայությունը և օգտագործե՛ք ձեր հայելիները, երբ փոխում ե՛ք գոտիները կամ մտնում հիմնական ֆանապարհ: Մոտոցիկլետներն ավելի փոքր են և դժվար տեսանելի, այնպես որ դրանք հեշտությամբ անհետանում են տրանսպորտային միջոցի կույր գոտիներում:
- Չորս վայրկյանի չափ տարածություն պահպանե՛ք: Այս տարածությունը կօգնի ձեզ խուսափել մոտոցիկլավարին հարվածելուց, եթե նրանք հանկարծակի արգելակեն կամ ընկնեն:
- Հնարավորության դեպքում մոտոցիկլետին տվե՛ք ամբողջական գոտի: Մոտոցիկլետների հետ նույն գոտով ընթանալը օրինական է, բայց ոչ անվտանգ:
- Երբեք մի փորձե՛ք մոտոցիկլետին վազանցել նույն գոտով:
- Հնարավորության դեպքում տեղափոխվե՛ք ձեր գոտու մի կողմը, որպեսզի մոտոցիկլավարներին վազանցելու համար ավելի շատ տեղ հատկացնե՛ք:
- Ստուգե՛ք մոտոցիկլավարների առկայությունը նախքան երթևեկի մոտ ձեր դուռը բացելը:
- Թե՛քվելուց առաջ ստուգե՛ք մոտոցիկլավարների առկայությունը և գնահատե՛ք նրանց արագությունը:

Ճանապարհային պայմանները կարող են մտոցիկլավարների մոտ հանկարծակի փոխել արագությունը կամ ուղղությունը: Դրանք ներառում են հետևյալը՝

- Փոսեր
- Մանրախիբ մակերևույթ
- Թաց կամ սայթափուն մակերևույթ
- Մայթի կարեր
- Երկաթուղային անցումներ
- Խնապատ մայր

Դուք կարող եք օգնել նվազեցնել մտոցիկլավարների վնասվածքներն ու մահվան դեպքերը՝ տեղյակ լինելով այս պայմաններին:

Մտոցիկլետի անվտանգության մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար տե՛ս Կալիֆոռնիայի մտոցիկլավարների անվտանգության ծրագիրը **chp.ca.gov** կամ 1-877-RIDE-411 կայքում:

### Փրկարարական տրանսպորտային միջոցներ

Դուք պետք է հանապարհը զիջեք ոստիկանական, հրեջջ, շտապ օգնության և շշակ ու կարմիր փարոսիկներ ունեցող այլ հատուկ նշանակության տրանսպորտային միջոցներին: Ծարժվեք դեպի հանապարհի աջ եզրը և կանգ առեք, մինչև փրկարարական տրանսպորտային միջոցը (միջոցները) անցնի (անցնեն):



Ճանապարհը զիջեք հատուկ նշանակության մեքենաներին:

Սա չի վերաբերվում այն դեպքերին, եթե դուք գտնվում եք խաչմերուկում: Սակայն, երբեք կանգ մի առեք խաչմերուկում: Եթե դուք գտնվում եք խաչմերուկում, երբ տեսնում եք փրկարարական տրանսպորտային միջոց, շարունակեք շարժվել խաչմերուկով: Ծարժվեք դեպի աջ, մինչև որ ապահով լինի, և կանգ առեք:

Փրկարարական տրանսպորտային միջոցները հաճախ օգտագործում են փողոցի սխալ կողմը: Երբեմն նրանք իրենց ընթացուղիին փակող վարորդներին բարձրախոսի օգնությամբ հրահանգում են ազատել հանապարհը:


Հնագանդվեք հանապարհային երթևեկի, իրավապահի կամ հրեջջի կողմից տրված ցանկացած ցուցմանը, հրամանին կամ ազդանշանին: Հետևեք նրանց հրամաններին, նույնիսկ եթե դրանք հակասում են առկա նշաններին, ազդանշաններին կամ օրենքներին:

Օրենքով արգելվում է 300 ֆուտից ավելի մոտենալ հրեջջ ծառայության, ոստիկանության, շտապ օգնության կամ այլ արտակարգ իրավիճակների ծառայության տրանսպորտային միջոցի, որն ունի շշակ և թարթող փարոսիկներ:

Դուք կարող եք ձեռքակալվել, եթե տրանսպորտային միջոցով շարժվում եք դեպի հրդեհի, բախման կամ այլ աղետի վայր: Երբ դա անում եք, դուք խոչընդոտում եք հրեջջներին, շտապ օգնության կամ փրկարարական և արտակարգ իրավիճակների այլ անձնակազմերին:

## Դանդաղ շարժվող տրանսպորտային միջոցներ

Խոշոր բեռնատարները, հեծանիվները և որոշ տրանսպորտային միջոցներ կարող են կորցնել արագությունը երկար կամ կտրուկ բլուրների վրա: Նրանց մուտքը երթևեկություն արագությունը մեծացնելու նկատառումներով կարող է նաև ավելի երկար տևել: Որոշ տրանսպորտային միջոցներ նախատեսված չեն երթևեկության սովորական արագությամբ ընթանալու համար: Գյուղատնտեսական տրակտորները, լծասայերը



Դանդաղաշարժ մեքենայի օրինակ:

և հանապարհների տեխնիկական սպասարկման տրանսպորտային միջոցները սովորաբար շարժվում են ժամում

25 մղոն կամ ավելի ցածր արագությամբ: Դանդաղընթաց տրանսպորտային միջոցների հետևի մասում նաբնջագույն կամ կարմիր եռանկյունի նշան կա: Երբ տեսնեք այս տրանսպորտային միջոցները, հարմարեցրեք ձեր արագությունը մինչև նրանց հասնելը:

Կան դանդաղաշարժ շարժիչային տրանսպորտային միջոցների այլ տեսակներ, որոնք կարող են ընթանալ հանրային հանապարհներով: Դրանց մեջ մտնում են՝

- Անվտանգակներ
- Սկուտերներ
- Համայնքային էլեկտրամոբիլներ (*Neighborhood electric vehicles, NEVs*)
- Գոլֆ մոբիլներ

Կարգավորեք ձեր արագությունը՝ այս տրանսպորտային միջոցների հետ համատեղ երթևեկելու համար: Լինում են պահեր, երբ այդ տրանսպորտային միջոցներից մեկը կարող է ավելի ցածր արագությամբ շարժվել, քան երթևեկության արագությունը երկու գոտի ունեցող մայրուղու վրա, որտեղ անցումն անվտանգ է: Եթե դանդաղ շարժվող տրանսպորտային միջոցի ետևում հինգ կամ ավելի տրանսպորտային միջոցների շարք է ստեղծվում, այն պետք է թեֆվի հանապարհից դեպի մոտակա անվտանգ վայր: Դա կարող է լինել գծանշված լրացուցիչ տարածք կամ այնպիսի տարածք, որտեղ բավարար տեղ կա անվտանգ շրջանցելու համար:

### Համայնքային էլեկտրամոբիլներ (*Neighborhood electric vehicles, NEVs*)

#### և ցածր արագության տրանսպորտային միջոցներ (*Low-speed Vehicles, LSV*)

Զգուշացե՛ք դանդաղաշարժ մեքենաներից, երբ տեսնում եք այս նշանները կամ գծանշումները՝

- NEV USE ONLY
- NEV ROUTE

NEV-երը և LSV-ները կարող են մինչև ժամում 25 մղոն առավելագույն արագություն զարգացնել: Նրանց արգելվում է երթևեկել այն հանապարհներին, որտեղ արագության սահմանաչափը գերազանցում է ժամում 35 մղոնը:

Գրանցված NEV-երի և LSV-ների սեփականատերերը պետք է բավարարեն ֆինանսական պատասխանատվության օրենքների պահանջները և վարորդական իրավունքի վկայական ունենան այդ տրանսպորտային միջոցների շահագործման համար:

## Կենդանաբարձ փոխադրամիջոցներ

Ջրաբարձ սայլերը, ինչպես նաև ձի կամ որևէ այլ կենդանի հեծած անձի կհամարվեն ստանդարտային միջոցների հետ ունեն համատեղ երթևեկելու իրավունք:

Ջրեբին խրտեցնելը կամ անասունների խոհանոցի մատնելը երթևեկության կանոնների խախտում է համարվում: Անհրաժեշտության դեպքում դանդաղեցնել ստանդարտային միջոցի ընթացքը կամ կանգ առնել:

## Հեծանիվներ

Հեծանվորդներն ունեն նույն իրավունքներն ու պարտականությունները, ինչ ավտովարորդներն ու մոտոցիկլավարները:


Հեծանվորդները կարող են՝

- Երթևեկել արագընթաց մայրուղու որոշ հատվածներում, որտեղ այլընտրանքային երթուղի չկա, և հեծանվավարումն արգելող որևէ նշան չկա:
- Տեղափոխվել ձախ՝ վտանգներից խուսափելու համար: Դրանք կարող են ներառել կայանված կամ շարժվող ստանդարտային միջոցներ, հեծանիվներ, կենդանիներ կամ աղբ:
- Իրենց ընտրությամբ շարժվել միակողմանի փողոցի ձախ մայրեգրի կամ ֆամփեգրի մոտով:


Հեծանվորդի պարտականությունները

Հեծանվորդները պետք է՝

- Ենթարկվեն բոլոր ֆանադարիային նշանների և լուսացույցի լույսերին:
- Հեծանվավարեն փողոցային երթևեկության ուղղությամբ:
- Ազդանշաններ երթևեկության գոտիներում վերադասավորվելիս կամ շրջադարձ կատարելիս:
- Ճանապարհը զիջեն հետիոտներին:
- Սաղավարտ կրեն (18-ից ցածր տարիքի դեպքում):
- Թույլ տան, որ ավելի արագ ընթացող ստանդարտային միջոցները վազանցեն, երբ դա անվտանգ է:
- Լինեն տեսանելի (օրինակ՝ երբեք չխուսավարեն կայանված ստանդարտային միջոցների միջև):
- Երթևեկեն աջ եզրաֆորին կամ երթևեկելի մասի եզրին հնարավորինս մոտ:
- Չերթևեկեն մայրով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դա թույլատրված է այն ֆազանում, որտեղ հեծանիվ է վարում:
- Չախ և աջ շրջադարձերը կատարեն նույն կերպ, ինչ մյուս վարորդները՝ օգտվելով շրջադարձերի միևնույն գոտիներից: Ուղիղ երթևեկելիս երթևեկեն երթևեկության գոտով կամ, երբ հնարավոր է, հեծանվային գոտով:



Հեծանվորդների շրջադարձի օրինակներ:



Հեծանվորդների համար հատուկ գոտիներ ունեցող խաչմերուկներ:

- Ունենան արգելակ հեծանվի վրա: Արգելակը պետք է հեծանվորդին հնարավորություն տա մեկ անվով արգելակել չոր և մաքուր մայրին:

Հեծանվով երթևեկություն զիեերը

Մուք ժամանակ հեծանվորդները պետք է խուսափեն մուգ հագուստ կրելուց:

Դրանք պետք է ունենան հետևյալ սարքավորումները՝

- Դիմացի լապտեր, որն արձակում է 300 ֆուտ հեռավորությունից տեսանելի սպիտակ լույս:
- Հետևի կարմիր անդրադարձիչ, հոծ կարմիր լույս կամ քարթոդ կարմիր լույս: Այն պետք է ունենա ներկառուցված անդրադարձիչ, որը տեսանելի է 500 ֆուտ հեռավորությունից:
- Սպիտակ կամ դեղին անդրադարձիչ՝ յուրաքանչյուր ոտնակին, հեծանվորդի կոշիկներին կամ ոտներին: Դրանք պետք է տեսանելի լինեն 200 ֆուտ հեռավորության վրա:
- Սպիտակ կամ դեղին անդրադարձիչ առջևի անիվի վրա, սպիտակ կամ կարմիր անդրադարձիչ հետևի անիվի վրա, կամ անդրադարձնող հատկությամբ անվազողեր:

Հեծանվով վարելը երթևեկության գոտիներում

Երթևեկության հոսքից դանդաղ ընթացող հեծանվորդները պետք է հեծանվովարեն աջ մայրեզրին կամ երթևեկելի մասի եզրին հնարավորինս մոտ՝ բացառությամբ հետևյալ իրավիճակներից՝

- Նույն ուղղությամբ ընթացող տրանսպորտային միջոցին կամ մեկ այլ հեծանվի վազանցելիս:
- Խաչմերուկում, դեպի մասնավոր հանապարհ կամ ուղեմուտքի մոտ ձախ շրջադարձի նախապատրաստվելիս:
- Վտանգից կամ հանապարհի վիճակից խուսափելը (օրինակ՝ հետիոտներից, կենդանիներից, մակերևութային վտանգներից):
- Երբ երթևեկության գոտին չափազանց նեղ է հեծանվի և տրանսպորտային միջոցի՝ այդ գոտով կողմ-կողմի անվտանգ ընթանալու համար:
- Աջ շրջադարձին մոտենալիս:
- Երբ հանապարհը երկու կամ ավելի երթևեկության գոտիներով միակողմանի հանապարհ է: Այս դեպքում հեծանվորդը կարող է ընթանալ ձախ եզրաֆարին կամ երթևեկելի մասի եզրին մոտ:

Վարորդները պետք է հետևեն անվտանգ հեռավորության վրա: Անվտանգ ժամանակ հեծանվորդը պետք է տեղափոխվի այնպիսի դիրք, որը թույլ է տալիս վազանցել տրանսպորտային միջոցների:



## Հեծանվորդին վագանցելը

Ճանապարհային գոտում գտնվող հեծանվորդին անվտանգ վագանցելու համար հնարավոր է, որ վարորդն անցնի այլ գոտի: Այս դեպքում վագանցեք անվտանգ և արագ, այնուհետև վերադարձեք ձեր նախնական գոտի: Տեղ թողեք ձեր մեքենայի և հեծանվորդի միջև:

Ճիշտ է



Միայն է



Երբ անհնար է վերադասավորում կատարել հեծանվորդին անցնելու համար, անվազն **3** ֆուտ տարածություն թողեք ձեր տրանսպորտային միջոցի և հեծանվորդի միջև: Դանդաղեցրեք, եթե չեք կարող երեք ֆուտ տարածություն տրամադրել: Սա կօգնի ձեզ խուսափել հեծանվորդի վտանգի տակ դնելուց:

Վարորդները նաև պետք է հիշեն՝

- Հեծանվորդներին բավական տարածություն տալ, որպեսզի նրանք ստիպված չլինեն երթևեկել կայանված տրանսպորտային միջոցների կամ բաց տրանսպորտային դռների մոտով:
- Շարժվել դեպի համալիր կամ հեծանվային գոտի միայն այն ժամանակ, երբ դա անվտանգ է:
- Շրջադարձ կատարելուն նախապատրաստվելիս անվտանգ տեղ գրադեցնել հեծանվորդի հետևում:
- Հեծանվային գոտի մուտք գործել միայն շրջադարձից ոչ ավելի, քան 200 ֆուտ առաջ:
- Գոտիները փոխելիս կամ երթևեկության հոսքի մեջ մտնելիս հայացքով ստուգել հեծանվորդների առկայությունը: Նրանք կարող են թաքնված լինել տրանսպորտային միջոցի կույր գոտում:
- Զգույշ լինել երկգոտի հանապարհին որևէ հեծանվորդի մոտենալիս կամ վագանցելիս:

**Ճանապարհաչինարարներ և աշխատանքների իրականացման գոտիներ**  
Դուք կտեսնեք նախագրուածական նշաններ և հաղորդագրությունների տախտակներ, երբ առջևում աշխատողներ, դանդաղաբար սարքավորումներ և փակ գոտիներ լինեն:

Ձեր և ձեր ուղևորների անվտանգության համար հիշեք, որ աշխատանքային գոտին պետք է անցնել զգուշորեն:

- Արագությունը նվազեցրեք:
- Տրանսպորտային միջոցների միջև լրացուցիչ տարածք թողեք:
- Միաձուլվեք շուտ:
- Ակնկալեք հանկարծակի դանդաղեցում կամ դադարեցում:
- Զգուշացեք վերջին պահին վարորդների կողմից գոտի փոխելուց:
- Խուսափեք ուշադրությունը շեղող գործոններից:

Աշխատանքների իրականացման գոտում կոնաձև, գլանաձև կամ այլ նշանները ձեզ կուղղորդեն: Ձեր տրանսպորտային միջոցի արագությունը կրճատեք: Պատրաստվեք դանդաղեցնելուն կամ կանգ առնելուն առջևում քանապարհային տեխնիկայի առկայության պատճառով: Վերադասավորվեք հնարավորին շուտ, երբ դա անվտանգ է առանց հատելու կոնաձև կամ գլանաձև նշանները: Հետևել հեծանիվներին, եթե գոտիները նեղ են կամ քամիկը փակ է: Նրանց ներկա լինելու դեպքում երթևեկեք համատեղ: Հետևեք աշխատանքների իրականացման գոտում արագության սահմանափակմանը և արագության ավելի ցածր սահմանաչափի մասին նախագրուածացնող նշաններին: Աշխատանքները դիտելու համար կանգ մի առեք կամ տրանսպորտային միջոցի ընթացքը մի դանդաղեցրեք: Ենթարկվեք աշխատողների (ագրարարների) հատուկ նշաններին և ցուցումներին:

**Տուգանքներ և կրկնակի տուգանքի գոտիներ**

Աշխատանքների իրականացման գոտում երթևեկության կանոնների խախտման համար նախատեսված տուգանքները կարող են կազմել **\$1000** և ավելի: Ճանապարհաչինակա ն աշխատանքներ կատարող բանվորին վրաերթի ենթարկելու համար մեղադրվող անձնավորությունը կարող է տուգանվել **\$2000**-ի չափով կամ ազատագրվել մինչև մեկ տարի ժամկետով:

Որոշակի քանապարհներ ընտրվում են որպես «Անվտանգության ուժեղացված և կրկնակի տուգանքի գոտիներ»: Դա պայմանավորված է բախումների հետ կապված վնասվածքների և մահվան ելքով դեպքերի աճով: Այս գոտիներում տուգանքները կրկնապատկվում են:

Տուգանքները կրկնապատկվում են նաև մայրուղիների կառուցման կամ տեխնիկական սպասարկման գոտիներում, երբ աշխատողները ներկա են:

Տեղափոխվել և տրանսպորտային միջոցի ընթացքը դանդաղեցնել  
Փրկարարական և հանապարհային աշխատանքային տրանսպորտային միջոցների  
առկայության դեպքում վարորդները պետք է տեղափոխվեն և դանդաղեցնեն  
տրանսպորտային միջոցի ընթացքը: Այդպիսի տրանսպորտային միջոցներ են՝

- Ստացիոնար փրկարարական տրանսպորտային միջոցները կամ ֆարեակները, որոնք ունեն դեղին թարթող նախազգուշացման լույսեր:
- Տրանսպորտի նախարարության (Կալտրան) կանգ առած տրանսպորտային միջոցները, որոնք ունեն վթարային թարթող կամ դեղին նախազգուշացնող լույսեր:

Այս տրանսպորտային միջոցներից մեկին մոտենալիս վարորդները պետք է տեղափոխվեն գոտով (երեք անվտանգ է) կամ դանդաղեցնեն արագությունը:

### Վտանգավոր բեռներ փոխադրող տրանսպորտային միջոցներ **Hazardous Load Placards**

Բեռնատարի վրա շեղանկյունաձև նշանը նշանակում է, որ բեռնատարի բեռը կարող է վտանգավոր լինել (գազ, պայթուցիկ նյութեր և այլն): Այս նշաններով տրանսպորտային միջոցները պետք է կանգ առնեն նախօրինակաբար դժբերակային գծերը հատելը:



Վտանգավոր բեռի ցուցանակների օրինակներ:

### ԱՐԱԳՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓՈՎՈՒՄՆԵՐ և ԻՋԵՑՎԱԾ ԱՐԱԳՈՒԹՅՈՒՆ

Կալիֆոռնիայում գործում է «Երթևեկության արագության մասին հիմնական օրենքը»: Այս օրենքով սահմանվում է, որ երբեք չի կարելի գերազանցել այն արագությունը, որն անվտանգ է այդպիսի պայմաններում:

Կան նաև իրավիճակներ, որոնք վերաբերում են արագության սահմանափակման հատուկ օրենքներին և պայմաններին, երբ դուք պետք է նվազեցնեք ձեր արագությունը: Եթե այլ բան նշված չէ, երկգոտի չբաժանված ավտոմայրուղում կցորդով տրանսպորտային միջոցների համար առավելագույն քույլատրելի արագությունը ժամում **55** մղոն է:

### Ինտենսիվ երթևեկության կամ անբարենպաստ եղանակային պայմաններ

Ինտենսիվ երթևեկության կամ անբարենպաստ եղանակային պայմաններում պետք է ավելի

դանդաղ վարել: Միևնույն ժամանակ չպետք է արգելափակեք երթևեկի բնականոն և ողջամիտ հոսքը՝ երթևեկելով շատ դանդաղ: Հակառակ դեպքում կարող եք սուզանվել: Եթե նախընտրում եք մյուսներից ավելի դանդաղ երթևեկել, մի երթևեկեք արագ գոտում: Տեղափոխվեք աջ, երբ մեկ այլ վարորդ ձեր ետևում է և ցանկանում է ավելի արագ ֆեյ: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս «Երթևեկության գոտու ընտրությունը» («Բաժին 9»): Ճանապարհներով երթևեկումը» բաժնում:

## Քարեակում

Դուք պետք է երթևեկեք ծայրային աջ գոտում կամ դանդաղ ընթացող տրանսպորտային միջոցների համար նախատեսված գոտում, երբ՝

- Քարեակում եք տրանսպորտային միջոց կամ կցորդ:
- Վարում եք ավտոբուս:
- Վարում եք երեք կամ ավելի սոնի ունեցող բեռնատար:

Եթե ոչ մի գոտի գծանշված չէ, և ձեր ընթացքի ուղղությամբ չորս կամ ավելի գոտի կա, ապա թույլատրվում է տրանսպորտային միջոցը վարել միայն նախապարհի աջ եզրին ամենամոտ երկու գոտիներից մեկնումնեկով:


Հետիոտները, հեծանվորդները և այլ տրանսպորտային միջոցները կարող են հանկարծակի ուժեղ ֆունիներ առաջացնել, երբ վազանցում են ձեզ կամ դուք եք վազանցում իրենց: Դանդաղեցնել արագությունը և շատ զգույշ անցնել:

## Երեխաների մոտակայքում

Դպրոցից 500-ից 1000 ֆուտ հեռավորության վրա արագության սահմանաչափը 25 մղոն/ժամ է, երբ երեխաները դրսում են կամ փողոց են հատում (եթե այլ բան սահմանված չէ): Որոշ դպրոցների տարածքները կարող են ունենալ ընդամենը ժամում 15 մղոն արագության սահմանափակում:

Դպրոցների մոտակայքում ուշադիր եղեք, որպեսզի նկատեք՝

- Հեծանվորդներին և հետիոտներին:
- Դպրոցների մոտակայքում անվտանգությունը հսկող պարեկին կամ փողոցային երթևեկությունը կարգավորողին: Անպայման հետևեք նրանց հրահանգներին: Փողոցային երթևեկությունը կարգավորողի անվտանգության համար թույլ տվեք, որ նա ապահով կերպով հասնի փողոցի եզրին, և նոր միայն շարժվեք առաջ:
- Կանգնած դպրոցական ավտոբուսներին և փողոցը հատող երեխաներին:
  - Որոշ դպրոցական ավտոբուսներ համալրված են դեղին վարտուկով, որը թարթում է, երբ այն պատրաստվում է կանգ առնել և դուրս թողնել երեխաներին: Դեղին թարթող լույսը զգուշացնում է, որ անհրաժեշտ է դանդաղեցնել տրանսպորտային միջոցի ընթացքը և պատրաստվել կանգ առնելու:
  - Եթե թարթում են ավտոբուսի կարմիր լույսերը (որոնք գտնվում են ավտոբուսի վերևում՝ առջևից և հետևից), ապա պետք է կանգ առնել՝ անկախ ձեր ընթացքի ուղղությունից, մինչև երեխաներն ապահով կերպով հատեն փողոցը, որից հետո կարմիր լույսերը կդադարեն թարթել:
  - Օրենքն արգելում է տեղից շարժվել այնքան ժամանակ, քանի դեռ կարմիր լույսերը թարթում են: Եթե կանգ չառնեք, կարող եք տուգանվել մինչև \$1000, և ձեր վարորդական իրավունքը կարող է կասեցվել 1 տարով:
  - Եթե դպրոցական ավտոբուսը գտնվում է երկկողմ կամ բազմագոտի (յուրաքանչյուր ուղղությամբ երկու կամ ավելի երթևեկության գոտի ունեցող) ավտոճանապարհի հակառակ կողմում, կարելի է կանգ չառնել:



Բոլոր տրանսպորտային միջոցները դպրոցական ավտոբուսների համար պետք է կանգ առնեն:

## Կույր խաչմերուկներ

Խաչմերուկը կույր է համարվում, եթե՝

- Այն ոչ մի անկյունում կանգառի նշան չունի:
- Դուք գտնվում եք խաչմերուկից 100 ֆուտ հեռավորության վրա և չեք կարող տեսնել հանապառիչ առնվազն 100 ֆուտ երկու ուղղություններով:

Եթե տեսադաշտը փակված է, դանդաղորեն առաջ շարժվեք, մինչև կարողանաք տեսնել: Կույր խաչմերուկներում թույլատրելի արագությունը ժամում 15 մղոն է:

## Նրբանցքներ

Նրբանցքը 25 ֆուտից ոչ ավելի լայնություն ունեցող հանապառիչ է, որն օգտագործվում է շենքի կամ սեփականության ետնամասի կամ կողային մուտքեր մուտք գործելու համար: Ցանկացած նրբանցքում թույլատրելի արագությունը ժամում 15 մղոն է:

## Երկաթուղիների մուտակայքում

Երկաթուղային գծանցից մինչև 100 ֆուտ հեռավորության վրա, որտեղ ի վիճակի չեք

տեսնել 400 ֆուտ հեռավորության վրա գտնվող ռելսուղիները և՛ աջ, և՛ ձախ ուղղությամբ, թույլատրելի արագությունը ժամում 15 մղոն է:

Դուք կարող եք ժամում 15 մղոնից ավելի արագ ընթանալ, եթե գծանցը կարգավորվում է ուղեփակոցներով, զգուշացնող ազդանշաններով կամ ազդարարի միջոցով:

Երկաթուղային գծանցներում կամ զնացքների խաչադիպման կետերում՝

- Նայեք և՛ աջ, և՛ ձախ ու ականջ դրեք մոտեցող զնացքի ձայնին: Շատ անցումներ ունեն բազմաթիվ ուղիներ: Նախքան հատելը անհրաժեշտության դեպքում պատրաստ եղեք կանգ առնել: Ռելսուղիները հատեք միայն հատուկ նախատեսված գծանցներում և միայն այն ժամանակ, երբ դա անվտանգ է:
- Նկատի ունեցեք, որ ցանկացած պահի, ցանկացած ուղղությամբ և ցանկացած գծով կարող է զնացք շարժվել: Եթե երկաթուղագծերն անցնելուց հետո հարկավոր է կանգ առնել, ապա դա անելուց առաջ սպասեք, մինչև ձեր տրանսպորտային միջոցը ամբողջովին անցնի գծերից: Կանգ առնելուց առաջ համոզվեք, որ մինչև վերջ անցել եք երկաթգծերը:
- Երբեք կանգ մի առեք երկաթգծերի վրա: Երկաթգծի վրա կանգ առնելը վտանգում է ձեր կյանքը, և կարող եք մարմնական վնասվածքներ ստանալ կամ գոհվել:

- Ուշագիշտ եղե՛ք՝ նկատելու այն տրանսպորտային միջոցները, որոնք պետք է կանգ առնեն երկաթուղին հատելուց առաջ: Այդ տրանսպորտային միջոցներից են ավտոբուսները, դպրոցական ավտոբուսները և վտանգավոր բեռներ փոխադրող բեռնատարները:
- Երբ անցուղու սարքերը ակտիվ են կամ մարդը զգուշացնում է, որ զնացք է գալիս, կանգ առե՛ք մոտակա զծից **15** ֆուտից մինչև **50** ֆուտ հեռավորության վրա:
- Կանգ առե՛ք, եթե տեսնում եք, որ զնացք է գալիս, կամ լսում եք մոտեցող զնացքի սուլոցը, ձայնային ազդանշանը կամ զանգը:
- Մի անցե՛ք իջնող ուղեփակոցի տակով կամ մի շրջանցե՛ք փակ ուղեփակոցը:
- Նախագգուշացնող կարմիր թաքթոդ լույսերը ցույց են տալիս, որ պետք է կանգ առնե՛ք և սպասե՛ք: Մի շարունակե՛ք անցումը երկաթուղագծերի վրայով, քանի դեռ կարմիր լույսի թաքթումը չի դադարել, նույնիսկ եթե ուղեփակոցը բարձրանա: Եթե ուղեփակոցն իջեցված է, և դուք չե՛ք տեսնում մոտեցող զնացքը, զանգահարե՛ք երկաթուղային արտակարգ իրավիճակների նշված անվճար հեռախոսահամարին կամ **9-1-1**: Պատրաստ եղե՛ք հաղորդելու ձեր գտնվելու վայրի մանրամասն նկարագրությունը:

### Թերև երկաթուղային անցումներ

Գործում են զնացքների անցման կանոնները: Արագընթաց ներքաղաքային զնացքները շատ անադունկ են շարժվում և շատ ավելի շուտ են արագություն հավաքում, քան զնացքները:

### Ավտոբուսներ, տրամվայներ և տրոլեյբուսներ

Երբ ավտոբուսը, տրամվայը կամ տրոլեյբուսը կանգ են առած, նրանց վազանցելու արագության սահմանաչափը, եթե վազանցը անվտանգ է, ոչ ավելի, քան **10** մղոն/ժ է: Իմացե՛ք ավելին ավտոբուսների, տրամվայների և տրոլեյբուսների մասին այս բաժնի «Ճանապարհով այլ տրանսպորտային միջոցների հետ միասին երթե՛վեկելը» ենթբաժնում:

### Գործարար կամ բնակելի թաղամասեր

Թույլատրելի արագությունը ժամում **25** մղոն է, եթե այլ բան նշված չէ:

### Կենդանիների մոտակայքում

Եթե տեսնում եք կենդանու նկարով նշան, ուշագիշտ եղե՛ք երթևեկելի մասում կամ

մոտակայքում հնարավոր կենդանիների նկատմամբ: Եթե հանապարհի մոտ կենդանիներ կամ անասուններ եք տեսնում, դանդաղեցրե՛ք կամ կանգ առե՛ք և անցե՛ք, երբ դա անվտանգ է: Անպայման հետևե՛ք կենդանիների համար պատասխանատու անձի ցուցումներին: Խույս մի տվե՛ք: Դուք կարող եք կորցնել տրանսպորտային միջոցի կառավարումը և վրաբ առաջացնել:



## ԿԱՐԼՈՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԱՊԱՐԸԻ ՄԱՍԻՆ

Արգելվում է՝

- Ծխել, երբ անչափահասը տրանսպորտային միջոցի մեջ է: Դուք կարող եք տուգանվել մինչև \$100-ի չափով:
- Նետել կամ թողնել կենդանիներին ավտոմայրուղու վրա: Այս հանցանքը պատժվում է մինչև \$1,000 տուգանքով, 6 ամիս բանտարկությունը կամ երկուսը միասին:
- Ուղարկել կամ կարգալ տեֆտային հաղորդագրություններ կամ էլեկտրոնային նամակներ տրանսպորտային միջոց վարելիս:
- Կրել ակնջակալներ կամ ակնջախցաններ երկու ակնաջներում միաժամանակ տրանսպորտային միջոց վարելիս:
- Վարել տրանսպորտային միջոցն իրերով կամ մարդկանցով այնքան ծանրաբեռնված, որ կորցնեք կառավարումը կամ չտեսնեք ձեր դիմացը կամ կողքերը:
  - Արգելվում է վարել որևէ տրանսպորտային միջոց, որը փոխադրում է անապահով և անվտանգությանը սպառնալիք ներկայացնող բեռ: Փիֆափ բեռնատարների էտնամասում գտնվող անապահով բեռները, ինչպիսիք են սանդուղիները, դուլլերը և չամրացված իրերը, կարող են ընկնել ճանապարհի վրա և վտանգավոր լինել այլ ավտովարորդների, հատկապես մոտոցիկլավարների համար:
- Տեղափոխել մարդատար տրանսպորտային միջոցում կամ տրանսպորտային միջոցի վրա որևէ իր, որը դուրս է գալիս ձախ ցայտապաշտպանների եզրագծից, կամ 6 դյույմից ավելի է դուրս գալիս աջ ցայտապաշտպանների եզրագծից: Տրանսպորտային միջոցի հետևի թափարգելը ավելի քան 4 ֆուտ գերազանցող բեռը պետք է ունենա 12 դյույմանոց կարմիր կամ նարնջագույն ֆլուորեսցենտային բառակուսի դրոշակ: Գիշերը այս բեռը պետք է նշվի երկու կարմիր լույսով:
- Թույլ տալ մարդուն նստել փիֆափի կամ այլ բեռնատարի հետևի հատվածում, քանի դեռ տրանսպորտային միջոցը նստատեղ չունի: Այս դեպքում ուղևորը պետք է օգտագործի ինչպես նստատեղը, այնպես էլ անվտանգության գոտին:
- Տեղափոխել կենդանիներ փիֆափի կամ այլ բեռնատարի հետևում, քանի դեռ կենդանին պատշաճ կերպով ապահովված չէ: Դա կանխում է կենդանու ընկնելը, ցատկելը կամ տրանսպորտային միջոցից նետվելը:
- Վարել տեսամոնիտորով համալրված տրանսպորտային միջոց, եթե մոնիտորը տեսանելի է վարորդին և ցուցադրում է տրանսպորտային միջոցի մասին տեղեկությունները, աշխարհի քարտեզները, արտափին մեդիա նվազարկչից (MP3) և արբանյակային ռադիոտեղեկատվությունից տարբեր այլ պատկերներ:
- Մեքենայից նետել ձխախոտ, սիգար կամ այլ բոցավառվող կամ այրվող առարկաներ:

- Տեղադրել նշաններ կամ այլ առարկաներ առջևի դիմապակու կամ հետևի կողային պատուհանների վրա, որոնք արգելափակում են ձեր տեսադաշտը: Հայելուց առարկաներ մի կախե՛ք: Հողմապակու և պատուհանների պիտակները և այլնը թուլատրվում են միայն հետևյալ տեղերում՝
  - 7 դյույմ ֆուտկուսու վրա՝ կամ ուղևորի կողմից դիմապակու ստորին անկյունում կամ հետևի պատուհանի ստորին անկյունում:
  - 5 դյույմ ֆուտկուսու վրա՝ վարորդի կողմի պատուհանի ստորին անկյունում:
  - Վարորդի հետևի կողային պատուհանների վրա:
  - 5 դյույմ ֆուտկուսու վրա՝ ձեր հողմապակու կենտրոնական հատվածի վերևում՝ նախատեսված ֆանապարհային հարկերի հավաքագրման էլեկտրոնային սարքի համար:
- Խանգարել թաղման թափորին: Դուք կարող եք տուգանվել, եթե ընդհատե՛ք թաղման թափորը: Սգո երթը գլխավորում է ֆանապարհային երթևեկության աշխատակիցը և ունի երթևեկության առավելություն: Թափորին մասնակցող բոլոր մեքենաների հողմապակիների վրա հատուկ նշաններ կան, և դրանց բոլորի ցուլապատերները միացված են:
- Կառավարել տրանսպորտային միջոց, որն ունի տեսողական կամ էլեկտրոնային սարք, որը դժվարացնում է պետհամարանիշի ընթերցումը:
- Փոխել պետհամարանիշը:

**Պարտադիր է՝**

- Միացնել ցուլապատերները մայրամուտից **30** րոպե անց:
- Միացնել ցուլապատերներն արևածագից **30** րոպե առաջ:
- Ցուլապատերների հեռարձակ լույսից անցնել մոտարձակ լույսի դեպի ձեզ շարժվող տրանսպորտային միջոցից մինչև **500** ֆուտ և ձեր առջևից ընթացող տրանսպորտային միջոցից մինչև **300** ֆուտ հեռավորության վրա:



## Տուգանում

Եթե իրավապահը ձեզ կանգնեցնում է և տուգանում երթևեկության կանոնների խախտման համար, դուք վատաբառալից եք ստորագրում՝ խոստանալով ներկայանալ հանապարհատրանսպորտային դատարան:

Եթե դուք չեք պահում դատարանում ներկայանալու ձեռք խոստումը, ապա չներկայանալը (FTA) նշանակում է վարորդական գործում, և DMV-ն կարող է կասեցնել ձեր վարորդական իրավունքը: Դուք պետք է դատարանի հետ մաքրեք բոլոր FTA-ները և վճարեք պահանջվող վճարները:

Ամեն անգամ, երբ դուք դատապարտվում եք հանապարհային երթևեկության խախտման մեջ, դատարանը ծանուցում է DMV-ին: Դատապարտումը նշանակում է ձեր վարորդական գործում: Խախտումների համար ներկայացված մեղադրանքների մասին այլ նախազգուշացումները ստացված տվյալները նույնպես գրանցվում են ձեր վարորդական գործի մեջ:

Վճարը չկատարելու մասին տեղեկությունների համար այցելեք [dmv.ca.gov/payments-and-refunds](https://dmv.ca.gov/payments-and-refunds):

## Օրենքի կիրառումից խուսափելը

Իրավապահ մարմինների կողմից իրենց պարտականությունները կատարելիս փախուստի դիմելու կամ իրավապահ մարմիններից խուսափելու վտար կատարելը անօրինական է: Դա պատժվում է շրջանային բանտում մինչև 1 տարի ազատազրկմամբ:

Իրավապահ մարմինների հետապնդման ընթացքում մարմնական ծանր վնասվածք պատճառելու համար դատապարտված անձը ենթակա է՝

- Նախազգուշացում բանտում մինչև 7 տարի կամ շրջանային բանտում մինչև 1 տարի ազատազրկման:
- \$2000-ից մինչև \$10,000 տուգանքի:
- Ե՛վ տուգանքի, և՛ ազատազրկման:

Անձը, ով դատապարտվել է ռատիկանությունից խուսափելու հետապնդման ժամանակ չկանխատեսված ապանության համար, ենթակա է նախազգուշացում բանտում 4-ից 10 տարի ժամկետով ազատազրկման:

## Արագության մրցավազքեր և անգույշ վարում

Անգույշ տրանսպորտային միջոց վարելու կամ արագության մրցավազքում ներգրավվելու համար դատապարտված անձը, ով այլ անձի վնաս է պատճառում, ենթակա է ազատազրկման, տուգանքի կամ երկուսն էլ՝ տուգանքի և ազատազրկման:

## ՎԱՌՈՐԿԱՎԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԴՇՎՈՂ ՏՈՒԳԱՆԱՅԻՆ ՄԻՆՎՈՐՆԵՐԸ

Երթևեկության բախումներն ու դատապարտումները մնում են ձեր վարորդական գործի մեջ 36 ամիս կամ ավելի երկար ժամանակով՝ կախված խախտման տեսակից:

Ձեր վարորդական իրավունքը կարող է կասեցվել, երբ ձեր վարորդի գրառումը ցույց է տալիս հետևյալ կետերից որևէ մեկը:

- 4 միավոր 12 ամսում:
- 6 միավոր 24 ամսում:
- 8 միավոր 36 ամսում:

Առևտրային վարորդների համար միավորների բանակը կարող է տարբեր լինել: Տե՛ս Կալիֆոռնիայի առևտրային վարորդի ձեռնարկ (DL 650):

## Երթևեկության կանոնները խախտողների դպրոց հաճախելու դատավիճ

Եթե կատարել եք հանապարհային երթևեկության մեկ բալանոց խախտում, դատավորը կարող է ձեզ առաջարկել հաճախել երթևեկության կանոնները խախտողների դպրոց, որպեսզի տուգանումը չգեկուցվի ձեր ապահովագրական ընկերությանը, բայց մնա ձեր վարորդական գործում: Դուք կարող եք դա անել յուրաքանչյուր **18** ամիսը մեկ: Դասընթացն անցնելու մասին դպրոցը կտեղեկացնի դատարանին: Դուք նույնպես կստանաք դասընթացն անցնելու մասին փաստաթուղթ:

Եթե դուք առևտրային վարորդ եք և տուգանվել եք ոչ առևտրային մեքենայում, ապա դուք նույնպես իրավասու եք հաճախել երթևեկության կանոնները խախտողների դպրոց: Լրացուցիչ տեղեկություններ տես Կալիֆոռնիայի առևտրային վարորդի ձեռնարկ (DL 650):

## Կասեցում կամ ուժը կորցրած հանաչում

Եթե շատ անփույթ վարորդի միավորներ ստանաք, DMV-ն ձեզ համար փորձաքննության կասեցում, կկասեցնի ձեր վարորդական իրավունքը և (կամ) ուժը կորցրած կհանաչի: Երբ դա պատահում է, դուք լսման իրավունք ունեք: Ձեր վարորդական իրավունքի կասեցման կամ ուժը կորցրած հանաչելու մասին որոշման մեջ լսումներ ունենալու ձեր իրավունքի վերաբերյալ ավելի շատ տեղեկություններ կան:

DMV-ն ուժը կորցրած կհանաչի ձեր վարորդական իրավունքը, եթե դուք մեղադրվեք տրանսպորտային միջոցն անզգույշ վարելու կամ հանապարհատրանսպորտային պատահարի դեպքի վայրից փախուստի դիմելու մեջ, որի հետևանքով որևէ մեկին մարմնական վնասվածք է հասցվել: Դատարանները լիազորություն ունեն կասեցնել անձի վարորդական իրավունքը:

Ձեր կասեցման կամ ուժը կորցրած հանաչման ավարտին կարող եք դիմել վարորդական վկայականի փոխարինման համար: Դուք պետք է ցույց տաք ֆինանսական պատասխանատվության ապացույց (օրինակ՝ SR 22/SR 1P):

## Ի՞նչ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱՔ ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԳԱՆՏՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

- Ձեր վարորդական գործում նշված տեղեկությունների մեծ մասը հասանելի է հասարակության համար:
- Ֆիզիկական կամ հոգեկան խանգարում պարունակող գրառումները գաղտնի են:
- Որոշակի պետական կառույցներ կարող են տեսնել ձեր բնակության հասցեն: Ձեր փոստային հասցեի համար ավելի էիջ սահմանափակումներ կան:
- Վարորդական գրառման պատճենը կարող եք ձեռք բերել ցանկացած DMV տերմինալում կամ գրասենյակում: Այլ գրառման հարցումների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար այցելեք **[dmv.ca.gov/record-requests](http://dmv.ca.gov/record-requests)**:

# ԲԱԺԻՆ 11. Անվտանգ երթևեկություն

## ՈՒՇԱԴԻՐ ԵՂԵՔ ԶԵՐ ՇՐՋԱՊԱՏԻՆ

Ապահով տրանսպորտային միջոց վարելու համար հարկավոր է իմանալ, թե ինչ կա ձեր շուրջը: Դա օգնում է ձեզ ճիշտ որոշումներ կայացնել և արձագանքել հանապարհի վտանգներին:

Այս պատկերը ցույց է տալիս ձեր տրանսպորտային միջոցի շրջակայքը:

- Կանաչ՝ ձեր առջև:
- Կապույտ՝ ձեր կողքին:
- Դեղին՝ կույր գոտիներ:
- Կարմիր՝ ձեր հետևում:



Ահա մի քանի բան, որոնք կօգնեն ձեզ ավելի իմանալ ձեր տրանսպորտային միջոցի շրջակա տարածքից:

### Աչքերով զննել շրջակայքը

Շարունակ աչքերով զննե՛ք շրջակայքը: Զննե՛ք տեսարանն ամբողջովին: Եթե նայե՛ք միայն հանապարհի միջին հատվածին, ապա չե՛ք նկատի, թե ինչ է կատարվում ձեր կողքը և հետևում:

Դուք պետք է նաև ձեր տրանսպորտային միջոցի շուրջը անվտանգ հեռավորություն պահե՛ք: Դա ձեզ արձագանքելու ժամանակ է տալիս, եթե մյուս վարորդը սխալ է քայլ տվել: Զեր տրանսպորտային միջոցի բոլոր կողմերից բավականաչափ տարածություն քողե՛ք՝ անհրաժեշտության դեպքում արգելակելու կամ մանևրելու համար:

Գոտիները փոխելուց առաջ նայե՛ք հետահայց հայելու մեջ՝ մոտակա տրանսպորտային միջոցները ստուգելու համար: Նայե՛ք ձեր ուսի վրայով՝ ձեր կույր գոտին ստուգելու համար: Կույր գոտիներին կանդրադառնանք այս բաժնում ավելի ուշ:

### Իմացե՛ք, թե ինչ կա ձեր առջև

Աչքերով զննե՛ք հանապարհը ձեր տրանսպորտային միջոցից 10–15 վայրկյանին համապատասխանող հեռավորության վրա, որպեսզի կարողանա՛ք ավելի շուտ տեսնել վտանգները և խուսափել վերջին բաղկերի շարժումներից: Նայե՛ք ձեր առջևից ընթացող տրանսպորտային միջոցից այն կողմ: Անընդհատ մի նայե՛ք ձեր դիմացի տրանսպորտային միջոցին: Դա հայտնի է որպես «ֆիքսված հայացք» և կարող է վտանգավոր լինել:

Բացի դիմացը նայելուց, ուժադիր եղե՛ք նաև ձեր շուրջը գտնվող տրանսպորտային միջոցների և վտանգների նկատմամբ: Այդպես դուք նախապատրաստվում ե՛ք արագ արձագանքել առաջիկա հանապարհի փոփոխություններին: Պատրաստ եղե՛ք արագընթաց մայրուղու հանապարհային պայմանների և երթևեկության հոսքի կտրուկ փոփոխություններին: Հետևե՛ք այլ վարորդների ազդանշաններին: Ուժադիր եղե՛ք, որպեսզի նկատե՛ք ուղեմուտքերից կամ փոխհատումներից

երթևեկության հոսքին միացող տրանսպորտային միջոցները: Իմացե՛ք, թե երթևեկության որ գոտիներն են ազատ, որպեսզի անհրաժեշտության դեպքում օգտվե՛ք դրանցից:

**Հետապնդում (չափազանց մոտիկից հետևելը)**

Հետապնդման ժամանակ առջևում հանապարհը տեսնելը դառնում է դժվար, քանի որ ձեր դիմաց գտնվող տրանսպորտային միջոցը արգելափակում է ձեր տեսարանը: Դուք նույնպես ժամանակ չե՛ք ունենա արձագանքելու, եթե ձեր առջևից ընթացող տրանսպորտային միջոցը անսպասելիորեն արգելակի:

Եթե ինչ-որ տրանսպորտային միջոց ձեր առջևից շատ մոտ ընթանալով միաձուլվում է երթևեկության հոսքին, ուրքը հեռացրե՛ք ոտնակի կամ արագացուցչի վրայից: Այդպես տարածություն կբացվի ձեր և առջևի տրանսպորտային միջոցի միջև, և դուք ստիպված չե՛ք լինի կտրուկ արգելակել կամ փոխել երթևեկության գոտին:

Օգտագործե՛ք «երեք վայրկյանի կանոնը»՝ հետապնդումից խուսափելու համար: Երբ ձեր առջև գտնվող տրանսպորտային միջոցը անցնում է որոշակի կետ, օրինակ՝ նշան, հաշվե՛ք երեք վայրկյան: Եթե այդ կետն անցնե՛ք նախքան հաշվելն ավարտելը, ուրեմն բավարար հեռավորություն չե՛ք պահպանում առջևից ընթացող տրանսպորտային միջոցից:

Ավելի շատ տարածություն թողե՛ք, երբ՝

- Ձեր հետևում «պոչից կպած» տրանսպորտային միջոց կա: Նման դեպքերում մեծացրե՛ք տարածությունը և հանկարծակի մի արգելակե՛ք: Աստիճանաբար դանդաղեցրե՛ք տրանսպորտային միջոցի ընթացքը կամ անցե՛ք այլ գոտի՝ «պոչից կպած» տրանսպորտային միջոցի հետ բախումը կանխելու համար:
- Ձեր հետևից ընթացող տրանսպորտային միջոցի վարորդը ցանկանում է վազանց կատարել: Բավականաչափ տարածություն թողե՛ք ձեր տրանսպորտային միջոցի առջև, որպեսզի վարորդը կարողանա միաձուլվել երթևեկությանը ձեր առջևից:
- Երթևեկում ե՛ք սայրաժուն հանապարհով:
- Հետևում ե՛ք մոտոցիկլավարներին կամ հեծանվորդներին խոնավ կամ սառցապատ հանապարհներին, հանապարհի մետաղական մակերևույթի վրա (օրինակ՝ կամրջի հաղաճարով, ռելսուղիներով և այլն) կամ մանրախճապատ հանապարհներին: Այդպիսի մակերևույթներով երթևեկելիս մոտոցիկլավարները կամ հեծանվորդները կարող են հեշտությամբ վայր ընկնել:
- Կցորդ ե՛ք ֆորճակում կամ ծանր բեռ ե՛ք տեղափոխում: Հավելյալ ֆուռով տրանսպորտային միջոցը դժվար է կանգ առնում:
- Հետևում ե՛ք խոշոր տրանսպորտային միջոցներին, որոնք փակում են տեսադաշտը ձեր առջև: Տարածությունը մեծացնելով՝ դուք կկարողանա՛ք տեսնել տրանսպորտային միջոցի շրջակայքը:
- Տեսնում ե՛ք ավտոբուս, դպրոցական ավտոբուս կամ հատուկ ցուցանակով տրանսպորտային միջոց երկաթուղային գծանցի մոտ: Այդ տրանսպորտային միջոցները պետք է կանգ առնեն երկաթուղային գծանցներում:
- ՄԻաձուլվում ե՛ք արագընթաց մայրուղու երթևեկության հոսքին:

## Իմացեք, թե ինչ կա շրջակայքում

Տեղեկացեք, թե ինչ կա ձեր յուրաքանչյուր կողմում: Պահպանեք բավականաչափ տարածություն՝ անվտանգ մանևրելու և անհրաժեշտության դեպքում այլ վարորդներին արձագանքելու համար:

Ձեր տրանսպորտային միջոցի յուրաքանչյուր կողմից բավականաչափ տարածություն պահպանելու համար՝

- Մի հայտնվե՛ք մեկ այլ վարորդի կույր գոտում: Մյուս վարորդը կարող է չտեսնել ձեր տրանսպորտային միջոցը:
- Խուսափե՛ք բազմագոտի փողոցներում այլ տրանսպորտային միջոցների կողքին ուղղակիորեն ընթանալուց: Հնարավոր է, որ մեկ այլ վարորդ, առանց կողքերը նայելու, մուտք գործի ձեր գոտի կամ փոխի գոտին ու բախվի ձեզ:
- Հնարավորության և ապահովության դեպքում տարածք բացե՛ք ավտոմայրուղիներ մուտք գործող տրանսպորտային միջոցների համար: Նույնիսկ եթե դուք ունե՛ք երթևեկության առավելություն, դա կարող է օգնել կանխել բախումները:
- Արագընթաց մայրուղու ելքի մոտ այլ տրանսպորտային միջոցների հետ մի շարժվե՛ք կողք-կողքի: Վարորդներից ինչ-որ մեկը կարող է հանկարծ որոշել դուրս գալ մայրուղուց կամ ուղղությունը փոխել ետ դեպի արագընթաց մայրուղի:
- Տարածություն պահե՛ք ձեր տրանսպորտային միջոցի և կայանված տրանսպորտային միջոցների միջև: Ինչ-որ մեկը կարող է դուրս գալ նրանց միջից, բացել տրանսպորտային միջոցի դուռը կամ հանկարծակի դուրս գալ:
- Մոտոցիկլավարների կամ հեծանվորդների մոտով անցնելիս զգույշ եղե՛ք: Միշտ բավականաչափ տեղ թողե՛ք:

Խաչմերուկներում, հետխոտային անցումներում և երկաթուղային գծանցների վրա միշտ նայե՛ք ձեր տրանսպորտային միջոցի յուրաքանչյուր կողմով: Հնարավոր է, որ մոտենան այլ տրանսպորտային միջոցներ, հեծանվորդներ կամ հետխոտներ: Խաչմերուկներում՝

- Նայե՛ք կ' մեկ, կ' մյուս ուղղությամբ, եթե անգամ հատող փողոցի վրա լուսացույցի կարմիր լույս է վառվում կամ կանգ առնելու նշան կա:
  - Նախ նայե՛ք ձախից մոտեցող տրանսպորտային միջոցները ձեզ ավելի մոտ են գտնվում, քան աջից մոտեցողները:
  - Նայե՛ք աջ:
  - Մեկ անգամ էլ նայե՛ք ձախ: Հնարավոր է լինել հետխոտ, հեծանվորդ կամ տրանսպորտային միջոց, որոնց առաջին անգամ նայելիս չե՛ք տեսել:
- Մի վտահի՛ր լուսացույցի լույսերին: Որոշ վարորդներ չեն ենթարկվում նրանց: Նախնա խաչմերուկ մուտք գործելը նայե՛ք ձախ, աջ և առաջ՝ մոտեցող տրանսպորտային միջոցները տեսնելու համար:

## Կույր գոտիներ

Յուրաքանչյուր տրանսպորտային միջոց ունի կույր գոտիներ: Դրանք տրանսպորտային միջոցի շուրջը գտնվող այն հատվածներն են, որոնք վարորդը չի կարող տեսնել ուղիղ առաջ նայելիս կամ հայելիներ օգտագործելիս: Տրանսպորտային միջոցների մեծ մասի համար կույր գոտիները կողային մասում են, վարորդից մի փոքր հետ:



Սովորագրված տարածքները ձեր կույր գոտիներն են:

Կույր գոտիները ստուգելու համար կողքի պատուհաններից ուսի վրայով նայե՛ք աջ և ձախ: Գլուխդ շրջիր միայն նայելիս: Մի շրջվե՛ք անբողջ մարմնով կամ դեկով:

Ստուգե՛ք ձեր առջևի կույր գոտիները նախքան՝

- Երթևեկուղյան գոտիներում վերադասավորվելը:
- Խաչմերուկում շրջադարձ կատարելը:
- Երթևեկուղյան հետ միաձուլվելը:
- Հետընթաց շարժվելը:
- Կայանատեղին լքելը:
- Զուգահեռ կայանելը:
- Եզրաֆարից հեռանալը:
- Տրանսպորտային միջոցի դուռը բացելը:

## Իմացե՛ք, թե ինչ է կատարվում ձեր հետևում

Իմանալ, թե ինչ կա ձեր հետևում, կարող է օգնել խուսափել հետևի կողմից բախումներից: Ձեր հետահայաց հայելին և կողային հայելիները նախատեսված են օգնելու ձեզ տեսնել ձեր հետևում գտնվող տրանսպորտային միջոցները:

Ստուգե՛ք ձեր տրանսպորտային միջոցի հետևի կողմը նախքան՝

- Երթևեկուղյան գոտիներում վերադասավորվելը: Հանդգցվելը, որ չե՛ք փակում այն գոտով ընթացող տրանսպորտային միջոցների հանապարհը, որտեղ ուզում ե՛ք մուտք գործել: Ձեր կույր գոտիների ստուգելը:
- Ձեր տրանսպորտային միջոցի արագությունը կրճատե՛ք:
- Դեպի կողային հանապարհ կամ ուղեմուտք շրջադարձ կատարելը:
- Ավտոկայանատեղի մտնելու համար կանգնելը:
- Երկար կամ գառիթափ հանապարհով ցած իջնելը: Մեծ տրանսպորտային միջոցներ փնտրելը, քանի որ դրանք կարող են շատ կարճ ժամանակում մեծ արագություն հավաքել:

- Հետընթաց շարժվելը: Հետընթաց շարժվելը միշտ վտանգավոր է, որովհետև դժվար է տեսնել, թե ինչ կա տրանսպորտային միջոցի ետևում: Հետընթաց շարժվեք դանդաղորեն՝ որևէ ընդհարումից խուսափելու համար: Մի բավարարվեք միայն հայելիների մեջ հայացք գցելով կամ ձեր կողպակուց դուրս նայելով: Նախան դեպի կայանատեղի հետընթաց մտնելը կամ այնտեղից դուրս գալը՝

- Տրանսպորտային միջոց նստելուց առաջ ստուգեք, թե ինչ կա տրանսպորտային միջոցի առջևում և հետևում:
- Եթե ձեզ հետ կամ մոտակայքում երեխաներ կան, հստակ խմացեք, թե որտեղ են նրանք: Տրանսպորտային միջոցը տեղից շարժելուց առաջ համոզվեք, որ նրանք տրանսպորտային միջոցից հեռու են և ամբողջությամբ գտնվում են ձեր տեսողաշոտում:
- Ստուգեք ձեր կույր գոտիները: Հետընթաց շարժվելիս ապահովության համար ևս մեկ անգամ աջ ու ձախ ուսերի վրայով հետ նայեք:

Հանախակի ստուգեք ձեր հետևի երթևեկը՝ իմանալու համար, թե արդյոք կան ձեզ հետապնդող տրանսպորտային միջոցներ: Զգույշ եղեք, եթե ձեզ հետապնդում են: Գտե՛ք միջոց՝ խուսափելու հետապնդողից: Փոխե՛ք երթևեկության գոտին և հետևից ընթացող տրանսպորտային միջոցին թույլ տվե՛ք անցնել: Կարող եք նաև դանդաղեցնել արագությունը՝ ձեր և ձեր առջևի տրանսպորտային միջոցի միջև բավականաչափ տարածություն տալու համար: Եթե դա չօգնի, մի կողմ էաճվե՛ք՝ թույլ տալով հետապնդողին անցնել:

## ՏԻՐԱՊԵՏԵՆ ԶԱՆԱՊԱՐԶԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ

### Մթուրյուն

Գիշերը տրանսպորտային միջոց վարելիս համոզվեք, որ կարող եք կանգ առնել ձեր ցուլալպատերներով լուսավորված հեռավորության վրա: Հնարավորության դեպքում օգտագործե՛ք ձեր ցուլալպատերների հեռարձակ լույսերը: Դա ներառում է բաց գյուղական կամ մուր ֆաղաֆային փողոցները: Մի օգտագործե՛ք ցուլալպատերների հեռարձակ լույսեր այն վայրերում, որտեղ դա արգելվում է: Թուլացրե՛ք ձեր լույսերը, որպեսզի խուսափե՛ք մոտեցող տրանսպորտային միջոցի վարորդին ձեր ցուլալպատերների հեռարձակ լույսերով կուրացնելուց: Եթե մեկ այլ տրանսպորտային միջոցի լույսերը չափազանց պայծառ են՝

- Մի նայե՛ք ուղիղ ցուլալպատերներին:
- Նայե՛ք դեպի ձեր երթևեկության գոտու աջ եզրը:
- Դիմացից մոտեցող տրանսպորտային միջոցին հետևե՛ք աջի ծայրով:
- Մի արձագանքե՛ք մյուս վարորդին՝ ձեր ցուլալպատերների հեռարձակ լույսերը վառ պահելով: Սա միայն երկուսիդ համար էլ տեսնելն ավելի կդժվարացնի:

Երբ գիշերը անձրև է գալիս, օգտագործե՛ք ձեր ցուլալպատերների մոտարձակ լույսերը: Տրանսպորտային միջոցը վարելիս մի օգտագործե՛ք միայն կայանման լույսերը:

Գիւերային ժամերին տրանսպորտային միջոց վարելիս հիշե՛ք՝

- Հետիոտներին և հեծանվորդներին գիւերը շատ ավելի դժվար է նկատել: Եղե՛ք զգուն:
- Մոտոցիկլետները նույնպէս դժվար է տեսնել գիւերը: Շատերն ունեն միայն մէկ հետին լուսարձակ:
- Գիւերային ժամերին կարող են կատարվել հանապարհաճիւնական աշխատանքներ: Նվազեցրե՛ք արագութիւնը ավտոմայրուկիներին այն հատվածներում, որտեղ շինարարական աշխատանքներ են կատարվում:
- Պայծառ լուսավորված որևէ վայրից դուրս գալուց հետո տրանսպորտային միջոցը դանդաղ վարե՛ք այնքան ժամանակ, մինչև ձեր աչքերը հարմարվեն մթնոթյանը:
- Երբ դեպի ձեզ մոտեցող տրանսպորտային միջոցն ունի մէկ լույս, երթևեկե՛ք հնարավորինս աջ: Այն կարող է լինել հեծանվորդ, մոտոցիկլավար կամ տրանսպորտային միջոց, որի ցուլապատերը բացակայում է:

### Արևի շողեր

Արևի շողերը կառավարելու համար՝

- Հողմապակին ներսից և դրսից պահե՛ք մաքուր:
- Համոզվե՛ք, որ ձեր ապակեմաքրիչները լավ աշխատանքային վիճակում են:
- Համոզվե՛ք, որ ապակեմաքրիչի հեղուկը լիքն է:
- Կրե՛ք բևեռացված արևային ակնոց:
- Մյուս տրանսպորտային միջոցներից բավականաչափ տարածություն պահպանե՛ք:
- Համոզվե՛ք, որ ձեր տրանսպորտային միջոցի հովարը աշխատում է և չի պարունակում որևէ խոչընդոտող բան:
- Ուշադիր եղե՛ք հետիոտներին: Հնարավոր է, որ դժվարությամբ տեսնե՛ք նրանց:
- Փորձե՛ք խուսափել արևածագի և մայրամուտի ժամանակ տրանսպորտային միջոց վարելուց:

### Սայրաճումն հանապարհներ

Անձրևն ու ձյունը կարող են հանապարհները սայրաճումն դարձնել: Ձեր անվադողերը չեն ունենա անհրաժեշտ կառուցելիություն: Ծարժվե՛ք ավելի դանդաղ, քան չոր հանապարհի վրա:

Կարգավորե՛ք ձեր արագութիւնը տարբեր պայմանների համար՝

- Թաց հանապարհի վրա՝ շարժվե՛ք ժամում 5-10 մղոն ավելի դանդաղ:
- Ձյունածածկվույթի վրա՝ նվազեցրե՛ք արագութիւնը կիսով չափ:
- Սառցապատ հանապարհի վրա՝ դանդաղեցրե՛ք ընթացքը մինչև սողալու աստիճան:

Ճանապարհի որոշ մակերեսներ խոնավ վիճակում ավելի սայրաճումն են, քան մյուսները: Սովորաբար այդպիսի հատվածներն ունենում են հախազգուշացնող նշաններ: Ահա իրավիճակներ, թե երբ հանապարհը կարող է լինել ավելի սայրաճումն:

- Ծառերի կամ շենքերի ստվերները կարող են թափցնել սառցե բծերը ցուրտ և քաց օրերին: Ճանապարհի այդ հատվածներն առաջինն են սառչում և չորանում վերջինը:
- Կամուրջները և ուղեկամուրջները սովորաբար հանապարհի մնացած մասից ավելի շուտ են սառչում: Նրանք կարող են թափցնել սառցե բծերը:



- Երբ շոգ եղանակին սկսում է անձրև գալ, առաջին մի ֆանի բոլբեի ընթացքում հանապարհը կարող է շատ սայթափուն լինել:

Դանդաղեցրեք տրանսպորտային միջոցի ընթացքը անձրևի, մանրամուտ անձրևի կամ ձյան առաջին նշանների դեպքում: Դա հատկապես տեղին է հանապարհի չոր լինելու դեպքում, ֆանի որ յուրև ու փոշին դեռ առկա են:

Միացրեք հողմապակու մաքրիչները, ցուլապատերների մոտարձակ լույսը և ապակետափացուցիչը: Ուժգին անձրևախոտն փոքրիկի կամ ձյունամրրիկի ժամանակ հնարավոր է, որ հանապարհի տեսանելիությունը 100 ֆուտից ավելի չլինի: Եթե դուք չեք կարող տեսնել ավելի քան 100 ֆուտ հեռավորության վրա, ապա 30 մղոն/ժ-ից ավելի արագ ընթանալը անվտանգ չէ: Գուցե հարկ լինի ժամանակ առ ժամանակ կանգ առնել և ցեխը կամ ձյունը մաքրել հողմապակու, առջևի ու հետևի լապտերների վրայից: Եթե ձնառատ տարածքներում եք տրանսպորտային միջոց վարում, ձեր անվադողերի համար ձյան շղթաներ ունեցեք: Չյան շղթաները մեծացնում են ձեր անվադողերի կառչելիությունը: Օգտագործեք շղթաների ճիշտ ֆանակ: Համոզվեք, որ դրանք տեղավորվում են ձեր անիվներին:

Դանդաղեցրեք տրանսպորտային միջոցի ընթացքը, երբ հանապարհի վրա շատ ջուր կա: Եթե հորդառատ անձրևին 50 մղոն/ժամից ավելի արագ ընթանալ, ձեր անվադողերը կարող են կորցնել բոլոր կապը հանապարհի հետ, և ձեր տրանսպորտային միջոցը կլողա ջրի վրա: Դա կոչվում է «ջրասահ»: Այդ ժամանակ շարժման ուղղությամբ անհեռան փոփոխությունը կամ ֆամու քերև պոսրկումը կարող է առաջացնել տրանսպորտային միջոցի կողասահում: Եթե ձեր տրանսպորտային միջոցը սկսում է ջրասահել, ապա աստիճանաբար դանդաղեցրեք: Մի օգտագործեք արգելակները:

## Ջրհեղեղված հանապարհներ

